Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3352
3353
3354

3355
3356
3357

28(075)
1866
C-30

2010

42005

619
33

2012

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԵՏՐՈՍԻ ՉԱՆՉԵԱՆՑ

ՀԱՏՈՐ Ա.

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
— 1866 —

Printed in Turkey

28(075)
Ը-30

150

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԵՏՔՈՄԷ ՀԱՆԷՔԵԱՆՑ

ՀԱՏՈՐ Ա.

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Ց. ՔԻՒՐՔՃԵԱՆ

— 1866 —

2010

11048

Ի

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏԵԱՌՆ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՄԱՏԹԷՈՍԻ

Ի

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՅ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ԿՈՍԴԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ՏԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՅԿ-ՍՈՐԱ.
Ա. Մ. Ա. Մրջանյան
Ս. Մարգարեանի անվան
2060
40

Ի

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ԱԶՆՈՒԱՏՈՀՄ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԻՐՔ

ՄԱՐԻԱՄԱՅ

ՆՆՋԵՑԵԼՈՅ Ի ՏՓԽԻՍ

ԴՍՏԵՐ ԲԺՇԿԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ

ԵՐԿԱՅՆ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ ՂԶԼԱՐԵՑԻՈՅ ԴՕԼԳՈՎ, ԿՈՉԵՑԵԼՈՅ

ԱՄՈՒՍՆՈՅ

ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԳԵԱՆ ԶՄԻՒՌՆԻԱՑԻՈՅ

ԵՒ ՈՐԴԻՈՅ ԻՒՐՈՅ

ՎԱՀԱՆԱՅ ՎԱՀԱԳՆԻ ԵՒ ՄԽԻԹԱՐԱՅ

ՆՆՋԵՑԵԼՈՅ Ի ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

ՄԻՆՆ Ի ՏՓԽԻՍ, ՄԻՍՆ Ի ՓՕԹԻ ԵՒ ԵՐՐՈՐԴՆ Ի Կ. ՊՕԼԻՍ

ԿԱՆԳՆԷ ԶԱՅՍ ՄԱՀԱՐԶԱՆ ԱՆՄՈՌԱՅ

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱՑԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԻ ՎԵՐԱՅ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն Կրօնի 1
Հարկաւորութիւն Կրօնի 2
Հին Կրօնի 2
Հաստատութիւն Կրօնի Մաքով 2
» » Խղճմտանքով 3
» » Ընդհանուր խոստովանութեամբ ա-
մենայն աղգաց 5
» » Աստուածաշունչ Գրքով 5
Հին եւ Նոր Կտակարան 8
Աւանդութիւն 9
Սուրբ Գիրքն Աստուածային է 10
Հարկաւորութիւն ուսման Սուրբ Գրոց 14

ՀԱԻԱՏՈՅ ՎԵՐԱՅ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն Հաւատոյ 16
Հին Հաւատոյ 16
ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱԻԱՏՈՅ 20
Առաջին մասն Հանգանակի – Հաստատմամբ 'ի մի Աստուած, եւայլն . 23
Կատարելութիւնք Աստուծոյ 25
Արարչագործութիւն Աստուծոյ 30
Նախախնամութիւն Աստուծոյ 34
Երկրորդ մասն Հանգանակի – Հաստատմամբ եւ 'ի մի Տէր Յիսուս
Քրիստոս, եւայլն 40
Երրորդ մասն Հանգանակի – Հաստատմամբ եւ 'ի Սուրբ Հոգին, եւայլն 54
Չորրորդ մասն Հանգանակի – Հաստատմամբ եւ 'ի մի միայն ընդհան-
րական եւ առաքելական Սուրբ Եկեղեցի, եւայլն 60

ԹՈՐՀՈՒՐԴ ԵԿԵՂԵՑԻՈՑ 62
Թորհուրդ Մկրտութեան 63
» Դրոշմի 67
» Ապաշխարութեան 68
» Հաղորդութեան 71
» Ամուսնութեան 74
» Ձեռնադրութեան կամ Կարգի 76
» Օծման հիւանդաց 76

ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱՅ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն Աղօթից 81
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ 88
Յառաջաբան Տէրունական աղօթից – Հայր մեր որ յերկինս ես . . . 89
Առաջին խնդրուածք Սուրբ եղիցի անուն քո . . . 90
Երկրորդ խնդրուածք Եկեսցէ արքայութիւն քո . . . 91
Երրորդ խնդրուածք Եղիցին կամք քո, որպէս յերս . . 92
Չորրորդ խնդրուածք Զհաց մեր հանապազորդ . . . 93
Հինգերորդ խնդրուածք Եւ թող մեզ զպարտիս մեր . . 96
Վեցերորդ խնդրուածք Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն . 98
Վերջաբան Տէրունական աղօթից – Զի քո է արքայութիւն ես . . 102

Զհամառօտութիւն Քրիստոնէական ուսման Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, զաշխատասիրեալն 'ի բարեպաշտօն Պետրոսէ Շանշեանց և ներկայացեալ մեզ ձեռամբ Աղաբէգեան Պարոն Մարկոսի, Կրօնական ժողովով քննեալ և հրամանաւ Սրբազան Պատրիարքի Հօր Տեառն Պօղոսի Աբքեպիսկոպոսի վաւերացուցեալ վկայեմ ուղղափառական դոլոյ սմա։

1865 Նոյեմբերի 6
Յիսուսէ՝ Պոլիս։

ՆՈՒԱՍՏ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՏԵՆԱՊԵՏ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԿՆԻՔ

“Հաւատքով վասն որոյ և խօսեցայ”։

Կոր. Ա. Նղ. Դ. գլ. 13 հմբ։

Printed in Turkey

ԿՐՕՆԻ ՎԵՐԱՑ

ԱՌՀԱՍԱՐԱԿ

ԿՐՕՆՆ է ճանաչել սիրել Աստուծոյն և ծառայել Նրան. վասն զի մարդս չէ կարող հանգիստ լինել և երջանիկ՝ առանց ճանաչելու, սիրելու և պաշտելու իր Աստուծոյն [1]։

ԿՐՕՆՆ է գործնական գիտութիւն, որ Աստուածանից հեռացած մարդուն կրկին մօտեցնում է, կապում է և միացնում Նրա հետ [2]։

Կրօնը ուսուցանում է մեզ՝ թէ ո՞րքան մեղքը հեռացրել է մեզ Աստուածանից և թէ ի՞նչ հնարքով կամ ճանապարհով կարող ենք Աստուծոյն մօտենալ և հաշտուիլ Նրա հետ։ Բայց անպտուղ կը լինի լոկ ուսումն կամ իմացումն կրօնի և աւելի դատապարտութիւն կը բերէ մեր գլխին, եթէ գործով եւս ցոյց չը տանք մեր իմացածը և սովորածը։ Միայն կրօն իմանալով մենք չենք միանալ Աստուծոյ հետ, այլ երբոր կը սիրենք միանդամայն և կը հընազանդինք Նրան։ «Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝ եթէ առնիցէք զայս»։ Յովհ. Ա-ԷԺ. ԺԳ. գլ. 17 հմբ։ Նոյնպէս և Ղուկ. ԺԲ. գլ. 47 հմբ։

Ուրեմն՝ անշուշտ պէտք է գործ դնենք մենք թէ՝ կրօնի տուած և սովորցրած հնարքները և թէ՝ այն օգնութիւնները, որ միշտ տալիս է մեզ Աստուած, որ մեղքից և դատապարտութենէ ազատուինք։ Պէտք է հնազան-

(1) Կրօն բառը ծագում է Կրէ բառից՝ այն նշանակութեամբ, որ Աստուծոյն ճանաչելն մի հզօր ցանկութիւն է և անդուլ փափագ մարդուս մէջ, որ ստիպում է որոնել Աստուծոյն, ճանաչել, սիրել և ծառայել Նրան։

(2) Եւրոպացի ազգերի լեզուաւ կրօն բառը ասվում է ռելիգիա, ռէ՝ է մասնիկ ինչ, որ նշանակում է կրկնումն. լիգո՝ նշանակում է կապել. իսկ կապել՝ նշանակում է երկու հեռաւորը միացնել։

դինք մինք Աստուծոյն մեր հոգւոյ ամեն զօրութեամբ — սիրենք Նրան սրտով, հաւատանք Նրա ճշմարտութեանցը մտքով և հնազանդինք Նրա պատուիրանքներին կամքով և կատարենք յօժարութեամբ։

Կրօնն է ամենից ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏՈՒԹԻՒՆ մարդուս համար. վասն զի՝ կայ Աստուած ամենակարող, ամենակատար, Արարիչ, Տէր ամենի, մարդս եւս չ'է կարող երջանիկ լինիլ, եթէ Նրան չը մօտենայ։ Վասն զի՝ միայն Աստուծոյ մէջ կարող ենք գտնել հանգստութիւն հոգւոյ, խաղաղութիւն սրտի, լուսաւորութիւն, զօրութիւն, մխիթարութիւն, օգնութիւն և յոյս, որոնց մենք միշտ կարօտ ենք մեր բոլոր կեանքումը, աւելի մեր նեղութեանց մէջ և մանաւանդ մեր մահուան մերձենալու ժամանակ։ Ուստի՝ կրօնի ուսումն ամենից գլխաւոր և ամենից կարեւոր գիտութիւնն և պարտաւորութիւնն պէտք է լինի մարդուս համար։

Կրօնի ուսումն պէտք է սկսուի մանկութենէ, պատճառն որ՝ մարդ ամեն հասակի մէջ եւս պարտաւորութիւններ ունի կատարելու։ Մարդուս բոլոր կեանքը պէտք է ընծայ լինի Աստուծոյն։ «Եւ յիշեա՛ զԱրարիչն քո յաւուրս մանկութեան քո»։ Ժող. ԺԲ. գլ. 1 հմտ։ Օր ըստ օրէ պէտք է աճի մարդս և զօրանայ սրբութեան մէջ։ Օր ըստ օրէ պէտք է աւելի մօտենայ Աստուծոյն։ «Աճեցէ՛ք շնորհօք և գիտութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի»։ Պետ. Բ. Նղ. Գ. գլ. 18 հմտ։

Գլխաւոր ՀԻՄՆ ԿՐՕՆԻ է Աստուած, այսինքն գոյութիւնն Աստուծոյ, որ գոյ Աստուած, հոգի յաւիտենական և պատճառ ամենայնի, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Ուրեմն՝ ով որ մօտենում է Աստուծոյն, պէտք է հաւատայ, որ Նա է։ «Հաւատալ արժան է՝ այնմ, որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած»։

Աստուած իրա գոյութիւնը տպաւորել է մարդուս Մտքի մէջ, Խղճմտանքի մէջ և իրա Խօսքի մէջ։

Մտքիը հաստատում է, որ կայ մէկ Սկզբնապատճառ բոլոր արարածներին, վասն զի ոչ մինը չ'է կարող ինքն իրան կեանք տալ։ Հաստատում է միտքն, որ այս Սկզբնա-

պատճառն Հոգի է, վասն զի կան հոգեւոր արարածներ։ Որովհետեւ ոչ ոք չ'է կարող տալ ուրիշին այն կատարելութիւնը, ինչ որ ինքն չունի։ Ուրեմն կայ մէկ հոգեւոր Սկզբնապատճառ ամեն արարածների և ինքն է անսկիզբն և անվախճան, այսինքն յաւիտենական։

Միտքը՝ տեսնելով աշխարհի կատարեալ կարգը, որ նշան է ամենիմաստութեան, ամենակարողութեան և ամենաբարութեան՝ խոստովանում է, որ կայ մէկ պատճառ հոգեւոր և ամենակարող, որ ստեղծել է ամենքին։ Այս դատողութիւնն այնչափ պարզ է և յայտնի ամենայն մարդկան, որ բնաւ մեկնութեան կարօտ չ'է։ Սուրբ Գիրքն եւս հաստատում է մտքի այս խոստովանութիւնն Աստուծոյ գոյութեան վերայ։ «Գիտութիւնն Աստուծոյ յայտնի է 'ի նոսա, այսինքն 'ի հեթանոսս։ Քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա։ Զի աներեւոյթքն նորա 'ի սկզբանէ աշխարհի արարածովքս խմացեալ տեսանին, այսինքն է մշանջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն Նորա, զի ո՛չ դատանիցեն ամենեւին տալ պատասխանի»։ Պօղ. առ Հռովմ. Ա. գլ. 19—20 հմտ։ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածս ձեռաց Նորա պատմէ հաստատութիւն։ Օր աւուր բղխէ զբան և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն։ Ոչ են բանք և ո՛չ են խօսք որոց ոչ լսին ձայնք նոցա։ Ընդ ամենայն երկիր ելէ բարբառ նոցա և մինչեւ 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա»։ Սաղ. ԺԹ. գլ. 1—6 հմտ։

Այսպէս ահա մեր միտքն խմաց է անում թէ աշխարհի պատճառն է Հոգի յաւիտենական և ամենակարող։

ԽՂՃՄՏԱՆՔՆ է հոգւոյ մի այնպիսի զօրութիւն, որ մեզ հասկացնում է մեր պարտաւորութիւնը և նրանով զանազանում ենք բարին չարից։ Նա տալիս է մեզ հաճոյութիւն և նեղութիւն, լքցնում է մեր սիրտը երկիւղով և յուսով, զղջմամբ և քաջալերութեամբ։ Հոգւոյ այս ներքին զօրութիւնը, որ անուանում ենք Խղճմտանք, կարող է բացուիլ և լուսաւորուիլ հոգեւոր մենդով։ Բայց մնունդը երբէք չ'է կարող ստեղծել նրան։ Ինչպէս որ մարդուս միտքը ընդունակ է կատարելագործվելու և լուսաւորվելու, բայց ինքն պտուղ չ'է

ենդեան, նոյնպէս և խղճմտանքը։ Ապա թէ ո՛չ, զուր կը խօսէին մարդուս հետ ճշմարտութեան և պարտաւորութեան վերայ, եթէ խղճմտանքը ծնուած չը լինէր մարդուս հետ։ Սրան ապացոյց՝ մենք տեսնում ենք, որ ամենայն հասակի, ամեն ասպիճանի, թէ լուսաւորեալ՝ և թէ կոյր մարդիկ, ամեն աշխարհքում և ամեն վիճակում, միշտ լսում են խղճմտանքի ձայնը և ո՛չ մի կերպով չ'են կարող լռացնել և կորել այս ձայնը։

Խղճմտանքը ծնունդ չ'է նոյնպէս ո՛չ Եբիկուրի և ո՛չ Հոբսանուրեան մարդկան։ Պատճառն որ՝ եթէ խղճմտանքը լինէր նրանց ծնունդ, այն ժամանակ միշտ կը համաձայնէր մարդկանց ամեն դատողութեանց հետ. բայց մենք տեսնում ենք, որ նա ընդդիմանում է այն հաւանութեանը և դատողութեանը, որ համաձայն չէ իր օրէնքին։ Մենք տեսնում ենք, որ նա տալիս է մարդուս հանդիստ և քաղցր զգացողութիւն այն ժամանակ, երբոր իրա պարտաւորութիւնը կատարելու համար ընկնում է մարդկանց ատելութեան և հալածանքի մէջ։ Նա (խիղճը) ցոյց է տալի իրա ներգործութիւնը սրտի և մտքի այն ծածուկ շարժողութեան վերայ ևս, որ մարդիկ չ'են կարող ո՛չ տեսնել և ո՛չ դատել։ Նա ցոյց է տալի իրա ներգործութիւնը նաև այն ժամանակ, երբոր մենք մեր ամենամեծ իշխանութեամբ անվտանգ ենք մարդկանց երկիւղից և չ'ենք կարօտ նրանց հաւանութեանը։ Նա ցոյց է տալի իրա ներգործութիւնն այն ժամանակ ևս, երբոր մահը մօտենում է մեղաւորին և նա այն դրութեան մէջն է, որ ո՛չ աշխարհի վերայ յոյս ունի և ոչ մարդիկներից երկիւղ։ Սրանցով հաստատվում է ահա, որ խղճմտանքը արտաքոյ իրողութեանց ծնունդ չ'է, այլ Յոյն է Աստուծոյ, Յոյն Արարչի։

Այս խղճմտանքը Աստուած տուաւ մարդուս՝ ինչպէս մէկ դերէն վկայ իրա գոյութեան համար։ Սա յայտնում է մեզ, որ կախումն ունինք Աստուածանից։ Սա ուսուցանում է մեզ, որ Աստուած է տուիչ օրինաց և մէկ օր կը դատի մեզ այն օրէնքով իրա դատաստանում։ Սա յայտնում է որ կը դատի Աստուած հեթանոսներին ևս, որոնք՝ թէպէտ

անծանօթ են Աստուծոյ խօսքին, բայց ունին խղճմտանքի օրէնքն իրանց սրտումը գրած։ «Հեթանոսք՝ որք զօրէնս ո՛չ ունին, բնութեամբ զօրինացն գործեն. նոքա՝ որք զօրէնս ո՛չ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց և յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ պատասխանի իսկ տալ յաւուրն, յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան, ըստ աւետարանիս իմոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի»։ Հռովմ. Բ. գլ. 14—16 հմտ։

Ամենայն մարդիկ, որոնք իրանց միտքը և խղճմտանքը գործ են ածել բարութեամբ, խնայել են միշտ, որ կայ մէկ գլխաւոր պատճառ ամենայն արարածների, և ինչքան որ միտքը և խղճմտանքը լուսաւորվում են, այնքան ևս նրանց վկայութիւնն Աստուծոյ գոյութեան վերայ՝ աւելի և աւելի կենդանանում է և հաստատվում։ Ուստի՝ պարզ երևում է, որ Աստուած է տպաւորել այս վկայութիւնն ամեն մարդու մէջ, և ԱՄԵՆ ԱԶԳԵՐ, ամեն ժամանակ, ամեն տեղ ԽՈՍՏՈՎԱՆԵԼ ԵՆ և ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՆ, որ կայ իրանցից Գերագոյն մէկ էակ։ Այս աւանդութիւնն ունին նրանք առաջին մարդիցը, որ ինքն ստացաւ Աստուածանից և աւանդեց իրա բոլոր որդիքներին և սերունդներին։

Ասացինք վերեւ, որ Աստուած իրա գոյութիւնը յայտնել է մտքին և խղճմտանքին, բայց ամենապարզ և հաստատ վկայութիւնն իրա գոյութեան վերայ յայտնում է Աստուած իրա Խօսքով— Աստուածաշունչ Գրքով։

Աստուածաշունչ Գիրքը տալիս է մեզ ծանօթութիւն Աստուածային կատարելութեանց վերայ, նրա գործքերի և խորհրդների վերայ, և այնպիսի ծանօթութիւններ, որ միտքն ինքն իրան չ'էր կարող իմանալ և զարմացած է նրանց վերայ։ Սիրտն ևս գտնում է Աստուծոյ ցայտնութեան մէջ բաւականութիւն իր ամենայն կարօտութեանցը. պատճառն որ՝ Աստուածաշունչ Գիրքը գրուած է Աստուծոյ հոգւով։ Նա այնքան հրաշալի է, ինչքան արարչագործութիւնը։ Արարչագործութեամբ յայտնեց Աստուած

արարածին իրա յաւիտենականութիւնը, ամենակարողութիւնը և աստուածութիւնը, իսկ Սուրբ Գրքով աւելի պարզ յայտնեց իրա կատարելութիւնները և մանաւանդ ամենագերագոյնը — Աստուած Սէր է։ Եւ որովհետեւ գոյութիւն, խղճմտանք և համայն խոսոփվանութիւնն ազգաց հաստատում են Աստուծոյ գոյութիւնը, ուրեմն անզգայ և անմիտ պէտք է լինի այն մարդը, որ չէ խոստովանում Աստուծոյ գոյութիւնը, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն. «Ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ո՛չ գոյ Աստուած»։ Սաղ. ԺԳ. գլ. 1 հմ։

Մարդս այն ժամանակ աւելի հաստատ վկայութիւն կ'ունենայ Աստուծոյ գոյութեան վերայ, երբոր անդադար կ'որոնէ Աստուծոյն և կը մտածէ նրա օրէնքների վերայ, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն. «Ա.յլ յօրէնս Տեառն են կամք նորա՝ յօրէնս նորա խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի»։ Սաղ. Ա. գլ. 2 հմ։ Ա.յն ժամանակ մարդս կը մտենայ Աստուծոյն և Աստուած կը մտենայ մարդուն, երբոր սրտով կ'որոնէ Աստուծոյն իրա սրտի մէջ, ինչպէս ասում է Յակոբոս առաքեալն. «Մերձեցարուք առ Աստուած և մերձեսցի առ ձեզ»։ Յակ. Դ. գլ. 8 հմ։

Ուրեմն՝ ամենից ճշմարիտ և հաստատ հնարքը ճշմարիտ կրօնի ճանաչողութեան համար՝ է Աստուծոյ Յայտնութիւնը կամ Սուրբ Գիրքը։

Աստուածային Յայտնութիւն է այնպիսի ճանաչողութիւն, որ Աստուած տուել է մեզ իր ընտրած մարդիկներով։ Նրանով լուսաւորվում են և հաստատվում այն ճշմարտութիւնները, ինչ որ ուսուցանում է մեզ մեր միտքը և խղճմտանքը։ Նրանով (Յայտնութեամբ) հաստատվում են այնպիսի բաներ, որ մեր միտքն ինքն իրան չէր կարող գտնել, չէր կարող իմանալ՝ թէ ի՞նչ է հարկաւոր մարդուս Աստուծոյն մտենալու համար և ի՞նչպէս կարող է հաշտուիլ Նրա հետ։ Պօղոս առաքեալն ասում է. «Բազում մասամբ և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք, իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ որդւովն իւրով»։ Եբր. Ա. գլ. 1—2 հմ։ Եթէ մարդս

պահել էր առաջուան սէրն՝ կարող էր ճանաչել այս երկու մեծ ճշմարտութիւնը, այն է Գոյութիւն Աստուծոյ և Անմահութիւն հոգւոյ. թէպէտ և նրա ճանաչողութիւնն այնքան կատարեալ չ'էր լինիլ այս մեծ ճշմարտութեանց վերայ։ Վասն զի՝ միտքը հեռանալով Աստուածանից խաւարեցաւ և դարձաւ անընդունակ մարդուն դաստիարակ լինելու։ Ա.յս պատճառաւ էր որ հեթանոսները չար և խաւար դրութեան մէջ էին, որովհետեւ չ'ունէին Աստուածային Յայտնութիւն, այսինքն Սուրբ Գիրք, ինչպէս և ասում է Պօղոս առաքեալն. «Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ, ո՛չ ապա.քէն յիմարեցոյց Աստուած զիմաստունս աշխարհիս այսորիկ»։ Կորն. Ա. նղ. Ա. գլ. 20 հմ։ Միտքը չ'էր կարող իմանալ երբէք, թէ՝ ի՞նչպէս կարող է մարդս ազատուիլ մեղքից և դատապարտութենէ, որոնց մէջ ինքը գտնվում է, և կամ ի՞նչ հնարքով կարող է ազատուիլ։ Ուրեմն՝ մեր մտքի պարտաւորութիւնը մնում է միայն հաստատել թէ՝ Աստուածային ճշմարտութիւնները և յայտնութիւնները ճշմարիտ են, տուած են Աստուածանից, և պէտք է քննել և պահել ինչ որ ուսուցանում է Աստուածաշունչ Գիրքը և քննելուց յետոյ խոնարհեցնել իրա զօրութիւնը Աստուծոյ զօրութեանը, հաւատալ ամեն բանի, ինչ որ սովորցնում է Ս. Գիրքը, գործ դնել և կատարել Աստուծոյ ամեն հրամաններն և չ'աշխատել լուծանել այն խորհուրդները, որ Աստուած աւանդեց մեզ խորհուրդ պահելու. ինչպէս ասած է. «Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում և յայտնիքն մեզ և որդւոց մերոց»։ Բ. Օրէն. ԻԹ. գլ. 29 հմ։

Ուրեմն՝ մարդուս միտքը պէտք է կենդանի հաւատով ընդունի այն ամենայն խորհուրդները, որ Ս. Գիրքը յայտնում է մեզ։ Վասն զի՝ այս Աստուածային խորհուրդները դերազանցվում են մարդուս մտքից և Աստուած ինքը պատրաստեց տալ մարդուս այնպիսի բաներ, որ ո՛չ աչքով էր տեսել, ո՛չ մտքովն անցկացրել և ո՛չ ականջովն լսել, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Զոր ակն ոչ եհաս, և ունկն մարդոյ ո՛չ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»։ Կորն. Ա. նղ.

Բ. գլ. 9 հմբ։ Մարդս չը պէտք է զարմանայ, որ Ս. Գրքի մէջ կան խորհուրդներ։ Արարչի և արարածների մէջ միշտ պէտք է լինի խորհուրդ։ Խորհրդով է, որ մարդս զանազանվում է Աստուածանից, այսինքն Աստուծոյն յայտնի է այն բանը և ունի այն զօրութիւնը, որ մարդուս համար խորհուրդ է։ Ո՛չ թէ միայն Աստուածային ուսումն, այլ և բոլոր մարդկանց ուսմունքներն լի՛ք են գաղտնիքներով։

Աստուածային յայտնութիւնները բովանդակվում են Աստուածաշունչ Գրքումը, որ բաժանվում է երկու — ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ։ Առաջինը յայտնուեցաւ Մովսիսով և միւս մարգարէներով, որոնք դաստիարակ են Նոր Կտակարանի. իսկ երէքորդը քարոզուեցաւ առաքեալներով։ Երկուսը միասին բովանդակում են իրանց մէջ Պատմական, Բարոյական և Մաքսիմական գրքեր, որոնց անունն ասվում է Կանոնաբան, պատճառն որ՝ նրա մէջ յայտնում է Աստուած իրա կամքը և նրանով բաժանում է ամենին իրա բարութիւնը և ողորմութիւնը։

Հին Կտակարանը խօսում է Աստուծոյ գործքերի վերայ, կրօնի զանազան դրութեան վերայ՝ աշխարհի սկզբից մինչև փրկչի գալուստը, որ խոստացած էր 'ի սկզբանէ և յայտնած Երրայեցւոց ազգին։ Այս փրկութեան ակնկալութիւնը և մասնակցութեան յոյսը, այս մեծ երանաւէտ բանը՝ էր հաւատց նիւթ, մարգարէների միսիթարութիւն և ճշմարիտ աստուածապաշտների յոյս, ինչպէս ասում է Ղուկաս աւետարանիչը. «Եւ էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն և էր այրն այն արդար և երկիւղած և ակն ունէր միսիթարութեանն Իսրայէլի և Հոգին սուրբ էր 'ի նմա»։ Ղուկ. Բ. գլ. 25 հմբ։

Նոր Կտակարանը խօսում է և հաստատում այն ամենայն, ինչ որ Աստուած Հին Կտակարանումը խօսել է իրա գործքերի և իրա կամքի վերայ, որ կատարուեցաւ խոստացեալ Բանով, այսինքն փրկութիւն մեր 'ի ձեռն Քրիստոսի։ Նոր Կտակարանն անուանվում է Աւետարան, այսինքն աւետիք բարութեան։

Հին և Նոր Կտակարանը չինում են մի հաւատ, ինչպէս ասում է Օգոստինոս. «Նորը Հնի մէջ ծածկուած է, Հինը

Նորի մէջ բացուած»։ Հին Կտակարանը դաստիարակ էր Նորին, ինչպէս ասում է Պօղոս. «Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ 'ի Յիսուս Քրիստոս, զի 'ի հաւատոցն արդարացուք»։ Գաղ. Գ. գլ. 24 հմբ։ Նոր Կտակարանը լրիւ տուաւ մեզ այն ամենայն, ինչ որ Հինը թողեց մեզ ցանկալու։ Հին Կտակարանը միայն կանչում էր մի ազգի, իսկ Նորը ամեն ազգերի դէպի փրկութիւն։ Նոր Կտակարանը չ'է դատում մեզ միայն մեր գործքով և չ'է ասում միայն — Ա՛ր՝ զայս է՝ կեցցես, այլ Քրիստոսի խաչով խոստանում է ողորմութիւն և շնորհք Քրիստոսին հաւատացողներին և մեղքից զղջացողներին։ Նոր Կտակարանը չ'է մատնում մեզ մեր տկարութեանը, այլ խոստանում է Հոգւոյն Սրբոյ օգնութիւնը մեր սիրտը նորոգելու և Աստուածային օրէնքների սէրը նրա վերայ թագաւորեցնելու, ինչպէս ասում է Պօղոս առաքեալի բերանով։ «Այս է ուխտն, զոր եդից տանն Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տայ զօրէնս իմ 'ի միտս նոցա, և 'ի սիրտս նոցա գրեցից զնոսա և եղէց նոցա Աստուած և նոքա եղիցին իմ ժողովուրդ։ Եւ ո՛չ ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր և ասիցեն ծանի՛ր զՏէր. զի ամենեքեան ծանիցեն զիս 'ի փոքրկանց մինչև 'ի մեծամեծս»։ Եբր. Ը. գլ. 10—11 հմբ։ Նոր Կտակարանը չ'է բաւականանում խոստանալով երկրաւոր պատիժներ, այլ ունի յաւիտենական կեանքի խօսք. «Պատասխանի եւ նմա Սիմէոն Պետրոս, Տէ՛ր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս»։ Յովհ. ԺԵ. գլ. 69 հմբ։

Ուրեմն մենք կարող ենք ասել Յովհաննէս Աւետարանչի հետ միասին, որ օրէնքը տուաւ Մովսիսով այլ շնորհքը և ճշմարտութիւնը (որոնք են նիւթ օրինաց) տուաւ մեզ Յիսուս Քրիստոսով։ «Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն»։

Մինչև Ս. Գրքի գրուելն աստուածպաշտութիւնը պահվում էր ԱՒԱՆԴՈՒԹԵԱՄԲ։ Աստուած խօսել էր առաջին մարդու հետ և Նրա խօսքը աւանդութիւն դարձաւ յետագայ

սերունդների համար։ Առաջին մարդն աւանդեց Աստուծոյ խօսքը նրանց, որոնք չէին լսել և այս պատճառաւ Ս. Գիրքը ստացաւ պատմական յատկութիւն, որ մարդիկ մէկմէկու աւանդելով կարողանային պահպանել աշխարհիս մէջ աստուածպաշտութիւնը։ Աստուած հաստատեց նոյնպէս Զոհ, որի մէջ պարունակվում էին աստուածպաշտութեան գլխաւոր ճշմարտութիւններն, այսինքն Աստուծոյ գոյութիւնը, մարդուս մեղքի տակ ընկնիլը և փրկութեան յոյսն։ Զոհ անելով խոստովանում էին, որ կայ Գերագոյն Էակ, որին նուիրում էին զոհն. կայ յանցանք, որի քաւութեան համար նուիրում էին. կայ յոյս, որ զոհով պէտք էր փրկութիւն լինի, և այլն։ Այսպէս պահպանվում էր Աստուծոյ խոստացած փրկութեան աւանդութիւնը։ Այս աւանդութիւնը տուաւ Աստուած 'ի սկզբան Եբրայեցւոց ազգին, որոնք ընտրուած էին Աստուածանից և ապա նոյնպէս աւանդեց և Քրիստոնեաներին փրկութեան խորհրդաւոր աւանդութիւններ, զորօրինակ Մկրտութիւնն, Հաղորդութիւնն և այլն։

Աստուածպաշտութիւնը պահպանվում էր աւանդութեամբ մինչև Մովսէսն և այս պատճառաւ մինչև 'ի Մովսէս ամեն մարդկանց կեանքն երկար էր, որ շատ ապրելով աւանդէին մէկմէկու Աստուծոյ խօսքը անփոփոխ։ Իսկ երբոր Մովսէս գրեց այն խօսքերը, այսինքն աւանդութիւնները հաստատելով և լուսաւորելով Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբ, մարդուս կեանքը կարճացաւ և այնուհետև գրով տարածուեցաւ Աստուծոյ խօսքը հեռաւոր մարդկանց։

Աշխարհիս բոլոր գրքերը կարելի է բաժանել երկու Ապոստոլական և մարդկային։ Առաջինը Աստուծոյ կամքի և մտքի յայտնութիւնն է, որի վերայ տպաւորուած է Աստուծոյ զօրութիւնը. իսկ երկրորդն է մարդու մտքի յայտնութիւն, որի վերայ տպաւորուած է մարդու տկարութիւնը։

Թէպէտ զանազան ազգեր ունին 'ի հնուց Սուրբ անուանեալ գրքեր, ինչպէս՝ Զինացիք —Կինգ անունով, Հընդկացիք —Վեդա, Պարսիկք —Զենդաւեստա, Արաբացիք —Ղուրան. բայց միայն ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՆ Է ՄԻԱԿ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔ, որ պարունակում է իրա մէջ ճշմարիտ աստուածպաշտութիւն.

իսկ վերեւ յիշած սուրբ անունով գրքերը բովանդակում են իրանց մէջ մի քանի ճշմարտութիւններ, բայց այն ևս առած է համարվում Աստուածաշնչից, և սրանից պարզ երևում է, որ Աստուծոյ Գիրքը մարդկային հանճարի գործ չէ։

Սուրբ Գիրքը պէտք է ունենայ երեք գլխաւոր նշան —Շնչական, Պատմական և Մարգարէական։ Նախ՝ պէտք է լինի Շնչական, այսինքն կանգնեցնող և պայծառացնող երկրի, ինչպէս տեսնում ենք, որ Աւետարանը՝ ուր և տարածուեցաւ, այն երկիրը լուսաւորուեցաւ։ Իսկ ընդհակառակն անքրիստոնէութիւնը անլոյս է անում ազգին և անպտուղ երկրին, ինչպէս տեսնում ենք հեթանոսական երկիրները։ Երկրորդ՝ պէտք է լինի Պատմական, այսինքն պատմութիւնը կամ աւանդութիւնն է մայր կրօնի, և այս պատմական անընդհատ կապը պարզ երևում է Աստուածաշունչ Գրքի մէջ։ «Եղև լոյս» խօսքից մինչև Յովհաննու Յայտնութեան այս խօսքերը «Եւ տեսի երկին նոր և երկիր նոր» մէկ մեծ շղթայ է, որով կապվում է աշխարհիս սկիզբը միւս նոր աշխարհի սկզբան հետ։ Երրորդ՝ պէտք է լինի Մարգարէական. —Աստուածաշունչ Գիրքը Մարգարէութիւն է, որ այսօր ևս մեր աչքի առաջ կատարվում է։ Աստուած ընտրեց հնուց մէկ ազգ, որ պահպանէր աշխարհիս պատմութիւնը, այսինքն Աստուծոյ ճանաչողութիւնը, նրա արարչագործութիւնը, մարդուս մեղքի մեջ ընկնիլը և յոյսը, որով պէտք է հասնէր փրկութիւն մարդկային ազգի։ Ահա սրանք են աշխարհիս պատմութեան նիւթը։

Աստուածաշունչ Գրքի Մարգարէութեան կենդանի նշանն է Եբրայեցւոց ազգը, որ մինչև յայսօր ևս սպասում են փրկութեան։ Ի՞նչի են սպասում, երբոր Աստուածաշնչի առաջին խօսքից մինչև վերջինն կատարուեցաւ Յիսուսի Քրիստոսի վերայ։ Մինչև յայսօր Եբրայեցիք ունին տակաւին իրանց ձեռքին բռնած այն Գիրքը, որ լիքն է մարդկային ազգի փրկութեան յուսով։ Այս Եբրայեցի ազգը քրիստոնէութեան համար նշան է անցած ժամանակի մարգարէութեան, և քրիստոնեայք նշան են ներկայ և ապառնի

ժամանակների մարդարէութեան, որի կատարումն տես-
նում ենք մեր աչքով Քրիստոսի այն խօսքից, որ ասում է.
«Գնացէ՛ք, ես ընդ-ձեզ եմ». և թէ՝ «Քաջալերեցարո՛ւք,
զի ես յաղթեցի աշխարհի». Յովհ. ԺԶ. գլ. 33 հմր.
Այս երկու կենդանի նշանն, այսինքն Եբրայեցի և Բրի-
եայ, որոնցից մինն անցած ժամանակի մարդարէութեան
նշան է և միւսն ապառնի, կը մնան մինչև աշխարհիս վերջն,
և երբոր անցեալ և ապառնի կը միանան, այս երկուսն 'ի
միասին կը վկայեն մարդկային վերջին ցեղին ևս մարդա-
բէութեան կատարումն, և ինչպէս հին ազգը, նոյնպէս և
նոր ազգը միասին կը տեսնեն աշխարհիս խաղաղութեան
քակտումն, այսինքն մարդկութեան վերջը։

Սուրբ Գիրքը գրուած է Աստուածային հոգւով բո-
վանդակելով իրա մէջ Աստուածային ճշմարտութիւններ և
նրա հասկացողներն Աստուածային է և ո՛չ մարդկային։ Ցեռնում
ենք արդարեւ՝ որ Քրիստոնէութիւնը տարածուեցաւ Աստ-
ուածային զօրութեամբ և ո՛չ մարդկային հնարքներով։
Այս Աստուածային զօրութիւնն երևում է նրանով, որ Քրիս-
տոնէութիւնը ունի Ա. Գերեզմանոները, Բ. Հրաշք, Գ. Մարգ-
բէներ, և Դ. Մէջոց փրկիչներ։

Նախ՝ Գերեզմանոները. — Քրիստոնէական ուսման գե-
րազանցութիւնն երևում է այն գործերի մէջ, որ մեզ
պատմում է Ս. Գիրքը, այն է Աստուծոյ արարչագործու-
թիւնը, նրա հրաշալի նախախնամութիւնը, որով կառավա-
րում է նա աշխարհը, իր ընտրած ազգին, Քրիստոնեաներ-
ին, իր եկեղեցին։ Երևում է նոյնպէս այն ճշմարտութեանց
մէջ, որոնք ուսուցանում են մեզ Աստուծոյ կատարելու-
թիւնները, մարդուս պատուիրաղանցութիւնն, փրկութեան
խորհուրդը, մեռելոց յարութիւնը և այլն։ Երևում է դար-
ձեալ այս մեծ պատուիրանքի մէջ. «Սիրել զընկերն իբրև
զանձն». Յովհ. ԺԶ. գլ. 33 հմր. Երևում է վերջապէս Աստու-
ծոյ ամենակարող օգնութեան մէջ, որ տալիս է մեզ, որպէս
զի կարողանանք աղատուիլ փորձութենէ, տանիլ չարչա-
րանքներ և ցոյց տալ այնպիսի առաքինութիւն, որ մարդու
կարողութենէն մեծ է։ Ս. Գիրքն ուսուցանում է մեզ այն-

պիսի կրօն, որ ո՛չ թէ միայն դերազանց է ամեն վարդապե-
տութիւններից, ինչ որ ուսուցել են աշխարհիս իմաստուն-
ներն, այլ բոլորովին նոր և շատ անդամ հակառակ մարդ-
կային ուսման։ Որեմն պէտք է ասել, որ այսպիսի ուսումն
չ'է կարող լինել մարդու գործ, եւս առաւել՝ տասներկու
անուսումն մարդկանց։

Երկրորդ՝ Հրաշք. — Որպէս զի հրաշքը կարողանայ դառ-
նալ հաստատութիւն կրօնի՝ պէտք է ունենայ նախ՝ այնպի-
սի գործքեր, որ յայտնապէս մեծ լինին քան մարդու զօ-
րութիւնը. զորօրինակ յարութիւն մեռելոց և այլն։ Երկ-
րորդ՝ պէտք է լինի հաստատող այնպիսի ուսման, որ
արժան է Աստուծոյն։ Եւ երրորդ՝ պէտք է լինի ժողովքի
կամ բազմութեան մէջ, որ կարողանայ ունենալ վկայներ։
Այս ամեն նշանները մենք տեսնում ենք Քրիստոսի հրաշք-
ների մէջ։

Երրորդ՝ Մարգարէութիւնը կրօնի հաս-
տատութիւն դառնալու համար պէտք է լինի նախ՝ մարգա-
բէութիւն այնպիսի ապառնի բաների վերայ, որ չ'է կարելի
իմանալ ո՛չ ժամանակի հեռաւորութեամբ և ո՛չ այլ հան-
դամանքով, ինչպէս է գալուստն Քրիստոսի, հաստատու-
թիւն Քրիստոնէութեան այս խօսքով. «Ես յաղթեցի աշ-
խարհի». և այլն։ Երկրորդ՝ պէտք է լինի ասած պարզ խօս-
քերով, որ չ'ունենայ երկու միտք և կամ մթութիւն։
Երրորդ՝ պէտք է լինի Սուրբ կրօնի հաստատութեան հա-
մար և Չորրորդ՝ պէտք է ունենայ իրա կատարումն։ Այս
ամեն նշաններն, թէ՝ մարգարէների գուշակածն Քրիստոսի
վերայ և թէ՝ Քրիստոսի ասածն Քրիստոնէութեան վերայ
բոլորն ևս անթերի կատարուեցան։

Չորրորդ՝ Մէջոց կամ հնարք փրկչութեան. — Քրիստոնէութեան
գործ դրած միջոցները բոլորն աստուածային են։ Քրիս-
տոնէութիւնը պէտք է յաղթէր հեթանոսների և Երրայե-
ցիների մտքի կուրութեանը, նրանց խստասրտութեանը
և անթիւ հալածանքներին։ Եւ ահա՛ առաքեալներն, որ
պէտք է քարոզէին Քրիստոնէութիւնը, չ'ունէին ո՛չ մարմ-
նաւոր զօրութիւն, ո՛չ երևելի աղդութիւն կամ տոհմակա-

նութիւն, ո՛չ վարկ, ո՛չ հարստութիւն, ո՛չ ճարտարութիւն, և ո՛չ հոգի կառավարութեան աշխարհի, բայց նրանցով հաստատուեցաւ Քրիստոնէութիւնը։ Այս գործը անկարելի էր, եթէ Աստուած նրանց հետ չը լինէր։

Զը նայելով՝ որ հին և նոր կտակարանը քարոզուած են զանազան ժամանակներում և զանազան մարդիկներով, այնու ամենայնիւ նրանց վարդապետութեան հոգին մի է և ուրեմն Աստուածային։ Ինչ մարդիկ հաւատով ընդունելեն Ս. Գիրքը, միշտ զգացել են նրա Աստուածային զօրութիւնը և գտել են նրա մէջ կեանք, հոգւոյ կերակուր, խղճի խաղաղութիւն, նեղութեանց համբերելու զօրութիւն, կենդանի յոյս յաւիտենական կեանքի և ճաշակ, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Զի ո՛չ եթէ ամօթ ինչ համարիմ զԱւետարանն, քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց»։ Հռով. Ա. գլ. 16 համար։ Մարդս մարդկային գիրք կարդալով երբէք չ'է կարող ստանալ այսպիսի հոգեկան վայելչութիւն և զմայլումն։

Որովհետև Սուրբ Գիրքն Աստուծոյ խօսք է, որով Արարիչն յայտնել է իրա կամքն, ուրեմն՝ ի՞նչ մի այնպիսի լաւ բան կարող է լինիլ արարածի համար, ինչպէս ճանաչելն Աստուծոյ կամքը։ Ուստի ՀԱՐԿԱՒՈՐ է ամեն մարդու անպատճառ ուսանիլ Ս. Գիրքը, որի ուսումն ո՛չ թէ միայն մի իրաւունք է մարդու համար, այլ անհրաժեշտ պարտաւորութիւն, ինչպէս ասում է Քրիստոս. «Քննեցէ՛ք զգիրս, զի նո.քօ.ք համարիք դու.ք ունիլ զկեանս յաւիտենականս»։ Յովհ. Ե. գլ. 39 համբ։ «Այլ յօրէնս Տեառն են կամք նորա, յօրէնս նորա խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի»։ Սաղ. Ա. գլ. 2 համբ։ Առաքեալները գրում էին իրանց թղթերն կամ ժողովքի և կամ անհատ մարդկանց վերայ և պատուիրում էին որ իրանք կարդան և ուրիշներին էլ տան կարդալու։ Պարտաւոր է՛ ուրեմն Քրիստոնեայն թէ իրա գործքով և թէ իրա խօսքով տարածել Աւետարանի ուսումն։

Ով որ կամենում է ուսանիլ Աստուծոյ կամքը՝ նրա համար Աստուածաշունչ Գիրքը շատ պարզէ։ Նա այնքան պարզէ, որ ամենքը կարող են ուսանիլ և գործ դնել, ուղղոյց ունենալով իրանց՝ Եկեղեցւոյ նախնի Ս. Հարցը իրանց ջերմեռանդն խորհրդածութիւններով։ Քաւ լիցի ասել, որ Աստուած տուել է այնպիսի յայտնութիւն, որից կախուած է մարդկային փրկութիւնը, և պարզ չ'է ամենի համար։ «Ամենայն Գիրք Աստուածաշունչք են օգտակարք 'ի վարդապետութիւն, 'ի յանդիմանութիւն, յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան»։ Տիմ. Բ. գլ. Գ. գլ. 16 համբ։ «Ճրագ են բանք քո ոտից իմոց և լոյս տան շաւղաց իմոց»։ Սաղ. ՃԺԹ. գլ. 105 համբ։ «Այսպա եթէ իցէ ծածկեալ աւետարանն մեր՝ 'ի մէջ կորուսելոցն է ծածկեալ»։ Կորն. Բ. գլ. Դ. գլ. 3 համբ։

Որովհետև Աստուածաշունչ Գիրքն Աստուծոյ խօսք է, ուրեմն պէտք է կարդանք նրան նախ՝ Հեղինէական, գրանց հաբկաւորունեան ոսման, նորոգունեան և օգնունեան Աստուծոյ։ Երկրորդ՝ պէտք է կարդանք ուշ ուշով, պատուով, հնազանդունեամբ յամենայն հոգւոյ, պատճառն որ լսում են.ք Աստուծոյ խօսքը, ինչպէս ասում է. «Խօսեաց, տէր, զի լուիցէ ծառայ քո»։ Ա. Թագ. Գ. գլ. 9 համբ։ Երրորդ՝ պէտք է կարդանք Սէրով, ընդհակառնունեամբ, սրբունեամբ սրտի և ջերմեռանդունեամբ։ Եթէ ցանկանում են.ք լուսաւորուիլ՝ պէտք է սրբեն.ք մեր միտքը և սիրտը ճանաչելով Աստուածային ճշմարտութիւններն և ուսանելով այն ամենայն, ինչ որ խոստացել է Աստուած և ինչ որ արել է մեզ համար, և այս ամենը միացնելով կատարեալ հաւատքի հետ, պէտք է կատարեն.ք ամենայն պատուէր, ինչ որ պահանջում է մեզանից մեր հաւատն։ Չորրորդ՝ պէտք է կարդանք աղօթով, որ Աստուած բաց անէ մեր սիրտն իրա հոգւոյ և ճշմարտութեանց համար, ինչպէս արել է իր ընտրած մարդկանց։ Այսպիսի աղօթքով խնդրում էր Դաւիթ մարգարէն, որ կարողանայ Աստուծոյ արդարութիւնը ճանաչել, ասելով. «Խոստովան եղէց քեզ, տէր, յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քոյ»։ Սաղ. ՃԺԹ. գլ. 7 համբ։ Եւ վերջապէս՝ պէտք է դատեն.ք մեր անձը և իմանան.ք թէ գործեն.ք դրել արդեօք Աստուծոյ խօսքը, որ պէտք է մեզ դատի, թէ ո՛չ։

ՀԱԻԱՏՈՑ ՎԵՐԱՑ

ԱՌՀԱՍԱՐԱԿ

Աստուածաշունչ Գրքի մէջ մենք տեսնում ենք Աստուածային գործքեր, ճշմարտութիւններ և մարդկային պարտաւորութիւններ։ Այս ճշմարտութիւններն, որոնք պէտք է դառնան հիմն Հաւատոյ և որով մարդս կարող է մօտենալ Աստուծոյն և փրկուիլ, հաւաքուած են միասին Հաւատոյ Հանդանակի մէջ։

ՀԱԻԱՏԱԼ ԱՌՀԱՍԱՐԱԿ՝ նշանակում է ընդունել մի քանի գործքեր կամ ճշմարտութիւններ արժանաւոր անձինքների վկայութեամբ, երբոր մենք ինքներս անձամբ չենք կարող իմանալ և հաստատել։ Իսկ կրօնի մէջ՝ հաւատալ նշանակում է ընդունել մեր սրտով այն Աստուածային ճշմարտութիւնները, որ Աստուած ինքն յայտնել է իրա խօսքով — Աստուածաշունչ Գրքով։

Քրիստոնէական Հաւատոյ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՄՆ է Յիսուս Քրիստոս, որի վերայ խօսում է բոլոր Աստուածաշունչ Գիրքը և կանչում է բոլոր մարդկութեանը դէպի Նա, որի մէջ միայն գտնվում է մարդու փրկութիւնը։

Որովհետեւ Աստուած խօսել է մարդուս հետ և այն խօսքով բաց է արել Նրա համար ճանապարհ փրկութեան, ուստի մարդս պէտք է բոլորով սրտիւ և շնորհակալութեամբ հաւատայ Աստուծոյ յայտնած ողորմութեանցը, ապա թէ ո՛չ՝ անհաւատութեամբ կը զրկուի նա Աստուծոյ ողորմութենէն, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինիլ Աստուծոյ»։ Եբր. ԺԱ. գլ. 6 հմբ։ «Որ հաւատայ յՈրդի՝ ընդունի զկեանս յաւիտենականս. և որ ո՛չ հնազանդի Որդւոյ, ո՛չ տեսցէ զկեանս»։ Յոհ. Գ. գլ. 36 հմբ։ «Բայց մեք՝ ո՛չ եթէ երկմտութեամբ եմք՝ ի կորուստ. այլ հաւատովք՝ ի փրկութիւն հոգւոց»։ Եբր. Ժ. գլ. 39 հմբ։

Ճշմարիտ հաւատը պէտք է ունենայ այս նշանները.— Ա. Պէտք է լինի Լուսաւոր, Բ. Հեղ, Գ. Հաստատ, Դ. Կենդանի, և Ե. Գործնական։

Մարդս պէտք է իմանայ հաւատոյ ճշմարտութիւններն, և այն հաստատութիւններն, որոնց վերայ հիմնուած են. վասն զի՝ առանց ճանաչողութեան չը կայ հաւատ, չը կայ դատողութիւն։ Քրիստոնեայն պէտք է պատրաստ լինի, ինչպէս ասում է Պետրոս առաքեալն, «Յաղ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ զբան, որ է վասն յուսոյն ձերոյ»։ Պետ. Ա. թղ. Գ. գլ. 15 հմբ։ Բայց այս եւս պէտք է ասենք, որ մարդս չէ կարող ունենալ հաւատոյ կատարեալ ճանաչողութիւն, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Քանզի փոքր՝ ի շատէ գիտեմք և փոքր՝ ի շատէ մարգարէանամք, այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր՝ ի շատէս խափանեսցի»։ Կորնթ. ԺԳ. գլ. 9—10 հմբ։ «Զի հաւատովք գնամք և ո՛չ կարծեօք»։ Կորնթ. Ե. գլ. 7. հմբ։ Աստուածային յայտնութիւնները չեն կարող չը լինիլ մեզ համար փոքր՝ ի շատէ ստուերով ծածկուած, որով իսկ դերազանցվում է այս յայտնութիւնը մեր տկար մտքիցը, որ սրանով պահէ մեզ Աստուած ճշմարիտ հեղութեան մէջ և փորձէ մեր հաւատարմութիւնը և մեր սէրը ճշմարտութեան համար։ Այս պատճառաւ ուրեմն՝ ճշմարիտ հաւատը պէտք է լինի ինչպէս Լուսաւոր, նոյնպէս և Հեղ։

Լուսաւոր հաւատն, այսինքն հաստատուած անշարժ հիման վերայ, երբէք չը շարժուիր. ո՛չ ամբարիշտ մարդկանց թիւր և ծուռ դատողութիւններից, ո՛չ նրանց չար գործքերից և ոչ նրանց վատ օրինակներից։ Հաւատալ հաստատ, նշանակում է ամենեւին չ՚ունենալ երկբայութիւն, որով լինքն է աշխարհքը։ Հաստատ հաւատը կարող է հանդիպիլ դժուարութեանց և փորձանքների, բայց միշտ հաստատ է և յաղթող, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Արմատացեալք և շինեալք՝ ի նա և հաստատեալք՝ ի հաւատս, որպէս ուսարուքն առաւելեալք՝ ի նմին դոհութեամբ»։ Պօղ. Բ. գլ. 7 հմբ։

Հաւատը կենդանի է ասվում, երբոր ներգործում է նա և շարժում մեր միտքը և ընթանում է մեր սիրտը. «Զի՞նչ

2010
40

են հաւատք՝ եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն և յանդիմանութիւն որոց ո՛չն երեւին»։ Եբր. Ժ.Ա. գլ. 8 հմր։

Հաւատը Գոյշնական է ասվում, երբոր ունի այն ամենայն գործ.քերը, ինչ որ պահանջում է մեղանից հաւատը։ Այս գործ.քերը կարելի է բաժանել երկու — նախ՝ խոստովանութիւն հրապարակաւ, ինչպէս ասում է Քրիստոս. «Ամենայն որ խոստովանիցուք յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է»։ Մատ. Ժ. գլ. 32 հմր։ Այս հրապարակաւ խոստովանութեան հետ պէտք է և համարձակ տարածել Քրիստոնէութիւնը, և աշխատիլ ցոյց տալ ամեն պատահմունքի մէջ, որ մենք պատկանում ենք Քրիստոսին և Նա է մեր կեանքի պարծանքը։ Երկրորդ՝ կեանքի սրբութիւն կամ կատարեալ հնազանդութիւն Աստուծոյ պատուիրանքներին, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն. «Հաւատացի զոր և խօսեցայ և ես խոնարհ եղէ յոյժ»։ Սաղ. ՃԺԵ. գլ. 10 հմր։ «Զի եթէ խոստովանեսցիս բերանով քով տէր զՅիսուս և հաւատասցես 'ի սրտի քում, թէ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց՝ կեցցես»։ Հռովմ. Ժ. գլ. 9 հմր։

Որովհետեւ Հաւատն պարունակում է իրա մէջ բոլոր Քրիստոնէութիւնը և է աղբիւր ամենայն առաքինութեանց, աղբիւր սիրոյ առ Աստուած և առ մարդ, որ է օրէնքի լրումն, այս պատճառաւ՝ Քրիստոս հաւատ էր պահանջում իր աշակերտներից։

Հաւատով մենք ընդունում ենք Աստուծոյ ողորմութիւնները և մօտենում Նրան, ուրեմն՝ հաւատն է արդարութիւն և խաղաղութիւն առ Աստուած. «Այսուհետեւ արդարացեալք 'ի հաւատոց անտի խաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Հռովմ. Ե. գլ. 1 հմր։

Հաւատով Աստուծոյ որդի ենք դառնում. «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ է.ք հաւատովք 'ի Յիսուս Քրիստոս»։ Գալատ. Գ. գլ. 26 հմր։

Հաւատով էրարդ ենք ստանում մօտենալ Աստուծոյն հաստատմունքով. «Որով ունիմք զհամբոյնութիւն և զնուաճումն յուսով 'ի ձեռն հաւատոց անտի Նորա»։ Եփես. Գ. գլ. 12 հմր։ «Մատիցուք այսուհետեւ համբոյնութեամբ առ աջի աթոռոյ շնորհ-

հայ նորա, զի ընկալցուք զողորմութիւն և գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան»։ Եբր. Գ. գլ. 16 հմր։

Հաւատով արժանանում ենք յաւիտենական կեանքին. «Զի ամենայն որ հաւատայ 'ի Նա, մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենական»։ Յովհ. Ա.Ե.Գ. գլ. 16 հմր։

Հաւատով զօրանում ենք և յաղթող դառնում աշխարհիս պատերազմի մէջ. «Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի։ Եւ այս է յաղթութիւն մեր, որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»։ Յովհ. Ա. ընդ. Ե. գլ. 4 հմր։

Միով բանիւ՝ հաւատով բնակեցնում ենք մեր մէջ Յիսուս Քրիստոսին և միանում Աստուծոյ հետ, որ է կեանք և կատարեալ երջանկութիւն. «Բնակել Քրիստոսի հաւատովք 'ի սիրտս ձեր, սիրով արմատացեալք և հաստատեալք»։ Եփես. Գ. գլ. 17 հմր։

Հաւատն է մի Աստուածային ներգործութիւն մարդուս հոգւոյ վերայ և կարելի չէ, որ ծագած լինի նա մեր մտքից, այլ Հոգին Սուրբն է, որ ծնանում է մեր մէջ ճշմարիտ հաւատ։ Եւ արդարեւ՝ եթէ քննենք հաւատոյ առարկայն կը տեսնենք պարզապէս, որ հաւատը չէ կարող ծագիլ մարդուց, վասն զի Աստուծոյ յայտնած ճշմարտութիւնները մարդու մտքով դատուելու ճշմարտութիւններ չեն։ Բայց յայտնանէ, մենք ընդունակ չենք առանց Հոգւոյն Սրբոյ զօրութեան ընդունել մեր մտքով հաւատոյ ճշմարտութիւնները և նրանցով փրկուիլ, պատճառն որ՝ մեղքը հեռացնելով մեզ Աստուածանից՝ խաւարեցրել է մեր միտքը, ինչպէս ասում է առաքեալն Պօղոս. «Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա, և ոչ կարէ զիտել եթէ հոգեպէս քննիցի»։ Կորնթ. Ա. ընդ. Բ. գլ. 14 հմր։

Մեր սրտով եւս չենք կարող մենք ընդունել հաւատոյ ճշմարտութիւններն, որոնցից կախուած է արդէն մեր փրկութիւնը, եթէ Հոգին Սուրբն չ'օգնէ. պատճառն որ մարդս շատ չար է և նրա սիրտն շատ աւերուած է չարութեամբ. ուրեմն՝ չ'է կարող ինքնին սիրել և հնազանդիլ յայտնուած ճշմարտութեանց. «Խորհուրդ, մարմնոյ թշն-

նամութիւն է յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնա-
զանդի. նա և կարէ իսկ ո՛չ»։ Հռովմ. Ը. գլ. 7 հմր։ «Զի շնորհօք
նորա էք փրկեալ 'ի ձեռն հաւատոցն։ Եւ այս՝ ո՛չ 'ի ձէնջ,
այլ Աստուծոյ պարգեւ է»։ Եփես. Բ. գլ. 8 հմր։ Այս պատ-
ճառաւ ահա Հոգին Սուրբ անուանվում է Աստուածաշնչի
մէջ Հոգի հաւատոյ։ «Արդ՝ ունիմք զնոյն Հոգի հաւատոյ»։ Կորն.
Բ. նդ. Դ. գլ. 13 հմր։ Եւ ամենայն ճշմարիտ հաւատացեալ-
ները խոստովանում են, որ նրանց հաւատն է Ներգործող-Ընդ-
հոգոյն Սրբոյ։

Հոգին Սուրբ ներգործում է մարդուս վերայ, որ մար-
դուս մէջ ծնանի հաւատ՝ արտաքին միջոցներով, Աստ-
ուածաշունչ Գրքի ընթերցանութեամբ, աղօթքով և ե-
կեղեցական խորհրդներով։ Այս արտաքին ներգործու-
թիւնը միշտ և հանապազ կապուած պէտք է լինի ներքին
ներգործութեան հետ։ Մարդս եւս պէտք է աշխատի իրա
կողմից, որ արժանանայ Աստուածային ողորմութեանը։
Ուստի՝ պէտք է ունենայ հետեւողութիւն դործ դնել այն
արտաքին օգնութիւններն, որ Հոգին Սուրբ տալիս է նրան
և ամեն ժամանակ պէտք է մտքումը պահէ՝ ոչ թէ իբրեւ
լոկ ճանաչողութիւն կամ դիտութիւն, այլ ունենայ հեզ,
ճշմարիտ և խոնարհ սիրտ, որ երբէք չընդդիմանայ Հո-
գւոյն Սրբոյ, այլ միշտ որոնէ ճշմարտութիւն, որի համար
ասում է Քրիստոս. «Եթէ ոք կամի զկամն Նորա առնել,
գիտասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծոյ իցէ որ-
դեօք՝ եթէ ես ինչ յանձնէ խմեմ խօսիմ»։ Յովհ. Ա-էր. Է. գլ.
17 հմր։ Բայց այս դիտութիւնը չը պէտք է հպարտացնէ
մարդուս սիրտը, որպէս զի հպարտութեամբ չը կորցնէ ի-
րա վերայ եղած ներգործութիւնն Աստուծոյ։ «Գիտութիւն
հպարտացուցանէ, այլ սէր շինէ»։ Կորն. Ա. նդ. Բ. գլ. 1 հմր։

Մարդս ջերմեռանդն աղօթքով պէտք է խնդրէ Աստ-
ուածանից հաւատ, որ Աստուծոյ ամենից դերազանց շը-
նորհքն է, վասն զի հաւատը միայն տալիս է ճաշակումն
ամենայն ճշմարտութեանց և զօրութիւն պատրաստ լինե-
լու Աստուծոյ պատուիրանքների համար և ամեն ժամանակ
Աստուծոյ սիրոյ համար ընծայել իր ամեն սիրած բաներն։

Թէպէտ Հոգին Սուրբ սովորաբար միշտ գործ է ածում
արտաքին միջոցներ, որ ծնանի մեր մէջ հաւատ, բայց նրա
ներքին ներգործութիւնն այնպէս չ'է կապուած արտաքին
միջոցների հետ, որ առանց նրանց եւս երբեմն չը ներ-
գործէ մարդուս հոգւոյ վերայ, մանաւանդ այն ժամա-
նակ, երբ մարդս չ'է կարող ունենալ արտաքին միջոցներ,
ինչպէս տեսնում ենք Քրիստոսի մօտ խաչուած աւազակի
և ուրիշների վերայ։

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այն ճշմարտութիւնները, որոնք պէտք է լինին Քրիս-
տոնէական հաւատոյ հիմն, հաւաքուած են միասին և ա-
նուանվում են ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ [1], այսինքն ժողովածոյ
հաւատոյ ճշմարտութեանց, որ է այս.—

«Հաւատամք 'ի Մի Աստուած 'ի Հայրն ամենակալ, յԱրա-
րեալն երկնի և երկրի՝ երեւելեաց և աներեւոյթից։ Եւ 'ի Մի
Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն
յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր, Աս-
տուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ,
յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ո՛չ արարած. նոյն էութեամբ
ընդ Հօրէ, որով ամենայն ինչ եղեն՝ յերկինս և 'ի վերայ
երկրի, երեւելեաւ և աներեւոյթս. որ յաղագս մեր մարդկան և
վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից. մարմնացաւ, մարդա-
ցաւ, ծնաւ կուսէն Մարիամայ որդւոյ կուսին հոգւովն

[1] Հանգանակ բառը՝ ուրիշ լեզուներումն ասվում է Սիմբոլում, որ է՝ մեկ
նշան, որ հին ժամանակներումը տալիս էին ճաշի հրաւիրուած մարդկանց,
կամ այնպիսի նշան, որ հեռի եղած բարեկամները կարողանային այս նշանով
իրարու ճանաչել։ Այս անունը տուին Քրիստոնէից հաւատոյ ճշմարտութեանց,
որ սրանով կարողանան իրարու Քրիստոնեայ ճանաչել, որոնք ճշմարտութեամբ
և ջերմեռանդութեամբ հաւատում էին նրա մէջ եղած ճշմարտութեանցը։

ողբով, ողով էաս զմարմին՝ զհոգի և զմիտ և զանմեանսն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ո՛չ կարծեօք, զարարչաբեալ՝ խաչեալ՝ մեռեալ՝ յերրորդ աւուրս յարուցեալ՝ երկեալ ի յերկինս նովին մարմնովն նոպաս քեզ աջմէ Հօր. գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոց թագաւորութեան ո՛չ գոյ վախճան։ Հաւատամք և ի Սուրբ Հոգին յանէնն և ի կարարիչն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս. որ էր ի Յորդանան, տարողաց զաւետիսն՝ և բնակեցաւ ի Սուրբսն։ Հաւատամք և ի միոյն՝ ընդհանրական և Առաքելական Եկեղեցի՝ ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի տաւրութիւն և ի լուսաւորութիւն մեղաց ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց. յարութիւն երկնից և ի կեանսն յաւիտենականս։»

Քրիստոնէութեան սկզբունքն այս Հանգանակը կարճ էր այս խօսքերով. «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» որ առաքեալներն ասում էին Քրիստոսի հրամանաւ։ Բայց երբոր Քրիստոնէութեան դէմ վերկացան զանազան մոլքեր, այն ժամանակ սկսան աւելանալ Հանգանակի մասունքները և այս Հանգանակը դրուեցաւ Նիկիոյ ժողովումը, Քրիստոսի 325 թուականին, 318 Հայրապետաց համաձայնութեամբ, Մեծ Աթանասի ձեռքովն, որ մինչև ցայսօր ևս Հայաստանեայց Եկեղեցին ունի անփոփոխ, բայց աւելացնելով մեր Գրիգոր Լուսաւորչի պարզ և ճշմարիտ խոստովանութիւնը։

«Իսկ զի փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեան երկրպագանելով Սրբոյ երրորդութեանն և զոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և զկեցցէ յաւիտեան յաւիտենից ամէն»։

Հաւատոյ Հանգանակի գլխաւոր մասունքներն են չորս. Ա. Հաւատալ ի Հայր Աստուած. Բ. յՈրդին նորա ի Յիսուս Քրիստոս. Գ. ի Սուրբ Հոգին և Դ. յԵկեղեցի և ի խոստացեալ ողորմութեանն հաւատացելոց։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

«Հաւատամք ի զ Աստուած, ի Հայրն ամենակալ յԱրարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և անտեսանելեաց»։

Հաւատալ ի զ Աստուած՝ ոչ թէ միայն նշանակում է, որ Աստուած կայ և յայտնուել է մարդուս. այս հաւատը դեռ ևս ունին. «Դու հաւատաս զի մի է Աստուած, քարոզք առնես, և դեւք հաւատան և սարսին»։ Յակ. Բ. գլ. 19 հմտ։ Վասն զի հաւատալ որ կայ Աստուած և այս ճանաչողութիւնը գործ չը դնել՝ աւելի վատ է, քան թէ չը հաւատալ խօսքով Նրա գոյութեանը։ Այլ ճշմարիտ հաւատը պէտք է Աստուծոյն երևեցնէ մեզ, ինչպէս ասում է Հանգանակը թէ՝ կայ մի Աստուած, որ ունի ամէն կատարելութիւններ և որ ստեղծել է աշխարհը, կառավարում է և նախախնամում, Նրան պէտք է ընծայենք մեր ամէն գործքերը և պատրաստ լինինք Նրա ամէն հրամանները կատարելու։

Ասելով՝ հաւատամք ի զ Աստուած, պէտք է Աստուծոյ գոյութեան հետ իմանանք միանգամայն և Նրա բնութիւնը և կատարելութիւնները, իմանանք թէ ի՞նչ է արել մարդուս համար և ի՞նչ է յայտնել իրա վերայ, որ կարողանանք ճանաչել Նրան, հաճոյ լինիլ Նրան և գտանել ողորմութիւն Նրանից։ Բայց մենք չենք կարող կատարեալապէս ճանաչել Աստուծոյ կատարելութիւնները, վասն զի ըստ մեծի մասին նրանք խորհուրդ են մեզ համար և այնքան ենք ճանաչում, որքան Աւետարանը մեզ յայտնել է. «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ և ոչ ոք գիտէ՝ թէ ո՞վ է Որդի, եթէ ո՛չ Հայր, և ո՞վ է Հայր՝ եթէ ոչ Որդի, և ո՞ւմ կամիցի Որդին յայտնել»։ Ղուկ. Ժ. գլ. 22 հմտ։ Եւ արա պատճառն այն է, որ Աստուած՝ Հոգի է անսահման և մենք սահմանաւոր, ուրեմն՝ միայն Նրա ճանապարհի ափերը կարող ենք տեսնել. «Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ և մեծութեան նորա ո՛չ գոյ չափ»։ Սաղ. ճԽԹ. գլ. 3 հմտ։

Աստուածային բնութեան վերայ Ս. Գիրքը ուսուցանում

է մեզ երկու բան. Առաջին՝ Որ չը կայ ուրիշ Աստուած բացի Նրանից։ «Լսո՛ւր, Իսրայէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է»։ Բ. Օրէն. Զ. գլ. 4 հմբ։ «Մի է Աստուած և Հայր ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին 'ի մեզ»։ Եփես. Դ. գլ. 6 հմբ։ Երկրորդ՝ Աստուածային բնութիւնը հասարակ է Հօր, Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ և այս երեք անձինքն ունին մի Աստուածութիւն։ Այս է Քրիստոնեութեան հաւատը, այսպէս է խօսում Ս. Գիրքը Աստուածային երեք անձների վերայ. «Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ և հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ, ընդ ձեզ ընդ ամենեսին»։ Կորն. Բ. Նդ. ԺԳ. գլ. 13 հմբ։ Ըստ կանոնս դիտութեանն Աստուծոյ Հօր, որբութեամբ Հոգւոյն 'ի հնազանդութիւն և 'ի հեղումն արեան Յիսուսի Քրիստոսի։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցին»։ Պետ. Ա. Նդ. Ա. գլ. 2 հմբ։ «Զի երեք են որք վկայեն յերկինս. Հայր, Բանն և Հոգին Սուրբ. Եւ երեքքինս մի են»։ Յով. Ա. Նդ. Ե. գլ. 7 հմբ։ Մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Մատթ. ԻԸ. 19 հմբ։

Առաքեալները մկրտում էին անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, պատճառն որ՝ Մկրտութիւնն ընծայ է Աստուծոյ, և Յիսուս Քրիստոս հրամայեց մկրտել անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Այս երրորդութիւնն է հիմն Քրիստոնէական Հաւատոյ և երեք անձինքն ունին մի ներգործութիւն մեր փրկութեան համար, բայց զանազան կերպով։ — Հայրը կանչում է մեզ և մօտեցնում իր Որդւոյն, «Ո՛չ ոք կարէ գալ առ իս՝ եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա»։ Յով. Զ. գլ. 44 հմբ։ Կանչում է և մօտեցնում Որդւոյն, որին 'ի յաւիտենից ծնաւ և պատրաստեց Նրա գալուստն։ Որդին եկաւ երկնքից, միացաւ մարդկային բնութեան հետ, որ մեզ փրկէ մեր մեղքից և մեր Հոգւոյն տայ կեանք յաւիտենական։ «Ո՛չ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ»։ Յով. ԺԴ. գլ. 6 հմբ։ Եւ Հոգին Սուրբ մեր նորոգիչն է, որ կրկին հաստատեց մեր մէջ Աստուծոյ նմանութիւնը և ընդունակ է շինում մեզ Աստուծոյ տուած փրկութեանը։ «Զորժամ եկեսցէ Նա՝ Հոգին ճշմարտու-

թեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ»։ Յով. ԺԶ. գլ. 13 հմբ։ «Եւ ո՛չ ոք կարէ ասել՝ Տէր ըստ Յիսուս, եթէ ո՛չ Հոգւովն Սրբով»։ Կորն. ԺԲ. գլ. 3 հմբ։

Հայր ունի երկու նշանակութիւն — հասարակ և յատուկ։ Հանդանակի մէջ ասելով Հայր՝ չը պէտք է հասկանանք մենք Հօր Աստուծոյ հասարակ նշանակութեամբ, որ ամենիս համար Հայր է առհասարակ, այլ յատուկ նշանակութեամբ Հօր Աստուծոյ, որ Նա է մէկ անձն երրորդութեան։

Աստուած ունի ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ առ ինքն և առ մարդ։ Առ ինքն ունեցած կատարելութիւնները սրանք են. — Յաւիտենական, Անմահ, Հոգեւոր, Ամենակարող, Անփոփոխ, Ամենագէտ, Ամենասրբութ, եւ այլն։ Իսկ առ մարդ ունեցած կատարելութիւնները սրանք են. — Բարի, Իմաստուն, Սուրբ, Արդար, Ճշմարիտ, Հաւատարիմ, եւ այլն։

Թէպէտ Հանդանակի առաջին մասումն Աստուծոյ կատարելութիւններից միայն մէկն է յիշվում, այսինքն Ամենակարողութիւնն։ Բայց այս կատարելութիւնը բովանդակում է իրա մէջ միւս բոլոր կատարելութիւնները և այս ամենակարող կատարելութիւնը փառաւորապէս յայտնուեցաւ Արարչագործութեամբ։

Յաւիտենական ենք անմահ ասելով Աստուծոյն՝ մենք խոստովանում ենք, որ Նա չ'ունի ո՛չ սկիզբն և ո՛չ վախճան։ Մեր միտքը խոստովանելով Աստուծոյ գոյութիւնը Յաւիտենական՝ կարողանում է մեկնել աշխարհիս սկիզբն և Աստուած Յաւիտենական է անուանում ինքն իրան — Եհովայ, այսինքն Ես եմ, որ էն։

Ասելով Հոգեւոր՝ խոստովանում ենք, որ Աստուած չ'ունի իրա մէջ ոչինչ նիւթական մասն, այլ Հոգի է Նա։ «Հոգի է Աստուած և երկրպագուաց Նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել»։ Յով. Դ. գլ. 24 հմբ։ Թէպէտ և Աստուածաշունչ Գրքի մէջ ընծայվում է Աստուծոյն ականջ, աչք, յերեսք, յոյն, ոտք եւ այլն. «Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթիցս իմոց»։ Սաղ. ՃԻԹ. գլ. 2 հմբ։ «Աչք Տեառն 'ի վերայ արդարոց»։ Սաղ. ԼԴ. գլ. 16 հմբ։ «Զերեսս քո արարին և ստեղծին զիս»։ Սաղ. ՃԺԸ. գլ. 73 հմբ։ «Զոյն Տեառն

'ի վերայ ջուրց»։ Սաղ. ԺԸ. գլ. 3 հմր։ «Երկիր պատուանդան ոտից Նորա»։ Մատ. Ե. գլ. 35 հմր։ Բայց այս խօսքերը գործ են ածվում յարաբերելով առ մարդն։ Սուրբ Գիրքը խօսելով Աստուծոյ վերայ՝ մարդկեղէն կերպարանքով է ձեւացնում Նրան և սրանով յայտնում է մեզ Նրա ներգործութիւնը։

Ասելով Ամենաբեր՝ խոստովանում ենք, որ անցեալը, ներկայն և ապառնին յայտնի է Աստուծոյ, պատճառն որ՝ Նա է ստեղծող ամենայնի և Հոգի յաւիտենական, ամենայն ինչ ներկայ է Նրա համար։ «Այլ ամենայն ինչ մերկապատանոց կայ առաջի աչաց Նորա»։ Եբր. Դ. գլ. 13 հմր։ «Ո՞վ է իբրև զիս յառաջ գայցէ, ձայն տացէ, պատմեսցէ և պատրաստեսցէ ինձ՝ յորմէ հետէ արարի զմարդն յաւիտեան և որ ինչ գալոցն է, մինչչեւ եկեալ իցէ պատմեսցեն ձեզ»։ Եսայի. ԽԴ. գլ. 7 հմր։

Ասելով Ամենակարող՝ խոստովանում ենք, որ չը կայ ոչինչ՝ որ կարողանայ Աստուծոյն արգելք լինել, պատճառն որ՝ ինչ որ կամենայ՝ կարող է Նա անել և արարածն այնքան միայն զօրութիւն ունի, որքան տուել է Նրան Արարիչն։ «Ես եմ Աստուած քո, հանոյ լեր առաջի իմ և անարատ»։ Ծննդ. ԺԷ. գլ. 1 հմր։ «Հայեցաւ 'ի նա Յիսուս և ասէ. առ 'ի մարդկանէ այդ անկար է, այլ առ Աստուծոյ ամենայն ինչ զօրաւոր»։ Մատ. ԺԹ. գլ. 26 հմր։ «Որ ես, Տէր, Տէր, դու արարեր զերկինս և զերկիր զօրութեամբ քով մեծաւ և բազկաւ քո բարձու»։ Երեմ. ԼԲ. գլ. 17 հմր։

Ասելով Ամենուրեք՝ խոստովանում ենք, որ չը կայ ո՛չ մի տեղ, որ Աստուած չը կարողանայ ներգործել իր հոգւով։ Այս կատարելութիւնը պարունակում է իրա մէջ Նրա ամենագիտութիւնն և ամենակարողութիւնն։ «Եթէ թագուցէ մարդ 'ի թագստեան և ես ո՞չ տեսից զնա, ասէ Տէր. միթէ զերկինս և զերկիր ես ո՞չ լնումք»։ Երեմ. ԻԳ. գլ. 24 հմր։ «Յո՞ երթայց ես 'ի հոգւոյ քումմէ և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։ Եթէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես և եթէ իջանեմ 'ի դժոխս և անդ մնա ես»։ Սաղ. ՃԼԹ. գլ. 7—8 հմր։

Ասելով Անփոփոխ՝ խոստովանում ենք, որ հեռի է Աստուած ամենայն փոփոխութենէ, վասն զի ամենայաւիտեանն պէտք է լինի անփոփոխ, ո՛չ ոք չ'է կարող ո՛չ տալ և ո՛չ խլել կամ յափշտակել Նրանից և ոչինչ։ Վասն զի Նա է Ցուիչն ամենայնի։ Նա է միշտ անփոփոխ և թէպէտ Նրա ներգործութիւնը մարդուս վերայ փոփոխվում է մարդուս հոգւոյ դրութեան համեմատ, բայց Նա ինքը մնում է անփոփոխ։ Ինչպէս աչքով հիւանդը կարծում է թէ արեգակն լոյսը փոխուել է։ բայց Նրա կարծած փոփոխութիւնն իր աչքերի տկարութիւնն է, այսպէս եւս շատ տեղ ասվում է Սուրբ Գրքի մէջ։ Ասպոտած զղջացաւ, Ասպոտած բարկացաւ։ Բայց՝ Ասպոտած զղջացաւ՝ նշանակում է որ մարդս ծռեց իրա նպատակը, որ Աստուած նշանակել էր նրա համար։ Ասպոտած բարկացաւ, այսինքն մարդս արել է այնպիսի բան, որ արժանի է պատժի։ «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ, յորում չի՛ք փոփոխումն և կամ շրջելոյ ստուերք»։ Յակ. Ա. գլ. 17 հմր։ «Նոքա անցանեն և դու կաս և մնաս յաւիտեան։ Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին և որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին, բայց դու նոյն իսկ ես և ամք քո ո՛չ անցանեն»։ Սաղ. ՃԱ. գլ. 27—28 հմր։

Ասելով Բարի՝ խոստովանում ենք մենք Աստուծոյ անփոփոխ կամքը, որ պատրաստ է ամեն ժամանակ բարութիւն անել արարածներին։ Աստուած իրա բարութեամբ ներգործում է մեզ վերայ զանազան կերպով մեր հոգւոյ դրութեան համեմատ և ամեն ժամանակ այնպէս է ներգործում, ինչպէս յարմար է մեր վիճակին։ Աստուած իրա բարութիւնը տալիս է միշտ իր սիրելիներին, իսկ ինչ ժամանակ Նա իր բարութիւնը թափում է մեղաւորների վերայ՝ ասվում է ողորմութիւն։ Երբոր Աստուծոյ բարութիւնը սպասում է մեղաւորների դարձին՝ այն ժամանակն ասվում է համբերութիւն։ Երբոր Աստուծոյ բարութիւնը նուաղեցնում է պատժի սաստկութիւնը՝ ասվում է դադարութիւն։ Երբոր Աստուծոյ բարութիւնը ներում է մեղաւորներին և մոռացնում է իրան՝ ասվում է ողորմութիւն։ Աստուծոյ այս մեծ կատարելութիւնն, այն է ամենաբարութիւնն, ծագում է

նրանից, որ Աստուած ունի այն ամենայն, ինչ որ հարկաւոր է բարութիւն անելու համար, այսինքն ամենագիտութիւն, ամենակարողութիւն, ամենաբարեքութիւն, և ոչինչ բան չ'է կարող արգելք դառնալ Նրա բարութեանը։ Այս կատարելութիւնը հաստատվում է անթիւ բարութեամբ, որ Աստուած թափում է մեզ վերայ և իրա մօտ տեղ է պահում մեզ համար։ Աստուծոյ բարութիւնն երեւեցաւ մանաւանդ Նրա անհուն սիրոյ մէջ, որով փրկեց մեզ՝ չը խնայելով իր Որդւոյ անձն մեզ համար։ «Այսուիկ գիտացաք զսէրն, զի նա զանձն իւր եդ 'ի վերայ մեր և մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս»։ Յովհ. Ա. Ընդ. Գ. գլ. 16 հմբ։ «Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանի»։ Յովհ. Ա. Ընդ. Դ. գլ. 9 հմբ։

Ասելով Խմասպոան՝ խոստովանում ենք, որ Աստուած ունի ամենաբարի նպատակ և այն բարի նպատակի համար գործ է դնում բարի միջոցք կամ հնարք։ Այս կատարելութիւնը պարունակում է իրա մէջ ՄԵՆԱՓԻՊՈՒԹԻՒՆ, որով Աստուած ունի ամենալաւ ճանաչողութիւն։ Պարունակում է ՄԵՆԱԲԱՐՈՒԹԻՒՆ, որով միշտ ցանկանում է բարի անել։ Պարունակում է ՄԵՆԱԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ, որին ո՛չ ոք չ'է կարող արգելք դառնալ։ Այս ամենիմաստութիւնն Աստուծոյ տեսնում ենք նրանով, որ Աստուած միշտ նախախնամում է և ողորմում է արարածներին և Ս. Գիրքը անուանում է Աստուծոյն "դոյն խմասպոան։ «Մեծ են գործք քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցաւ երկիր ստեղծուածովք քովք»։ Սաղ. ՃԳ. գլ. 24 հմբ։ «Աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով։ Եւ հանճարով իւրով զանդունդս պատառեաց»։ Առակ. Գ. գլ. 19—20 հմբ։ «Մեծդ խորհրդովք և զօրաւոր գործովք։ Ամենակալ մեծանունդ Տէր, աչք քո բաց են յամենայն ճանապարհս որդւոց մարդկան, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհի իւրում, ըստ պտղոց գնացից իւրեանց»։ Երեմ. Լբ. գլ. 19 հմբ։

Սուրբ բառը Ս. Գրոց մէջ մի քանի տեղ նշանակում է

ԴԵՌՈՒԹԻՒՆ Աստուծոյ։ բայց առհասարակ Սուրբ ասելով՝ մենք հասկանում ենք, որ Աստուած ատում է ամենայն մեղք և սիրում է ամենայն առաքինութիւն։ Գեղեցիկ վկայ է Աստուծոյ սրբութեանը մեր խղճմտանքը, որի վերայ Աստուած 'ի սկզբանէ գրեց սրբութեան օրէնքը, ինչպէս Մովսիսի քարեղէն տախտակի վերայ իրա սիրոյ օրէնքն։ Սուրբ Գիրքը շատ տեղ փառաւորում է Աստուծոյ այս կատարելութիւնը։ «Երգէին զերգս Մովսիսի առաջի Աստուծոյ, և զերգս Գառինն՝ ասելով «սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց»։ Յայտ. Յայտ. ԺԵ. գլ. 3 հմբ։ Աստուծոյ աչքը սուրբ է, որ չը տեսանէ չարութիւն։ Սրբութիւնը տուած է մեզ՝ ինչպէս՝ մէկ հնարք կամ պայման Աստուծոյն մօտենալու։ «Այլ ըստ Սրբոյն, որ կոչեաց զձեզ և դուք սուրբք յամենայն դնացս ձեր լինիջիք»։ Պետ. Ա. Ընդ. Ա. գլ. 15 հմբ։ «Զխաղաղութեան զհետ երթայք ընդ միմեանս՝ և զսրբութեան, առանց որոյ ո՛չ ոք տեսանիցէ զՏէր»։ Եբր. ԺԲ. գլ. 14 հմբ։

Ասելով Արդար՝ խոստովանում ենք Աստուծոյ անփոփոխ կամքը, որ Նա տալիս է վարձ իրա սիրելիներին՝ և պատիժ մեղաւորներին։ Այս կատարելութիւնը պարունակում է իրա մէջ ամենիմաստութիւնն և ամենաբարութիւն։ «Բանզի հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ 'ի ձեռն առնն, որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա 'ի մեռելոց»։ Գործք առաք. ԺԷ. գլ. 31 հմբ։

Ասելով ՃՇՄԱՐԻՏ և ՀԱՒԱՏԱՐԻՄ՝ խոստովանում ենք, որ Աստուծոյ ամեն մի խօսքն կամ պատուիրանքն համաձայն է բնութեան իրաց, և ոչինչ չ'է խոստանում Աստուած, որ իսկապէս չը կատարուի։ Այս պատճառաւ Սուրբ Գիրքն անուանում է Նրան Աստուած ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ, Աստուած կենդանի և ճշմարիտ։ «Եւ որպէս դարձայք առ Աստուած 'ի կռոց անտի՝ ծառայել Աստուծոյ կենդանւոյ և ճշմարտի»։ Թես. Ա. գլ. 9 հմբ։ «Հաւատարիմ եղեւ յաշխարհի և վերացաւ փառօք»։ Տիմ. Ա. Ընդ. Գ. գլ. 16 հմբ։ «Հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ»։ Հռովմ. Գ. գլ. 2 հմբ։

Աստուծոյ այս ամեն կատարելութիւններն իրար հետ համաձայն են, ուստի և մարդս պէտք է զգոյշ լինի, երբ որ խօսում է Աստուածային կատարելութեանց վերայ, որ մի գուցէ՝ մի կատարելութեան վերայ խօսելիս՝ միւսներն ուրանայ. ինչպէս կան մարդիկ, որ Աստուածային արդարութեան վերայ խօսելիս՝ ուրանում են Նրա բարութիւնը և կարծում են թէ՝ Աստուած ամենակարող լինելով կ'անէ այնպիսի բան, որ հակառակ է Նրա արդարութեանը։

Աստուած ունենալով այս ամեն կատարելութիւններն՝ Սուրբ Գրքի մէջ անուանվում է Եբրայեցի։ «Որ ըստ Աբրահամի փառաց Եբրայեցոյն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ»։ Տէր. Ա. Բեր. Ա գլ. 11 հմր։ Աստուած ունի այնպիսի փառք, որ չ'է պատկանում ո՛չ ոքին և այս փառքը պարունակվում է Նրա կատարելութեանց մէջ, որ միշտ տեսնում է և նրանցով փառաւորվում, և Աստուած արժանի է համարում դնել իր փառքն իրա կատարելութեանց և այն փառաւորութեան մէջ, որով մենք պէտք է փառաւորենք Նրան։ Այս վերջին նշանակութեամբ է ասվում Փառաբերել զԱստուած։ «Բանդի գնոց գնեցայք. փառաւորա՛ք զԱստուած 'ի մարմինս ձեր և 'ի հոգիս ձեր, որ է յԱստուծոյ»։ Կորն. Ա. Բեր. Զ. գլ. 20 հմր։

Այս ամեն կատարելութիւնները մեզ պէտք է խոնարհեցնեն Աստուծոյ առաջ, որ միշտ մտածենք Նրա կատարելութեանց վերայ. Ոչ ինչ բան չ'է կարող այնքան մեծութիւն տալ մեր հոգւոյն, ինչպէս մտածելն Աստուծոյ կատարելութեանց վերայ և փառաւորելը Նրան։ Պէտք է ուրեմն սիրենք Աստուծոյն և երկիւղ ունենանք Նրանից, ցանկանանք Նրա ողորմութեանը և աշխատենք դառնալ Նրան նմանող։ «Արդ՝ եղերո՛ւք դուք կատարեալք, որպէս Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»։ Մատ. Ե. գլ. 48 հմր։

Աստուած յայտնեց իրա կատարելութիւններն իրա Գործքով 'ի սկզբանէ երկնքի և երկրի ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՄԲ, այսինքն ամենայն հնչաւոր և անհնչ, երեւելի և անտեսանելի արարածների, որոնք բովանդակվում են նրա մէջ։ Աստուած է պատճառ և Տէր բոլոր աշխարհի և մի այլ պատ-

ճառ չը կայ։ Սուրբ Գրքը յայտնի ուսուցանում է մեզ, որ Աստուած է ամենքի ստեղծողը և արարիչը։ «Աստուածն՝ որ արար զաշխարհս և զամենայն որ 'ի նմա, Նա երկնից և երկրի է տէր»։ Գործ. Ժէ. գլ. 24 հմր։ Մովսէս մարգարէն մանրամասն պատմում է մեզ Աստուծոյ արարչագործութիւնը՝ իրա գրքի մէջ (Աստուածաշնչում) ասելով թէ՝ աշխարհքը ստեղծուած է Աստուծոյ խօսքով։ «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր»։ Ծնունդ. Ա. գլ. 1 հմր։ «Նա ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան»։ Սաղ. ԼԳ. գլ. 9 հմր։ «Հաւատով՝ իմանամք հաստատեալ ըստ յաւիտեանն Բանիւն Աստուծոյ, անտեսանելիից զերեւելիս եղեալ»։ Եբր. ԺԱ. գլ. 3 հմր։

Սուրբ Գրքը մեզ ուսուցանում է պարզ, որ այն խօսքը, որով ստեղծեց Աստուած աշխարհքը՝ է Նրա Միածին Որդին։ «Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ Նովաւ եղև և առանց Նորա եղև և ոչինչ, որ ինչ եղեւն»։ Յովհ. ա. Ա. գլ. 1—3 հմր։ «Զի Նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երեւին՝ և որ ոչն երեւին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն Նովաւ եղև և 'ի Նոյն հաստատեցաւ։ Եւ Նա է յառաջ քան զամենայն և ամենայն ինչ Նովաւ եկաց բովանդակ»։ Կող. Ա. գլ. 16—17 հմր։

Բովանդակ արարածների մէջ՝ ամենից երեւելի են հրեշտակները և մարդիկ։ Հրեշտակները մարդկանցից գերազանց հոգի են, որոնք Աստուծոյ սպասաւորներն են, և այս պատճառաւ է, որ նրանց անունն ասվում է հրեշտակ, այսինքն սուրհանդակ։ Հրեշտակները բաժանվում են երկու — քրէի և ղէր։ Բարի հրեշտակները նրանք են, որոնք մնացին իրանց սրբութեան և հնազանդութեան մէջ և բաղմաթիւ են նրանք։ «Եւ տեսի և լուայ զձայն հրեշտակաց բազմաց, որք կային շուրջ զաթոռովն և զչորիւք կենդանեօքն և էր թիւ նոցա բիւրք բիւրոց և հազարք՝ հազարաց»։ Յովհ. յայտ. Ե. գլ. 11 հմր։ «Թէ համարիցեմ թէ ո՛չ կարեմ

աղաչել զՀայր իմ և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան դունդս հրեշտակաց »։ Մաթ. Իզ. գլ. 53 հմտ։ Հրեշտակները անուանվում են Սերովբէ, Քերովբէ և այլն և նրանց պարտաւորութիւնն է փառաւորել Աստուծոյն և կատարել Նրա հրամանն։ « Եւ սերովբէք կային շուրջ ըզ նովաւ, վեց թեւք միոյ և վեց թեւք միոյ, երկուքն ծածկէին զերեսս իւրեանց և երկուքն ծածկէին զոտս իւրեանց և երկուքն թռուցեալ աղաղակէին մի առ մի և ասէին. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի են ամենայն երկիր փառաւք Նորա »։ Եսայ. մրգ. Զ. գլ. 2—3 հմտ։ « Ասեմ ձեզ՝ զի հրեշտակ նոցա յերկինս՝ հանապազ տեսանէ զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է »։ Մաթ. ԺԸ. գլ. 10 հմտ։ « Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որք առաքին 'ի սպասաւորութիւն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են ըզ փրկութիւն »։ Եբր. Ա. գլ. 14 հմտ։ Հրեշտակները սիրով և ուրախութեամբ հնազանդում են Աստուծոյ և Նրանց հնազանդութիւնն է, որ փրկիչն մեզ օրինակ է տալիս Տէրունական աղօթքումը ասելով. « Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի »։ Մաթ. Զ. գլ. 14 հմտ։ Իսկ չար հրեշտակները Նրանք են, որոնք հպարտութեամբ ընդդիմացան Աստուծոյ և հեռացան Նրանից և բնակեցան անդնդումը։ « Զի եթէ 'ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ո՛չ խնայեաց, այլ խաւարային կապանօք արկեալ 'ի տարտարոսն՝ ետ պահել 'ի դատաստան »։ Պետ. Բ. գլ. Բ. գլ. 4 հմտ։ Քրիստոսի գալուցն առաջ՝ այս չար հոգիքը ունէին զօրութիւն կամ իշխանութիւն մարդուս վերայ, որոնք ծնանում էին մարդուս մէջ զանազան հիւանդութիւններ։ Այս հիւանդութիւններից էր, որ Քրիստոս փառաւորապէս աղաղակում էր մարդուս հոգին և մարմինը։ Այս աղաղակութենէն յետոյ՝ մենք այլևս պատճառ չունինք վախենալու սատանայի իշխանութենէն, այլ միայն պէտք է զգոյշ լինինք, որ չը փորձեն մեզ չարութեան ճանապարհով։ « Զի ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան, որք են 'ի ներքոյ երկնից »։ Եփես. Զ. գլ. 12 հմտ։ « Արթուն լերուք և հըսկեցէք, զի սոսին ձեր սատանայ իբրև առիւծ գոչէ, շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ »։ Պետ. Ա. գլ. Ե. գլ. 8 հմտ։

Մարդս ստեղծուած է Աստուածանից՝ հոգւով և մարմնով։ Հոգին է մարդոյ մասն, որ զանազանվում է մարմնից, բայց միացած է նրա հետ և այս միութեամբը մարդ մտածումէ, դատումէ, ունի շարժմունք, զգացողութիւն և կեանք։ Հոգւոյ մէջն է մարդկային արժանաւորութիւնը, զօրութիւնը և ճշմարիտ կեանքը։ Հոգւոյն տուած է, որ տիրէ մարմնոյ վերայ և մարմինը հնազանդի նրան։ Բուստի՝ մարդս չ'է, ինչպէս ասումեն, բանական կենդանի, այլ Հոգի է նա մարմնի հագած, որ մի գործի կամ միջոց է հոգւոյ համար աշխարհիս հետ կապակցելու և նրա վերայ ներգործելու։ Նմանութիւնը և պատկերը, որ Աստուած տուաւ մարդուս, նշանակումէ, որ Նա ստեղծեց մարդուն հոգեւոր այսինքն ընդունակ դատելու, նկատելու և ճանաչելու։ Ստեղծեց նրան ողջ, այսինքն ընդունակ ընտրելու և կամենալու։ Ստեղծեց Նրան սուրբ, այսինքն ընդունակ բարի խնդրելու, Աստուծոյ լուսովը լուսաւորուելու և նրա սիրոյ մէջ բնակելու։ Ստեղծեց անմահ, այսինքն ընդունակ յաւիտենական լինելու։ Հոգին է ուրեմն՝ որ առաջնորդում է մարդուն և իշխող է շինում աշխարհի վերայ։ « Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զՀրեշտակս, փառաւք և պատուաւք պսակեցեր զնա և կացուցեր զնա 'ի վերայ ձեռակերտաց քոց »։ Սաղ. Ը. գլ. 6—7 հմտ։

Աստուած երբ ստեղծեց ամեն արարածները, յայտնեց որ ամենը բարի են, այսինքն բարութենէ են ստեղծուած, բարի են ստեղծուած և բարի լինելու համար են ստեղծուած։

Արարչագործութիւնը պէտք է ծնանի մեր մէջ հնազանդութեան, աստուածպաշտութեան, սէր և ընդհանրութեան առ Աստուած, որ Նա ստեղծել է մեզ և հաղորդակից է անում իր երջանկութեանը։ Պէտք է նոյնպէս ծնանի մեր մէջ կատարեալ հաստատմունքն, որ Աստուած ինչպէս որ տուել է կեանք, նոյնպէս կը տայ և կեանքի ամեն հարկաւորութիւնները։ « Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց թէ՝ զի՞նչ ուտիցէք կամ

զի՞նչ ըմպիցէք, և մի՛ վասն մարմնոյ ձերոյ՝ թէ զի՞նչ ա-
գանիցէք, ո՞չ ապաքէն ոգի առաւելէ քան զկերակուր
և մարմին քան զհանդերձ »։ Մաթ. Զ. գլ. 25 հմր։ Պէտք է
հաւատանք հաստատ, որ Աբարիչը միշտ նախախնամող է
իր արարածներին։

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ է Աստուծոյ այն ներգործութիւնը
կամ կարող զօրութիւնը, որով Նա հոգում է իւր արարած-
ների համար, նրանց կարօտութեանց համար, և խառնվում
է նրանց կեանքի մէջ, ինչպէս արժան է իրան։ Նախա-
խնամութիւնը բաժանվում է երկու — հասարակ և յատուկ։

Աստուծոյ հասարակ Նախախնամութիւնն երևում է աշ-
խարհքիս տուած օրէնքներումը, ինչպէս — արեգակի
լուսաւորութեան, տարերքների, եղանակի և ժամանակի
փոփոխութեան մէջ։ Աստուած այս Նախախնամութիւնն
ունի ընդհանուր արարածների վերայ, ինչպէս ասում է
Քրիստոս։ « Զի արեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և
բարեաց, և ածէ անձրեւ 'ի վերայ մեղաւորաց և արդա-
րոց »։ Մաթ. Ե. գլ. 45 հմր։

Աստուծոյ յատուկ Նախախնամութիւնն երևում է այն
ժամանակ, երբոր Աստուած խառնվում է մարդուս յա-
տուկ գործքերումը, ինչպէս տեսնում ենք Մովսիսի,
Յովսեփի պատմութեան մէջ և այլն։ Այս Նախախնամութիւնը
երբեմն երևում է մեզ արտաքին ձևով, ինչպէս՝ հրաշք-
ներով, որոնց մէջ յայտնի երևում է Նրա ձեռքը։ Բայց
առհասարակ Աստուած մեզ նախախնամում է մեզանից
ծածկուած միջոցներով, իրա Նախախնամութեանը գործիք
չինելով մարդկանց գործքերը կամ անցքերը։

Խոստովանելով որ Աստուած ունի ամենամեծ կատա-
րելութիւններ — ամենակարողութիւն, ամենիմաստութիւն և ամենաբ-
ութիւն, խոստովանում ենք մի և նոյն ժամանակ, որ այս
կատարելութեանց համեմատ ունի և գործ, այսինքն Նա-
խախնամութիւն։ Նա ամենաշարժ գոլով նախախնամում է իր ա-
րարածներին, տալով ամենայն բարութիւն։ Ամենիմաստ գո-
լով տալիս է այն հնարքները, որով մարդս կարող է բա-
րութեան հասնիլ, և ամենակարող գոլով տալիս է ամենին

կեանք և միջոց կեանքի պահպանութեան։ Ուրեմն՝ ուրա-
նալ Աստուծոյ Նախախնամութիւնը՝ նշանակում է ուրանալ
Նրա ամեն կատարելութիւնները, նաև Նրա գոյութիւնը։
Արարածն ամեն ժամանակ պէտք է կախուած լինի Արարչի
կամքից և լինի Նրա աչքի և ձեռքի ներքոյ։ Թէպէտ մենք
տեսնում ենք, որ մարդուս ձեռագործը կարողանում է
մի քանի ժամանակ մնալ և տեւել առանց մարդու օգնու-
թեան, բայց նրա մնալու պատճառն էլս այն է, որ Աստ-
ուած բոլոր աշխարհս անդադար նախախնամելով՝ այն ձե-
ռագործն էլս նախախնամելում է նրա մէջ։ Արարածներն
էլս իրանց բնութեամբ յայտնում են, որ Արարիչն է Նախա-
խնամողը, պատճառն որ՝ արարածն իրա կեանքն ու զօ-
րութիւնն առել է Արարչից, և ոչինչ արարած իրա զօրու-
թեամբ չ'է կարող կենալ աշխարհումս առանց Արարչի
պահպանութեան, որ ստեղծեց նրան։ « Ամենեքեան քեզ
սպասեն և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Դարձուցա-
նես զերեսս քո 'ի նոցանէ և խռովին, հանես զոգի 'ի նոցա-
նէն՝ պակասին և 'ի հող դառնան »։ Սաղ. ՃԳ. գլ. 27—29 հմր։

Եթէ Հանդանակի առաջին մասումն Աստուծոյ մէկ կա-
տարելութիւնն է միայն յիշվում, այն է Նրա ամենակա-
րողութիւնը, որա պատճառն այն է, որ Նախախնամու-
թիւնն անշուշտ արարչագործութեան հետևանքն է, ինչ-
պէս ասում են թէ՝ Նախախնամութիւն ալ է, եթէ ոչ շարու-
նակ Արարչագործութիւն։

Աշխարհիս խնամատուն և համաձայն կարգն այնքան
մեզ զարմացնում է ամեն մէկ իրա մասնումն, մանաւանդ
աստեղների կանոնաւոր շարժմունքների մէջ, ցերեկուան և
գիշերուան և եղանակների փոփոխութեանց մէջ, բոյսերի,
կենդանիների և մարդկային ցեղի պահպանութեան և տա-
րածման մէջ, որ յայտնի վկայում են այս ամենը, որ այս-
պիսի խնամատուն, գեղեցիկ և ներդաշնակ ընդհանուր կարգը
արարածի գործ չ'է, այլ ամենակարող Արարչի, որ 'ի ը-
կըզբանէ կարողացաւ հաստատել այսպիսի խնամատուն կարգ։
« Արարեր զլուսին վասն ժամանակի, արեգակն ծանեաւ
զժամ մտանելոյ իւրոյ »։ Սաղ. Ծ. գլ. 19 հմր։ Սուրբ Գիրքն

աւելի պարզ ցոյց է տալիս մեզ Աստուծոյ Նախախնամութիւնն Եբրայեցւոց ազգի վերայ, թէ ի՞նչպէս Աստուած նախախնամում է ազգերին և իր ընտրած մարդկանց, ջրհեղեղի ժամանակ, Սոդոմի և Գոմորի կործանման ժամանակ, կարմիր ծովն անցնելու ժամանակ և այլն, և այլն։

Վերեւ ասացինք, որ աշխարհս ստեղծուած է Աստուծոյ բարութենէն, ստեղծուած է բարի և ստեղծուած է բարութեան մէջ մնալու համար։ Բայց մարդս լինելով անձնիշխան՝ շատ անգամ անհնազանդ է դտնվում Աստուծոյ կամքին և իր ազատութիւնը գործ է դնում 'ի չարն։ Այս պատճառաւ է, որ աշխարհումս տեսնում ենք զանազան չարութիւններ, թէպէտ և իմանում ենք միանգամայն, որ Աստուած նախախնամում է ամեն արարածներին։ Զ'էր լինիլ աշխարհումս չարութիւն, եթէ մենք մնացած լինէինք մեր առաջին անմեղութեան մէջ։ Ուրեմն՝ բոլոր չարիքը յառաջ են գալիս նրանից՝ որ մենք մեր անձնիշխանութիւնը բարութեամբ չ'ենք գործ դնում, այն անձնիշխանութիւնը, որ իբրեւ պատկեր և նմանութիւն Աստուծոյ տուած է մեզ, որ նրանով Աստուծոյն գործակից լինինք աշխարհումս։ Զարաչար գործ դնելով մեր անձնիշխանութիւնը՝ մենք տեսնում ենք, որ նրանից հետեւում են մեզ համար չար հետեւանքներ և ցաւներ։ Այս ցաւներն եւս մենք պէտք է համարենք իբրեւ գործիք, որով ամենաբարի Նախախնամութիւնը կամենում է մեզ հասկացընել մեր մոլորութիւնը, հանել չար ճանապարհից և դարձնել առ ինքն, ուղղել, ինչպէս ասում է մարգարէն. «Մի՞թէ կամելով կամ՝ցիմ զմահ մեղաւորի, ասէ Տէր, որպէս զդառնալ նորա 'ի չար ճանապարհէ և կեալ»։ Եզեկ. ԺԸ. գլ. 23 հմր։

Թէպէտ շատ անգամ տեսնում ենք մենք չար մարդկանցը բարեբաղդութեան մէջ, բայց նրանց բարեբաղդութիւնն արտաքուստ է երեւում մեզ. պատճառն որ՝ չը կայ ճշմարիտ երջանկութիւն և խաղաղութիւն առանց խղճի հաւանութեան և առանց Աստուծոյ հետ հաշտուելու Յիսուսի Քրիստոսի միջնորդութեամբ։ Շատ անգամ Աստուած համբերում է մարդկանց չարութեանը, որ տայ

ժամանակ զղջալու, և եթէ նրանք յետ չը դառնան իրանց չար գործքերից, չ'են կարող փախչիլ ապագայ պատժից, և շատ անգամ Աստուած այս պատիժը սկսում է այս աշխարհից, տալով մեծ նեղութիւն այն մարդկանցը, որոնք 'ի չարն են գործ դնում Աստուծոյ համբերութիւնը։ «Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս և մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս։ Զի նետք քո հարան յիս և յիս հաստատեցաւ ձեռն քո»։ Սաղ. Լէ. գլ. 1—4 հմր։

Աստուծոյ հաստատ Նախախնամութիւնը կայ ամեն արարածի վերայ՝ առանց բացառութեան, թէ փոքրին և թէ մեծին, մինչեւ չնչին արարածին անգամ։ «Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին և մի 'ի նոցանէ յերկիր ո՛չ անկցի առանց հօր ձերոյ։ Այլ ձեր ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է»։ Մատ. Ժ. գլ. 29—30 հմր։ Իսկ Աստուծոյ յատուկ Նախախնամութիւնն է իրա պաշտողների վերայ։ Բայց սակայն Աստուծոյ Նախախնամութեան ճանապարհն մեզ համար անյայտ խորհուրդ է. նա դերազանցվում է մեր մտքից և մեր ամեն խնայածն այս է միայն, որ Աստուած նախախնամում և կառավարում է աշխարհքը, խառնվում է մեր գործքերումն իրա կամքով առանց դժուարութեան, ինչպէս արժան է։ Ցիմար պէտք է լինի ուրեմն այն մարդը, որ ուրանում է Աստուծոյ Նախախնամութիւնը, չը կարողանալով իրա սահմանաւոր և տկար մտքով իմանալ Նրա նախախնամութեան ճանապարհն։ «Ասաց անզգամն 'ի սրտի իւրում՝ թէ ո՛չ գոյ Աստուած»։ Սաղ. ԺԳ. գլ. 1 հմր։ Վասն զի Աստուծոյ գոյութեան և կատարելութեանց հետ անշուշտ կապուած է և Աստուծոյ Նախախնամութիւնը։ Ուրանալ Աստուծոյ Նախախնամութիւնը՝ նշանակում է ուրանալ Նրա գոյութիւնը և կատարելութիւններն։

Աստուծոյ նախախնամութիւնը յարմար է իւրաքանչիւր արարածների բնութեանը։ Անշունչ արարածները կառավարվում են Նրա ամենակարողութեամբ և ընդհանուր օրէնքներով։ Անասուններն ո՛չ թէ միայն այս օրէնքներով են կառավարվում, այլ և բնածին ազդեցութեամբ, որով

իսկ նրանք զանազանվում են անչունչներից և որոշում են թէ ինչ է յարմար կամ ընդդէմ իրանց բնութեանը։ Բայց հոգեւոր արարածներին կառավարում է Աստուած իր ամենակարողութեամբը և իրա տուած օրէնքներով, որ ուղղէ նրանց զգայողութիւնը, միտքը և կամքը, և իրա հոգւով խօսում է մարդոյ հոգւոյ հետ։ Աստուած ամէն բանի վերայ ունի ներգործութիւն։ Նա շարժում է մեր հոգին դէպ 'ի բարութիւն, տալիս է մեզ օգնութիւն փորձութեան ժամանակ։ տալիս է մեզ դիպուած, կարողութիւն և հնարք բարութիւն անելու, և այս բարութեան վարձն Աստուած երբեմն սկսում է տալ այս աշխարհից։ Այնպէս որ՝ կարող ենք ասել թէ՝ աւելի Աստուած է պատճառ մեր բարութեանը, քան թէ մենք։

Մեր չարութեան դէմ Աստուած վարվում է ինչպէս արժանի է։ — Մեր անձնիշխան լինելու համար՝ թոյլ է տալի մեր չարութիւնը, թոյլ է տալի մեղաւորին իրա կամքին հետեւելու, յետ է առնում նրանից իրա սուրբ հոգին։ երբոր մեղաւորը նրան տխրեցնում է և հեռացնում, շփոթում է մեղաւորի խորհուրդները և դատողութիւնները և շինում է նրանց իրրեւ հնարք իր ողորմութեան, ինչպէս տեսնում ենք Յովսեփի եղբայրների չար գործքերի մէջ։ «Դուք խորհեցարուք զինէն 'ի չարութիւն և Աստուած խորհեցաւ վասն իմ 'ի բարութիւն»։ Ծնն. Ծ. գլ. 20 հմ։ «Զմէ՞ խառնեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս»։ Դաւթ. Դ. գլ. 25 հմ։ Մեծ մեղք է ասել՝ թէ Աստուած է պատճառ մարդուս չար գործքերին, վասն զի Աստուած տալով մեզ կարողութիւն և ազատութիւն՝ հեռացնում է մեզ չար գործքերից՝ խղճմտանքի ձայնով, իրա պատուիրանքներով, իրա հոգւով, իրա խոստմունքներով, երբեմն էլ մեծ պատժով։ «Մի՛ ոք որ 'ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ յԱստուծոյ փորձիմ՝ զի Աստուած անփորձ է չարաց. փորձէ նա և ոչ զոք։ իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ»։ Յակ. Ա. գլ. 13—14 հմ։

Աստուծոյ Նախախնամութիւնն ամէն բարի գործքերին

աճումն է տալի։ «Ես անկեցի, Ապողոս ջուր եւ, այլ Աստուած աճեցոյց»։ Կորն. Ա. Ընդ. Գ. գլ. 6 հմ։ Աստուծոյ Նախախնամութիւնը չէ հեռացնում մեզ բնական լուսոյ բարի օրէնքները մոռացելուց, որ մենք կարող ենք գործ դնել մեզ պահպանելու համար և որոնք համարվում են Աստուծոյ Նախախնամութեան միջոցներ։ Բայց չ'պէտք է մոռանանք, որ Աստուծոյ Նախախնամական ներգործութիւնը աւելի մեծ է քան մերը և մարդկային հնարքները գործ դնելու ժամանակ՝ դարձեալ պէտք է խնդրենք Աստուծոյ հովանաւորութիւնը։

Աստուծոյ Նախախնամութիւնը պէտք է ծնանի մեր մէջ։ — Ա. Շնորհակալութիւն այն ամէն բարութեանց համար, որ մենք վայելում ենք և որոնց առաջին պատճառն է Աստուած։ «Գոհացայց զքէն, Ցէ՛ր, բոլորով սրտիւ խմով պատմեցից զամենայն սքանչելիս քո»։ Սաղ. Թ. գլ. 1 հմ։ «Յամենայնի գոհացարուք, զի այս են կամք Աստուծոյ Քրիստոսիս Յիսուսիս 'ի ձեզ»։ Թեսաղ. Ե. գլ. 17 հմ։ — Բ. Հաճելիութիւն և հնազանդութիւն այն նեղութեանց մէջ, որ Աստուած տալիս է մեզ մեր բարութեան համար։ «Խուլ եղէ և ո՛չ բացի զբերան իմ, զի դու արարեր»։ Սաղ. ԼԸ. գլ. 10 հմ։ — Գ. Հաւատարմութիւն և կատարեալ հնազանդութիւն մեր կեանքի ամէն պատահմունքների մէջ, պատճառն որ՝ Աստուած է՝ որ տալիս է նրանց ընթացք և դարձնում է ամենայն ինչ դէպի բարին, եթէ սիրում ենք նրան։ «Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի 'ի բարիս, որք հրաւիրեալքն կոչեցան»։ Հռովմ. Ը. գլ. 28 հմ։ — Դ. Բարի սովորութիւն՝ որ մենք ամէն մեզ պատահած իրողութեանց մէջ՝ միշտ տեսնենք Աստուծոյ ներգործութիւնը, ինչպէս ասում է Յովսէփ իր եղբայրներին։ «Եւ արդ՝ ոչ եթէ դուք առաքեցիք զիս այսր, այլ Աստուած»։ Ծնն. Խե. գլ. 8 հմ։ — Ե. Մեծ եռանդ հաստատ ուշադրութիւն միշտ Աստուծոյ ճանապարհի վերայ գնալու և գործելու ինչ որ հաճոյ է Նրա կամքին, պատճառն որ՝ մենք միշտ և հանապազ Աստուծոյ աչքի առաջին ենք և ամէն գործքերում Նրանից կախուած։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

«Հաստատմամբ է՝ ի մի տէր Յիսուս Քրիստոս» եւայլն։

Ասելով Տէր՝ Հանգանակի մէջ ո՛չ թէ միայն պէտք է հասկանանք Արարիչ և Նախախնամող, այլ առաւել պէտք է հասկանանք ինչպէս մեզ փրկիչ։ «Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի և՝ Տէր զնա և օծեալ Աստուած արար, զայն Յիսուս զոր դուք խաչեցիք»։ Գործ։ Բ։ գլ։ 36 հմր։ «Զամենայն ինչ հնազանդ՝ արար ի ներքոյ ոտից նորա»։ Եփես։ Ա։ գլ։ 22 հմր։

Բայց Յիսուս անունը տուած է Նրան, ոչ թէ՝ մարդկանց կամքով, այլ Աստուծոյ, որ Նա պէտք է փրկել էր մարդկային ազգը մեղքից, ինչպէս հրեշտակն ասաց Յովսէփին. «Ծնցի որդի՝ և կոչեսցես զանուն նորա Յիսուս։ զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»։ Մատ։ Ա։ գլ։ 21 հմր։ Ո՛չ թէ միայն ազատեց մեզ Յիսուս իրա մահով դատապարտութենէ, որին մեր մեղքն արժանացրել էր, այլ լուսաւորում է մեզ իրա վարդապետութեամբ, քաջալերում է մեզ իր օրինակով և մանաւանդ նորոգում է մեզ իրա հոգւով, որ կրկին չ՝ընկնենք մեր մեղքի մէջ, և ինչպէս որ մեզ ազատեց մեր մեղքից, նոյնպէս և ազատեց նրա ամեն հետեւանքներից։

Մեր երկնաւոր Հայրն առաքեց իր միածին Որդին, որ Նա լինի մեզ համար խմաստութիւն, արդարութիւն, փրկութիւն ե՝ սրբութիւն։ «Որ եղև մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն»։ Կորն։ Ա։ նդ։ Ա։ գլ։ 30 հմր։ Նա է մեր խմաստութիւնը, որ ցոյց տուաւ մեզ փրկութեան ճանապարհը։ Նա է մեր արդարութիւնը, որ մեզ փրկեց մեր մեղքից և արժանացրեց իր արդարութեանը։ Նա է մեր սրբութիւնը, որ սրբեց մեր սիրտը և մեր կեանքը։ Նա է մեր փրկութիւնը, որ ազատեց մեզ մեր մեղքից և այս փրկութիւնը, որ սկսվում է այս աշխարհումն հաւատով և կեանքի նորոգութեամբ, պէտք է լրումն ստանայ այն կեանքումն երջանկութեամբ, որից մեզքն անդարձ հեռացրել էր մեզ։ Նա է Հշմարիտ Քրիստոս, Փրկիչ, Փրկիչ, Դիցնակ Փրկիչ։ «Եւ չիք այլով իւիք փրկութիւն զի և ոչ անուն այլ դոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ»։ Գործ։ Դ։ գլ։ 12 հմր։

Այսպէս ուրեմն՝ մեր հաւատն առ Քրիստոս կը լինի ճշմարիտ։ Նախ՝ երբոր մենք բաց ի նրանից՝ մի այլ փրկութեան աղբիւր չ՝ենք որոնիլ։ «Խափանեալ է՝ ի Քրիստոսէ, որք օրինօքն արդարանայք և անկեալ է՝ ի շնորհաց անտի»։ Գալ։ Ե։ գլ։ 4 հմր։ Երկրորդ՝ երբոր կը ճանաչենք և կը փառաւորենք Նրա շնորհքների դինը՝ ասելով Յովհաննէս Աւետարանչի հետ միասին։ «Զի՝ ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք զշնորհս փոխանակ շնորհաց»։ Երրորդ՝ երբոր կ՝զգանք մենք կարօտութիւն Նրա ողորմութեան, անդադար կը դնանք առ Քրիստոս և անդադար կը խնդրենք Նրանից և կը ստանանք։ Չորրորդ՝ երբոր գործ կը դնենք Նրա ողորմութիւնները մեր սրբութեան և փրկութեան համար։ «Մեք զիմիրդ ապրեսցուք հեղգացեալ յայնպիսի փրկութենէ որ սկիզբն առ խօսելոյ ի տեառնէ»։ Եբր։ Բ։ գլ։ 3 հմր։

Քրիստոս բառը նշանակում է Օծեալ կամ Մեսիայ։ Եբրայեցւոց միջումն այս անունը տալիս էին թագաւորներին, մարգարէներին և քահանաներին, պատճառն որ՝ ինչ ժամանակ նրանց կանդնեցնում էին իրանց պարտաւորութեանց վերայ՝ օծում էին նրանց սուրբ իւղով։ Այս էր շնորհքի նիւթական նշան, որ Աստուած տալիս էր, որ նրանք ունենան կարողութիւն կատարել իրանց պաշտօնն արժանապէս և միանգամայն այն պարտաւորութիւնները, որոնց համար ընտրուած էին։ Եբրայեցիք տուին այս Քրիստոս կամ Մեսիայ անունը Մեծ Առաքեալին, որ Աստուած խոստացել էր նրանց, որ պէտք է լինէր փրկիչ մարդկային ազգի և Որին մարդկային ազգը անհամբերութեամբ սպասում էր, ինչպէս մխիթարութեանն Իսրայելի։ «Եւ էր այր մի յերուսաղէմ, որոյ անունն էր Սիմէոն և էր այրն այն արդար և երկիւղած յԱստուծոյ և ակն ունէր մխիթարութեանն Իսրայելի և հոգին սուրբ՝ էր՝ ի նմա»։ Ղուկ։ Զ։ գլ։ 25 հմր։ Այս-

պէս էր անուանուած Դանիէլի մարգարէութեան մէջ Թ. գլխում։ Սամարացի կինն ասաց Քրիստոսին. «Գիտեմ՝ զի Մեսիայ գայ՝ անուանեալն Քրիստոս, յորժամ եկեսցէ, նա պատմեսցէ մեզ զամենայն»։ Յովհ. Դ. գլ. 25 հմր։

Յիսուս անուանուեցաւ Քրիստոս, որովհետեւ Նա էր ճշմարիտ խոստացած Մեսիան և Նրա վերայ կային այն ամենն նշանները, որով մարգարէքն նշանակել էին Մեսիային և յատուկ տուած էր Նրան այս անունը. պատճառն որ՝ Նա կատարեց երեք պաշտօն — Մարգարէի, Թագաւորի, Քահանայի, որ պէտք է կատարել էր Մեսիան մեր փրկութեան համար։

Թէպէտ չը ստացաւ այս նիւթական օժանդակութիւն, որի համար մենք խօսում ենք, բայց ստացաւ ճշմարիտ հոգեւոր օժանդակութիւն։ «ԶՅիսուս, որ 'ի Նազարէթէ, զոր օծն Աստուած հոգւով սրբով և զօրութեամբ, որ շրջեցաւ բարի առնել և բժշկել զամենայն ըմբռնեալսն 'ի սատանայէ, զի Աստուած էր ընդ Նմա»։ Գործք. Դ. գլ. 38 հմր։ «Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, յաւետարանել աղքատաց առաքեաց զիս»։ Ղուկ. Դ. գլ. 18 հմր։

Ինչպէս Մարգարէ կատարեց Քրիստոս մարգարէի ամենն պաշտօն, այսինքն ուսուցանում էր ժողովրդներին, ճանաչեցնում էր Աստուծոյ կամքը և փրկութեան ճանապարհը յայտնում էր նրանց՝ Աստուծոյ դատաստանը և հաստատում էր իր առաքելութիւնը քարոզութեամբ և հրաշքներով։ «ԶՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ, հզօր արդեամբք և բանիւք առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեան»։ Ղուկ. ԻԴ. գլ. 19 հմր։ Ամեն բանով նա գերազանցվում է բոլոր մարգարէներից։ «Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան»։ Կող. Բ. գլ. 3 հմր։ Նրա վերայ մարգարէացաւ Մովսէս. «Մարգարէ յեղբարց քոց իբրեւ զիս յարուցցէ քեզ Տէր Աստուած քո, Նմա լուիջիք»։ Երկ. օրին. ԺԸ. գլ. 15 հմր։ Եւ այս խոստմունքը չ'է յարմար և չ'է վերաբերում ո՛չ մի մարգարէի, որոնք կային մինչեւ 'ի Քրիստոս, բայց միայն Փրկչին։ Ինչպէս Մովսէս ազատեց Եբրայեցիներին Եգիպտոսի ծառայութենէն, այնպէս եւս Քրիստոս ազատեց

մարդկային ազգը մեղքի ծառայութենէ։ Ինչպէս Մովսէս միջնորդ էր հին ուխտին, Յիսուս Քրիստոս եւս միջնորդ է նոր ուխտին։ Մովսէս օրէնք տուող էր միայն Եբրայեցւոց ազգին, բայց Քրիստոս բոլոր մարդկութեանը։ Յիսուս այնքան մեծ է Մովսիսից, ինչքան որդին մեծ է ծառայից։ Յիսուսի տուած ազատութիւնն աւելի կատարեալ և մեծագին է քան Մովսիսինը, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ պատրաստութիւն աւետարանական լուսոյ։ «Մովսէս հաւատարիմ է ամենայն տան նորա, իբրեւ զծառայ, առ 'ի վկայութիւն բանից ասացելոց. այլ Քրիստոս իբրեւ որդի 'ի վերայ տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք»։ Եբր. Գ. գլ. 5—6 հմր։

Քրիստոս է ճշմարիտ Քահանայ։ Հին քահանայապետը պատարագ էր բերում սեղանի վերայ մեղքի թողութեան համար, բարեխօս էր լինում ժողովրդի համար և օրհնում էր նրանց։ Այս էր քահանայապետի իրաւունքը, որ տարին մի անգամ զոհման օրը մտնում էր սուրբ խորանը, այն տեղ զոհ էր անում և Նրա արիւնը մշտկաւ ցանում էր քաւութեան սեղանի վերայ և ժողովրդի համար բարեխօս էր լինում Աստուծոյն, որ ընդունի նրանց զոհը և թողութիւն տայ նրանց մեղքերին։ Պատարագից յետոյ դուրս էր գալի խորանից և Աստուծոյ անուամբ օրհնում էր ժողովրդին։ Այսպէս և Յիսուս Քրիստոս ինքն իրան զոհեց մեր մեղաց թողութեան համար։ «Եւ գնացէք սիրով, որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ և զենումն Աստուծոյ 'ի հոտ անուշից»։ Եփես. Ե. գլ. 2 հմր։ Նա է մեզ համար երկնքումն Բարձրեալ իրա հօր մօտ։ «Եւ եթէ մեղիցէ ոք՝ ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս զարդարն և զանարատն»։ Յովհ. Բ. գլ. 1 հմր։ «Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ Քրիստոս յօրինակս ճշմարտութեանն, այլ 'ի բուն իսկ յերկինս, յանդիման լինիլ երեսացն Աստուծոյ վասն մեր»։ Եբր. Թ. գլ. 24 հմր։

Քրիստոսի զոհը մեծ է հին քահանաների զոհից։ Նրանք մահկանացու էին, մեղաւոր և իրանք եւս հարկաւորութիւն ունէին զոհի իրանց մեղքի համար և նրանց զոհն անկատար

էր և պէտք էր ամեն ժամանակ նորոգուէր. «Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգածեալս տկարութեամբ, իսկ բանն երդմանն յետ օրինացն՝ զորդի որ յաւիտեան կատարեալ է». Եբր. Է. գլ. 28 հմր. Եւ Պօղոս առաքելը մանրամասն խօսում է Քրիստոսի քահանայութեան վերայ. «Զի դեռ ևս յերանս հօր իւրոյ էր, յորժամ ընդառաջ եղև Նմա Մելքիսեդեկ». Եբր. Է. գլ. 10 հմր. Տեսնում ենք ուրեմն՝ թէ ի՞նչքան մեծ և գերազանց է Քրիստոսի քահանայութիւնը՝ քան Ղեւտացւոց քահանայութիւնը.

Յիսուս Քրիստոս մեր Թագաւորն է, ինչպէս յիշվում է Աստուածաշնչումը. «Մեծ է իշխանութիւն նորա և խաղաղութեան նորա չի՛ք սահման. Յաթոռն Դաւթի նստցի և զարքայութիւն նորա յաղթեսցէ». Եսայ. Թ. 7 հմր. «Նա եղիցի մեծ և Որդի բարձրելոյ կոչեսցի. Եւ տացէ Նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ յաւիտեանս». Ղուկ. Ա. գլ. 32 հմր.

Փրկիչն ինքը խոստովանեցաւ Պիղատոսի առաջ, որ ինքն է Թագաւոր. բայց Եբրայեցւոց թիւր դատողութիւնը ուղղելու համար, որոնք կարծումէին թէ Նա պէտք է թագաւորէ այս աշխարհումն, Քրիստոս աւելացրեց այս խօսքերը. «Իմ արքայութիւն չէ՛ յայսմ աշխարհէ». Յով. ԺԸ. գլ. 36 հմր.

Յիսուսի թագաւորութիւնը Հոգեւոր է և Երկնաւոր, որ միայն կարող է մեզ օգնել մեր ամեն հարկաւորութեան ժամանակ. Նրա իսկ թագաւորութիւնն է իր եկեղեցւոյ և հպատակների վերայ, որոնք հաւատում են Նրան և կատարում են Նրա խօսքերը. Թագաւորումէ Նա Նրանց վերայ և Նրանց որդիքների վերայ Իրա Խոսովք և Հոգովք, օգնումէ Նրանց և պահումէ մինչև իր փառաւոր գալստեան օրը. Ուրեմն՝ պարտաւոր ենք մենք խոստովանել Քրիստոսին ճշմարիտ Մարգարէ, ճշմարիտ Քահանայապետ և ճշմարիտ Թագաւոր, որովհետև Նա կատարեց այս երեք պաշտօնը, ինչպէս վկայումէ Ս. Գիրքը. Մենք պէտք է ընդունենք Նրան կենդանի հաւատով օգտաւէտ զոհ մեզ համար և Նրա արդիւնքից սպասենք փրկութիւն. Պէտք է տանք Նրան պատիւ ինչպէս թագաւորի՝ հնազանդելով և ընծայելով Նրան մեր սիրտը. որ Նա մեզ վերայ թագաւորէ յաւիտեան.

Ասելով Մէծին Որդի, ինչպէս և Հանգանակի մէջ, այս Մէծին խօսքով զանազանում ենք Նրա որդիութիւնը մեր որդեգրութենէն. Նա որդի է իրա բնութեամբ, Նա է միայն այս կերպով Որդի Աստուծոյ և սրա մէջն է Նրա Մէծնորը. Իսկ մեր որդիութիւնն Աստուծոյ՝ Նրանով է, այսինքն Նրա ողորմութեամբ և շնորհքով. «Իսկ որք ընկալան զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ, որոց հաւատացին յանուն նորա». Յով. Ա. գլ. 12 հմր.

Ասելով թէ՝ Նա է իրա բնութեամբ որդի Աստուծոյ՝ մենք խոստովանում ենք, որ Նա այն բնութենէն է, որ ունի Աստուած՝ Նրա Հայրը. ուստի՝ Նա է ուրեմն ճշմարիտ Աստուած հաւասար Հօր և Հոգւոյն Սրբոյ. Որովհետև Աստուածային բնութիւնը մէկ է, այս պատճառաւ անուանվում է Նա Որդի Աստուծոյ, որ ծնուած է 'ի յաւիտենից իր Հօրից և Ս. Գրքի մէջ անուանվում է Աղբիւր կենաց և յայտնվումէ Նրա Աստուածային բնութիւնն. «Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս և ետ որդւոյ ունել զկեանս յանձին իւրում». Յով. Ե. գլ. 26 հմր.

Ինչպէս լոյսը ծագումէ լուսոյ, այնպէս որ լուսոյ ճառագայթը հեռանալով իր աղբիւրից չէ զանազանվում և չէ բաժանվում Նրանից, այնպէս ևս Աստուծոյ որդին ծնաւ իրա Հօրից և եկաւ աշխարհ և էր անբաժան Նրանից, այսինքն Նրա Աստուածային բնութենէն. Թէպէտ և Նրա ծնունդն չէ կարող ունենալ իսկապէս նմանութիւն աշխարհումն ոչ մէկ բանի, ոչ արեգակի լուսին, ոչ կրակին և այլն. Այս մեծ ճշմարտութիւնը, որ գերազանցվումէ մեր մտքից՝ յայտնի ուսուցանումէ մեզ Ս. Գիրքը. Նախ՝ որ Յիսուս Քրիստոս է Աստուած. «Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն. Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած». Յով. Ա. գլ. 1—2 հմր. «Որոց հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է 'ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս ամէն». Հռովմ. Գ. գլ. 5 հմր. «Եւ ակն կալցուք երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստ-

«ԱՍՏՈՒԱԾոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Տիտ. Բ. գլ. 13 հմր։
«Զի Ծանիցուք զճշմարիտն և եմք 'ի ճշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի։ Զի նա է ճշմարիտ Աստուածն՝ և կեանք յաւիտենական»։ Յովհ. Ա. թղ. Ե. գլ. 2 հմր։

Երբեմն՝ Աստուածային կատարելութիւնները տուած են Յիսուս Քրիստոսին, ինչպէս են՝ յաւիտենականութիւն, մեծութիւն եւայլն։

Յաւիտենականութիւն. — «Ես եմ այժ և ես եմ քէ, ասէ տէր Աստուած, որ էն և որ է և որ գալոցն է՝ ամենակալ»։ Յայտ. Ա. գլ. 8. հմր։ «Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես»։ Յովհ. Ը. գլ. 58 հմր։

Անփոփոխութիւն. — «Ի սկզբանէ, Տէր, զհիմունս երկրի հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա անցանեն և դու կաս և մնաս յաւիտեան»։ Սաղ. ՃԱ. գլ. 26—27 հմր։ «Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան»։ Եբր. ԺԳ. գլ. 8 հմր։

Ամենակարողութիւն. — «Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ, զի զոր Հայր առնէ զնոյն և որդի նման նմին գործէ»։ Յովհ. ԺԵ. Ե. գլ. 12 հմր։

Ամենագիտութիւն. — «Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյն. զի ինքնին իսկ գիտէր զինչ կրէր 'ի մարդն»։ Յովհ. ԺԵ. Բ. գլ. 25 հմր։ «Եւ ասէ Պետրոս, դու գիտես, զի սիրեմ զքեզ»։ Յովհ. ԻԱ. գլ. 17 հմր։ Եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք, թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս և տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց»։ Յայտ. Բ. գլ. 23 հմր։

Ամենաբնութիւն. — Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ՝ անդ եմ ես 'ի մէջ նոցա»։ Մատ. ԺԸ. գլ. 20 հմր։ «Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի»։ Մատ. ԻԸ. գլ. 2 հմր։

Աբսոլյուտութիւն. — «Ամենայն ինչ նոսա եղև և առանց նորա եղև և ոչինչ, որ ինչ եղեւն»։ Յովհ. ԱԲԳ. Ա. գլ. 3 հմր։ «Զի նոսա հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երեւին և որ ոչն երեւին։ Եթէ աթոռք,

եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նոսա՝ և 'ի նոյն հաստատեցաւ»։ Կող. Ա. գլ. 16 հմր։

Նախախնամութիւն. — «Եւ նա է յառաջ քան զամենայն և ամենայն ինչ նոսա եկաց բովանդակ»։ Կող. Ա. գլ. 17 հմր։ «Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ»։ Յովհ. ԺԵ. Ե. գլ. 17 հմր։ «Որ է լոյս փառաց և նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ»։ Եբր. Ա. գլ. 3 հմր։

Թողութիւն մեղաց. — «Իշխանութիւն ունի որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս»։ Մատ. Բ. գլ. 10 հմր։

Յարութիւն մեռելոց. — «Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի զորս կամի կենդանի առնէ»։ Յովհ. ԺԵ. Ե. գլ. 21 հմր։ «Որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինիլ մարմնոյ փառաց նորա ըստ զօրութեանն առ 'ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրև զամենայն»։ Փիլ. Գ. գլ. 31 հմր։

Երբեմն՝ Սուրբ Գիրքը պատուիրում է մեզ Աստուածային անուն տալ մի միայն Հօր, Որդւոյն և Հոգւոյն Սրբոյ։ Պատուիրում է Աստուածանից միայն երկնչիլ, Նրան միայն սիրել, Նրան միայն նուիրել մեր կեանքը և Նրա պատուիրանքները ջանալ սրբութեամբ կատարել և այս պաշտօնը մեզ համար ամենամեծ պատիւ համարել աշխարհքում։

Եւ երբեմն՝ Քրիստոս չէր արգելում այն մարդկանցը, որոնք Նրան Որդի Աստուծոյ էին անուանում, ինչպէս անուանեցին Պետրոս և Նաթանայէլ, կամ Նրանց, որոնք Աստուած էին անուանում Նրան, ինչպէս Թովմաս։ «Պատասխանի ետ նոսա Սիմովն Պետրոս և ասէ. Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ»։ Մատ. ԺԶ. գլ. 16 հմր։ «Պատասխանի ետ նոսա Նաթանայէլ և ասէ. Ռաբբի, դու ես Որդի Աստուծոյ»։ Յովհ. Ա. գլ. 49 հմր։ «Պատասխանի ետ Թովմաս՝ և ասէ ցնա Տէր իմ և Աստուած իմ»։ Յովհ. Ի. գլ. 28 հմր։

Միածին Որդին, որ է ճշմարիտ Աստուած և յաւիտենական Բան, մարդացաւ, այսինքն առաւ ճշմարիտ բնութիւն մարդկային, բաղկացեալ հոգւոյ և մարմնից, ծնուելովն Սուրբ Կուսէն Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ։ «Հոգին Սուրբ եկեսս

ցէ 'ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո »։ Ղ.ուկ. Ա. գլ. 35 հմբ։ Այս պատճառաւ Նա անուանվումէ Մարդ, Որդի մարդոյ, որով կատարուեցաւ Եսայեայ մարգարէութիւնը. « Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած »։ Եսայ. Է. գլ. 14 հմբ։ Կատարուեցան այն մարգարէութիւնները, որ Մեսիային կը ծնուի Յուդայի ցեղից, Դաւթի ազգից։ « Մի՛ պակասեսցի իշխան 'ի Յուդայ և մի պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ Նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն և Նա է ակնկալութիւն հեթանոսաց »։ Ծնդ. Խթ. գլ. 10 հմբ։ Ըստ որում Ս. կոյսն Մարիամ էր Յուդայի ցեղից և Դաւթի ազգից։ Այս մարգարէութիւնները Հանդանակումը յիշվում են այս խօսքերով « Ծնաւ 'ի Մարիամայ ուրբոյ կուսէն Հոգւոյն Սրբոյ »։ Այս ծնունդը պէտք է լիներ հրաշալի, հեռացած ամեն մարդկային մեղքերից, պատճառն որ՝ Նա պէտք է լիներ Սուրբ և անմեղ քահանայ։ « Զի այսպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս »։ Եբր. Է. գլ. 26 հմբ։

Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդը մեզ համար անիմանալի է և անճառելի, ինչպէս մեր հոգւոյ և մարմնոյ միութիւնը։ Աստուածային բնութիւնը, որ անսահման է և ամենուրեք՝ կարող էր միանալ մարդկային բնութեան հետ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Այս ճշմարտութիւնն է, որ Ս. Գիրքը մեզ ուսուցանում է. « Եւ բանն մարմին եղև, և բնակեցաւ 'ի մեզ »։ Յով. ա.գլ. Ա. գլ. 14 հմբ։

Այս սիրոյ խորհուրդը մեծ խորհուրդ է աշխարհի. « Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն Աստուածպաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղև աշխարհի և վերացաւ փառօք »։ Տիմ. Ա. Ա. Գ. գլ. 16 հմբ։ « Զայն որդւոյ իւրոյ եղելոյ 'ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ »։ Հռով. Ա. գլ. 3 հմբ։ « Որոց հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է 'ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս ամէն »։ Հռով. Թ. գլ. 5 հմբ։

Քրիստոսի մէջ պէտք է խոստովանենք երկու բնութիւն — Աստուածային և մարդկային անշփոթ և անբաժանելի միաւորութեամբ։ Առանց այս խոստովանութեանը չ'ենք կարող մեկնել և իմանալ Աւետարանի զանազան խօսքերն։ Օրինակի համար՝ Քրիստոս ասում է. « Հայր իմ մեծ է քան զիս »։ Յով. ա.գլ. ԺԴ. գլ. 28 հմբ։ Պէտք է հասկանանք, որ Նա այս խօսքն ասում է Իրա մարդկային բնութեան վերայ։ Իսկ երբեմն ասում է. « Ես 'ի Հայր և Հայր յիս է »։ Յով. ա.գլ. ԺԴ. գլ. 10 հմբ։ Այս պէտք է հասկանանք Նրա Աստուածային բնութեան վերայ, և շատ այսպիսի խօսքեր։ Ինչպէս և ասում է Ներսէս Շնորհալին Ընդհանրականի մէջ. « Թէպէտ յղացաւ որպէս զմարդ, այլ 'ի Հոգւոյն Սրբոյ որպէս զԱստուած. Քաղցեաւ որպէս զմարդ և զմեռեաւ յարուցանէր՝ Աստուածային զօրութեամբ, որպէս զԱստուած »։

Հաւատոյ Հանգանակը Քրիստոսի ծննդից յետոյ յիշում է Նրա Չարչարանքը, Խաչելութիւնը, Թաղումն և այլն։ Սրանով ուսուցանում է մեզ, որ Աստուծոյ Որդւոյ մարդեղութիւնը ունէր նպատակ ազատելու մեզ մեր մեղքից՝ Իրա չարչարանքով և մահով։ Թէպէտ Քրիստոսի բոլոր կեանքն չարչարանք էր, թէ՝ թշնամեաց կողմից և թէ՝ ուրիշ մարդկանցից։ Բայց Նա չարչարուեցաւ առաւել Իրա վերջին կեանքում և այս վերջին չարչարանքն է, որ յիշվում է Հանգանակումն այս խօսքերով. « Չարչարեալ »։ պատճառն որ՝ այս վերջին չարչարանքով Քրիստոս ցոյց տուաւ Իրան որպէս Զոհ պատրաստուած մահուան համար, և ցոյց տուաւ Իրան վերայ բոլոր մարդարէութեանց կատարումն, որ մենք կարդում ենք մարդարէների գրքերում Մեսեայի վերայ և մանաւանդ Եսայեայ մարդարէութեան մէջ։

Քրիստոսի Չարչարանքը և Մահը թէպէտ կատարուեցաւ թշնամութեամբ Եբրայեցւոց գլխաւոր քահանաների և Պիղատոսի թուլութեամբ, բայց Ս. Գիրքը մեզ ուսուցանում է, որ այս զոհը մեզ մեր մեղքի դատապարտութենէն փրկելու համար էր։ Կարճ ասենք՝ Քրիստոս զոհ եղաւ, որ մեզ արդարացնէ և յաւիտենական կեանք տայ։ Յովհաննէս Մկրտիչն նմանեցնում է Նրան Գառան, որ մորթում էին Եբրա-

յեցիք պասէքի ժամանակ, ասելով. «Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի»։ Յով. առաք. Ա. գլ. 29 հմր։ «Եւ Նա է քաւութիւն մեղայ մերոց. և ոչ թէ մերոցն միայն, այլ ամենայն աշխարհի»։ Յով. Ա. ընդ. Բ. գլ. 2 հմր։ «Զի այն՝ որ ոչն գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար, զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ»։ Կորն. Բ. ընդ. Ե. գլ. 21 հմր։ Հաղորդութեան խորհուրդն հաստատելով Քրիստոս ինքն ևս ասումէ. «Առէ՛ք կերայք՝ այս է մարմին իմ. . . . Արբէ՛ք ՝ի դմանէ ամենեքին։ Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՝ի վերայ բազմաց հեղու ՝ի թողութիւն»։ Մատ. ԻԶ. գլ. 26—28 հմր։ Մարգարէքն ևս յիշումեն այս Զոհն, որ է Քրիստոս։ «Իբրև զոչխար ՝ի սպանդ վարեցաւ, իբրև որոյ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ո՛չ բանայ զբերան իւր»։ Եսայ. ԾԳ. գլ. 7 հմր։ Քրիստոս ինքն յայտնումէ իրան կամաւոր զոհ լինելն. «Ոչ ոք հանէ զնա յինէն (զանձն իմ) այլ ես դնեմ զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ դնել զնա. և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի ՝ի Հօրէ իմմէ»։ Յով. առաք. Ժ. գլ. 18 հմր։

Հանգանակը յիշելով Քրիստոսի խաչելութիւնը մեր միտն է բերում՝ թէ ի՞նչպիսի ցած և անպատիւ տանջանքի պատժով մեռաւ Քրիստոս։ Խաչով պատժուելն Եբրայեցւոց մէջ համարուած էր անիծեալ։ Քրիստոս՝ ինչպէս փարատող ամենայն մեղքի և անէծքի, որ մարդուս վերայ էր, յանձն առաւ այս անիծեալ տանջանքի պատիժն և այսպիսի մահով էլ ահա, որ Նա մօտեցնումէ մեզ Աստուծոյն։ «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք, զի գրեալ է, թէ անիծեալ է ամենայն (մարդ) որ կախեալ կայցէ զփայտէ»։ Գաղատ. Գ. գլ. 13 հմր։ «Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ո՛չ Նովաւ հանդերձ զամենայն շնորհեսցէ մեզ»։ Հռով. Ը. գլ. 32 հմր։

Քրիստոսի խաչով մենք կարող ենք ստանալ ամեն օգնութիւն, որ մեզ հարկաւոր է կեալ և չարչարուիլ ինչպէս Քրիստոնեայ։ Քրիստոսի խաչն կարող է մեզ տալ ողորմութիւն, զօրութիւն և միխիթարութիւն։ Քրիստոսի խաչն է միայն Քրիստոնէից փառքն ու պարծանքը, ինչպէս ասումէ Պօղոս. «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ՝ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ՝ի խաչ ելեալ է և ես աշխարհի»։ Գաղ. Զ. գլ. 14 հմր։

Մահից յետոյ Հանգանակումն յիշվումէ Քրիստոսի թաղումն, պատճառն որ՝ թաղումն իրա բոլոր հանգամանքներով հաստատումէ Նրա ճշմարիտ մահն, և Նրա թաղմամբ կատարուեցաւ այս մարգարէութիւնը, որ Նա կ'ունենայ պատուական գերեզման։ «Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նորա և զմեծամեծս փոխանակ մահու նորա»։ Եսայ. ԾԳ. գլ. 9 հմր։

Թաղումից յետոյ յիշվումէ Քրիստոսի Յարութիւնն յերրորդ աւուր, որով կատարուեցաւ Նրա առաջուց ասած խօսքն Իրա Յարութեան վերայ։ «Եւ յերիր աւուր յառնել»։ Մատ. ԺԶ. գլ. 21 հմր։ Պատճառն այս է, որ երեքօրեայ թաղումն բաւական էր ճշմարտելու Նրա մահն։ Բայց Նրա մարմինն չէր պէտք է տեսնէր ապականութիւն։ «Զի ո՛չ թողցես զանձն իմ ՝ի դժոխս և ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն»։ Սաղ. ԺԵ. գլ. 10 հմր։

Յարութիւնն յետոյ յիշվումէ Քրիստոսի Համբարձումն, որոյ համար ասելէր աշակերտներին։ «Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զորդի մարդոյ՝ զի երանիցէ՝ ուր էր զառաջինն»։ Յով. առաք. Զ. գլ. 63 հմր։ Ճշմարիտ որ՝ Նա պէտք է համբառնար, պէտք է բռնէր Իրա տեղն, որ թողեց մեր փրկութեան համար, պէտք է նստէր այն տեղ, որպէս Որդի մարդոյ, իբրև հաստատումն իր կատարեալ հնազանդութեան և անսահման սիրոյ առ Հայրն իւր, որ մեզ ցոյց տուաւ Իրա չարչարանքով և մահով։ «Որ ՝ի կերպարանս Աստուծոյ է, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ չէր լինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի առեալ, ՝ի նմանութիւն մարդկան եղեալ և կերպարանօք գտեալ իբրև զմարդ»։ Փիլ. Բ. գլ. 6 հմր։ Քրիստոսի այս փառքը Հաղանակումը յիշվումէ այսպէս. «Նստաւ ընդ աջմէ Հօր»։

Աստուած Հոգի լինելով այս խօսքերը պէտք է իմանանք այնպէս, ինչպէս յարմար է Նրա Հոգեւոր բնութեանը։ Հանգանակի մէջ Աջ ասելով ինչպէս ասում է և Դաւիթ մարգարէն. «Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»։ Սաղ. ճԹ. գլ. 1 հմ. Նշանակում է ցաղանՒՒՒ Աստուածային վառաց։

Այս սովորութիւնը ունէին Հարաւային թագաւորներն, որ իրանց աջ կողմումը նստեցնում էին, և շատ անգամ իրանց աթոռի վերայ, այն մարդկանցը, որոնց պատվում էին և մեծ էին համարում։ Սողոմոնն ևս իրան մօրն իր աջ կողմն նստեցրուց։ Յովհաննու և Յակոբի մայրն խնդրեց Քրիստոսից աջ կողմն նստեցնել իր որդւոց մինն։ «Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովք իւրովք հանդերձ, երկիրպագանէր՝ և խնդրէր ինչ 'ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս։ Ասէ ցնա, ասա՛ զի նստցին սոքա երկու որդիք իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութեան քում»։ Մատ. Ի. գլ. 20—21 հմ։

Հանգանակի մէջ յիշած խօսքերի միտքն այս է, որ Քրիստոս բարձրացաւ երկնային հոգիներից աւելի բարձր, կառավարում է մեզ, թագաւորում է մեզ վերայ, օգնում է իր եկեղեցւոյն, ինչպէս Պօղոս առաքեալն ասում է. «Զոր յաջողեաց 'ի Քրիստոս, զի յարոյց զնա 'ի մեռելոց՝ և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս 'ի վերայ ամենայն իշխանութեան, և պետութեան և զօրութեան, և տէրութեան և ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն աշխարհիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձելումն»։ Եփես. Ա. գլ. 20—21 հմ։

Փրկիչն մեր երկինքն համբառնալով՝ խոստացաւ բարեխօս լինիլ մեզ համար առ Հայր, որով և շարունակեց իր քահանայութեան պարտաւորութիւնը։ Ինչպէս հին ուխտի քահանայապետը մտնում էր Սրբութեան խորանը զոհի արիւնով և բարեխօս էր լինում առ Աստուած ժողովրդի համար, այնպէս ևս Քրիստոս, Նոր ուխտի գլխաւոր քահանայապետը, մտաւ բարեխօսելու՝ ոչ թէ ձեռքով շինած

տաճարն, այլ անձեռագործն. «Զի ոչ եթէ 'ի ձեռագործ Սրբութիւնսն եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն, այլ 'ի բուն իսկ յերկինս, յանդիման լինիլ երեսացն Աստուծոյ վասն մեր»։ Եբր. Թ. գլ. 24 հմ, և բարեխօսում է մեզ համար։ «Եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատ»։ Յով. Ա. ընդ. Բ. գլ. 1 հմ։ Երկինքն համբառնալով՝ բաց արաւ մեզ համար Քրիստոս երկնային դուռն, պատրաստեց մեզ համար տեղի երկնային ժառանգութեան, շնորհեց մեզ Աստուածային ողորմութիւնը, դառնալով մեր գլուխն՝ մեզ իրան անդամ շինեց։ «Ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս 'ի Քրիստոս Յիսուս»։ Եփես. Բ. գլ. 6 հմ։ Երկինքը համբառնալով՝ խոստացաւ իր աշակերտներին ուղարկել Հոգին Սուրբ և նրանցով բոլոր աշխարհին։ «Լաւ է ձեզ, եթէ ես երթամ, զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ՝ առաքեցից զնա առ ձեզ»։ Յով. Ա-ԻԳ. ԺԶ. գլ. 7 հմ։

Ինչպէս որ՝ Որդին Աստուծոյ մարդկային սիրոյ համար առաւ մարդկային բնութիւն, նոյնպէս ևս կամենում է, որ մենք ևս մասնակից լինինք Նրա Աստուածութեանը։ Սրա համար տալիս է նա մեզ իրա Հոգին, որ պատրաստ է մեզ եւ մենք ունենանք հաղորդութիւն Նրա Աստուածութեան հետ։

Հանգանակն մեր միան է բերում, որ Յիսուս Քրիստոս պէտք է դայ իրա փառքով՝ կենդանիներին և մեռեալներին դատելու համար։ Այս վերջին գլուխն Քրիստոսի, որ յիշվում է Սուրբ Գրքի մէջ, պէտք է լինի աշխարհքիս վերջումն, ինչ ժամանակ Նրա թագաւորութիւնն բոլոր աշխարհքումը կը հաստատուի։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

« Հաւատամք եւ ի Հոգին Սուրբ » եւ այլն։

Հաւատալ ի Հոգին Սուրբ նշանակում է հաւատալ այն ամենայն բանին, ինչ որ ուսուցանում է մեզ Սուրբ Գիրքը Հոգւոյն Սրբոյ վերայ, զգալ Նրա օգնութեան և ողորմութեան կարօտութիւնը և հարկաւորութիւնը, խնդրել Ջերմեռանդութեամբ Նրանից շնորհք և ողորմութիւն և զօրութիւն՝ Նրա տուած շնորհքներն գործ դնելու։

Սուրբ Գիրքն ուսուցանում է մեզ՝ թէ ի՞նչ է Հոգին Սուրբն ինքն ըստ ինքեան և ի՞նչ է՝ վերաբերելով առ մեզ։ Ուսուցանում է թէ՝ ինքն ըստ ինքեան Հոգին Սուրբն է Երրորդութեան մի անձն, նոյնպէս անսահման, յաւիտենական և ճշմարիտ Աստուած ընդ Հօր և ընդ Որդւոյ։ « Զի երեք են որք վկայեն յերկինս. Հայր, Բանն և Հոգին Սուրբ »։ Յով. Ա. Ընդ. Ե. գլ. 7—8 հմր։ Սուրբ Գիրքն Նրան խոստովանում է Աւետարան. « Ասէ Պետրոս. Անանիա, ընդէր եղիր Սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն Սրբոյ. ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ »։ Գործ. Ե. գլ. 3—4 հմր։ « Ո՞չ գիտէք, եթէ տաճար է՛ք Աստուծոյ և Հոգի Աստուծոյ բնակեալ է՝ ի ձեզ »։ Կորն. Ա. Ընդ. Գ. գլ. 16 հմր։

Սուրբ Գիրքը տալիս է Հոգւոյն Սրբոյ աստուածային կատարելութիւններ. — Աղանդաւորներն. « Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։ Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես. և եթէ իջանեմ՝ ի դժոխս և անդր մնամ ես »։ Սաղ. ՃԼԹ. գլ. 7—8 հմր։

— Աղանդաւորներն. — « Այլ յայտնեաց մեզ Աստուած Հոգւովն իւրով, զի Հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ։ Կորն. Ա. Ընդ. Բ. գլ. 10 հմր։

— Արիանոսներն. — « Եւ երկիր էր աներեւոյթ և անպատրաստ և խաւար՝ ի վերայ անդնդոց. և Հոգի Աստուծոյ շրջէր՝ ի վերայ ջրոց »։ Ծնն. Ա. գլ. 2 հմր։

— Յոյներն. « Բանդի՝ ո՛չ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ՝ ի Հոգւոյն Սրբոյ

կրեալք խօսեցան մարդիկ յԱստուծոյ »։ Պետ. Բ. Ընդ. Ա. գլ. 21 հմր։

— Աստուածային պաշտօն. « Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ »։ Մատ. ԻԸ. գլ. 19 հմր։ « Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Սէրն Աստուծոյ, և հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ, ընդ ձեզ ամենեսին »։ Կորն. Բ. Ընդ. ԺԳ. գլ. 13 հմր։

Ամենք պէտք է որոշենք Հոգին Սուրբն Իրա տուած շնորհքներից։ Սուրբ Գիրքն որոշելով Հոգին Սուրբն Իրա տուած շնորհքներից, ցոյց է տալիս մեզ, որ մենք խոստովանենք Նրան՝ ո՛չ թէ իբրև հասարակ զօրութիւն Աստուծոյ, այլ որպէս մէկ անձն Սուրբ Երրորդութեան։ « Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է »։ Կորն. Ա. Ընդ. ԺԲ. գլ. 4 հմր։ « Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան »։ Եփես. Դ. գլ. 30 հմր։

Հոգին Սուրբն է ճանաչող. — « Եւ զԱստուծոյն ո՛չ ոք գիտէ, եթէ ո՛չ Հոգին Աստուծոյ »։ Կորն. Ա. Ընդ. Բ. գլ. 11 հմր։ Նա է Միքայէլ. — « Այլ զայս ամենայն յաջող է մի և նոյն Հոգի, բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի »։ Կորն. Ա. Ընդ. ԺԲ. գլ. 11 հմր։ Նա է Ուսուցիչ. — « Այլ մեք՝ ոչ եթէ զՀոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին որ յԱստուծոյ, զի ծանիցուք զայն, որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ »։ Կորն. Ա. Ընդ. Բ. գլ. 12 հմր։ « Եւ զոր խօսիմքս ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն ընդ հոգեւորս զՀոգեւորսն համեմատեմք »։ Կոր. Նոյն գլ. 13 հմր։ « Նա է Վկայ և Բուսիչ. — « Նոյն ինքն Հոգին վկայ է հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ »։ Հռով. Ը. գլ. 16 հմր։ « Այլ ինքն Հոգին բարեխօս լինի՝ ի հեծութիւնս անմուն։ Զի ըստ Աստուծոյ բարեխօս է վասն սրբոց »։ Հռով. Նոյն գլ. 27 հմր։

Վերաբերելով առ մեզ՝ Հոգին Սուրբն է Աղբիւր գթութեան Աստուծոյ ընդ մարդկան։ Նա է յատուկ և անդադար ներգործող մեր փրկութեան համար։ Նա է միացնող մեզ

ճշմարիտ հաւատով Քրիստոսի հետ։ Նա է արժանացնող Քրիստոսի ողորմութեանը՝ նորոգելով մեզ և սրբելով։ «Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և 'ի Հոգւոյն Աստուծոյ մերոյ»։ Կորն. Ա. Նոր Ե. գլ. 11 հմր։ Հոգին սուրբն է մեր Ո-ւրախութիւնն ի Խաղաղութիւն. «Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն 'ի Հոգւոյն սուրբ»։ Հռովմ. ԺԴ. գլ. 17 հմր։ Նա է Նշան, որով Քրիստոս մեզ ճանաչում է. «Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան»։ Եփես. Դ. գլ. 30 հմր։ Նա է մեզ տալիս ղբրութիւն ի կարողութիւն Աստուծոյն անուանելու Հայր։ «Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի որդւոյն 'ի սիրտս մեր, որ աղաղակէ աբբայ հայր»։ Գաղ. Դ. գլ. 6 հմր։

Հոգւոյն սրբոյ շնորհքներն բաժանվում են երկու. — Հրաշալի և Հասարակ։ Հրաշալիքը տուաւ Աստուած առաքեալներին և մարգարէներին. իսկ հասարակներն ամենայն մարդկան։ Հրաշալի շնորհքները ստացան առաքեալներն և մարգարէներն, որով կատարեալ իմացան Աւետարանի ճանաչողութիւնն և կարողացան խօսիլ զանազան լեզուներով, մարգարէանալ և հրաշագործել։ Առաքեալներն ստացան այս շնորհքներն, որով կարողացան քարոզել Աւետարանն բոլոր աշխարհին և ցոյց տալ, որ Նրանց առաքելութիւնն երկնային է և ուսումն՝ Աստուածային։ «Եւ բանն իմ և քարոզութիւն, ոչ պատիր բանիւք իմաստութեան, այլ արդեամբ Հոգւոյն և զօրութեամբ»։ Կորն. Ա. Նոր Բ. գլ. 4 հմր։ «Զի Աւետարանն մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրութեամբ և հոգւով սրբով»։ Թեսաղ. Ա. Նոր Դ. գլ. 8 հմր։ Գործք Առաքելոցը մեզ իմաց է անում, որ ինչպէս Առաքեալներն, նոյնպէս և ամեն ճշմարիտ հաւատացեալներն՝ Քրիստոնէական Եկեղեցւոյ հաստատութեան սկզբումը գործում էին հրաշքներ։ Բայց երբ Եկեղեցին բաւական հաստատուեցաւ, որ հասարակ քահանաներն անդամ կարողանում էին քարոզել Աւետարանն և կատարել իրանց եկեղեցին՝ կարօտութիւն չը մնաց այս արտաքին հրաշագործութեանց։ Մենք պէտք է ուրախանանք, որ մեզ տուած են հասարակ շնորհքներ, որոնք կարող են նորոգել, այսինքն տալ մեզ հաւատ, սրբութիւն և մխիթարութիւն։ Պէտք է ուրախանանք, որ Հոգւոյն Սրբոյ այս շնորհքներով տակաւին այս աշխարհումն կարողանում են ճաշակել յաւիտենական երջանկութիւն և ընդունակ լինել փրկութեան։ Առաքեալն խօսելով հրաշալի շնորհքների վերայ՝ յորդորում է որ աւելի օգտաւէտ շնորհքներ որոնեն։ «Բայց՝ նախանձաւորք լերուք շնորհացն, որք լաւքն են»։ Կորն. ԺԲ. գլ. 31 հմր, և գովում է Սէրն առ Աստուած ի առ ընկերն։

Հոգւոյն Սրբոյ տուած հասարակ շնորհքները բազմաթիւ են և զանազան։ Այս կարգումն կարելի է դնել ամենից առաջ այն ճանաչողութիւնն, որ մենք ստանում ենք՝ կարդալով և քարոզելով Աստուծոյ խօսքը։ Սա եւս Հոգւոյն Սրբոյ շնորհքն է, պատճառն որ նրա զօրութեամբ գրեցին Ս. Գիրքն Մարգարէներն և Առաքեալներն։ Աստուած տալիս է մեզ հասարակ շնորհքները բարի գործքով, բարի սնունդով, բարի օրինակով և տալիս է այս ողորմութիւններն այս կեանքում արտաքին միջոցներով։

Այս պատճառաւ ահա՛ Հոգւոյն Սրբոյ շնորհքն պէտք է զանազանենք մոլեկրօնութենէ։

Ա. Մոլեկրօնութիւնը արհամարհում է Շնորհքի արտաքին միջոցների օգնութիւնն. իսկ ընդ. հակառակն՝ Շնորհքն այս օգնութիւնն չինում է իրա համար հիմն և գործ է ածում իրա նպատակի համար։

Բ. Մոլեկրօնութիւնը կամենում է որ Աստուծոյ ներգործութիւնը լինի միշտ զգալի կերպիւ, ինչպէս տեսնում ենք Առաքելոց վերայ. իսկ ընդ. հակառակն՝ Շնորհքն ներգործում է ծածուկ և անզգալի։ «Զի հողմն ուր կամի շնչէ և ձայն նորա լսես, այլ ո՛չ գիտես ուստի գայ կամ յո՞ երթայ, սոյնպէս և ամենայն ծնեալն 'ի Հոգւոյն»։ Յովհ. գլ. Գ. գլ. 8 հմր։

Գ. Մոլեկրօնութիւնն հեռացնում է ամենայն քննութիւն

և դատողութիւն և հետեւում է իրա վառուած երեւակայութեանը. իսկ ընդհակառակն՝ Շնորհն տալիս է մեր մտքին զօրութիւն և չէ արգելում մտքի քննութիւնը կամ դատողութիւնը.

Դ. Մոլեկրօնութիւնն չանք է անում աւելի առաջ դնալ Աւետարանի ուսմունքից, իսկ ընդհակառակն՝ Շնորհն չէ որոնում նոր յայտնութիւն.

Ե. Մոլեկրօնութիւնը թոյլ է տալի որ մնան իրան մէջ չարութիւններ, այսինքն շնութիւն, արծաթասիրութիւն և այլն և առ հասարակ ազատութիւն չէ տալիս ուրիշ դաւանութեանց, այլ հալածում է և նեղում. իսկ ընդհակառակն՝ Շնորհն ունի իրա նշանն — այն է Մարդասէրութիւն և Սքանչութիւն.

Մեր միտքը հաստատում է, որ Հոգին Աստուծոյ ունի ներգործութիւն մեր հոգւոյ վերայ. Մեր տկարութիւնը հարկադրում է մեզ զգալ և խոստովանիլ մեր հարկաւորութիւնը և կարօտութիւնը Աստուծոյ շնորհքին և յոյս է տալի՝ որ ամենեցուն Արարիչ Հայրն չէ խնայում երբէք, այլ տալիս է իր օգնութեան և միխիթարութեան Հոգին.

Սուրբ Գիրքն ուսուցանում է, որ մենք բնաւ չը պէտք է երկմիտ լինինք, երբոր խնդրում ենք Աստուածանից օգնութիւն Նրա պատուիրանքները կատարելու համար. Սուրբ Գիրքն ասում է՝ Աստուածն է որ շարժում է մեր Հոգին իրա բարերարութեամբ և ուղղում է իրա պատուիրանքն կատարելու. «Զի Աստուած է, որ յաջող է 'ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան». Փիլ. Բ. գլ. 13 հմր. Նմանապէս ուսուցանում է, որ Հոգին Սուրբ բնակում է իրա ճշմարիտ պաշտողների մէջ և այս պատճառաւ նրանք անուանվում են Տաճար Աստուծոյ. «Ո՛չ գիտէք, եթէ տաճար է՛ք Աստուծոյ և Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ». Կորն. Ա. ԹՂ. Գ. գլ. 18 հմր. Սուրբ Գիրքն ուսուցանում է, որ Հոգին Սուրբն է, որ ծնանում է մեր մէջ քրիստոնէական առաքինութիւն. «Իսկ պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն». Գաղ. Ե. գլ. 22—23 հմր. Ուսուցանում է նոյնպէս թէ՝ Աստուած է որ բաց է անում մեր սիրտը իրա խօսքի համար և տալիս է հասկացողութիւն և մենք առանց Հոգւոյն Սրբոյ օգնութեան ոչինչ ենք, եթէ ո՛չ շնչաւոր կենդանի, որ կարող չ'է հասկանալ Աստուծոյ բանը. «Բանդի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա և ոչ կարէ գիտել, եթէ հոգեւոր քննիցի». Կորն. Ա. ԹՂ. Բ. գլ. 14 հմր.

Հոգւոյն Սրբոյ ամեն շնորհքները մենք կարող ենք ստանալ, Ա. Հեղութեամբ սրտի, զգալով Նրա շնորհքների հարկաւորութիւնը. «Զքաղցեալս լցոյց բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունայնս». Ղուկ. Ա. գլ. 53 հմր.

Բ. Աղօթքով — «Ապա թէ ո՞ք 'ի ձէնջ լցէ նուաղեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ՝ որ տայն ամենայնի առատապէս՝ և ոչ նախատէ և տացի նմա». Յակ. Ա. գլ. 5 հմր. Ուրեմն՝ մարդս կառավարվում է Աստուծոյ շնորհքով և ազատութեամբ, ծառայ է նա իրա բնական տկարութեամբ, ազատ է աղօթքով, իրանիցն է կախուած խնդրել և ստանալ զօրութիւն, որովհետեւ ինքն ըստ ինքեան չունի զօրութիւն.

Գ. Գործ դնելով Աստուածանից ստացած շնորհքն. Մոլորութիւն է ասասել՝ թէ մենք միայն մեր կարողութեամբ կարող ենք ամեն բան անել. Մոլորութիւն է նոյնպէս ասել՝ թէ առանց մեզ՝ կ'անէ Աստուած մեզ համար ամեն բան. այլ ընդհակառակն՝ մենք եւս մեր կողմից պէտք է գործ դնենք այն ամենայն հնարքներն, որ Աստուած տալիս է մեզ, այն է կարդալ Նրա խօսքն, մոռածել Նրա օրէնքի վերայ, արթուն կենալ և հետեւիլ այն բարի մտքին, որ ծնանում է մեր մէջ Աստուածային խօսքը. Այս պայմանով կարող է մարդ ստանալ Աստուածային շնորհքն և չատացընել կամ շահեցնել. պատճառն որ՝ ինչ մարդ ունեցած շնորհքն չէ գործ դնում, Աստուած նրանից առնում է և տալիս է նրան, որ յօժար է գործ դնելու. «Զի որ գուցէ տացի նմա և յաւելցի և որ ոչն գուցէ և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ». Մատ. ԺԳ. գլ. 12 հմր. Իսկ ընդհակառակն՝ եթէ մենք առ ոչինչ ենք համարում այս Աստուա-

ծային շնորհքներն և չ'ենք գործ դնում, կամ գործ ենք դնում չարութեամբ, այս նշանակում է մեղանչել, որ Սուրբ Գիրքն անուանում է պրպտիչներ ու շնչոտներ Հոգին Սուրբ մեր մէջ։ «Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան»։ Եփես. Դ. գլ. 30 հմտ։ «ԶՀոգին մի՛ շիջուցանէք»։ Թես. Ա. Ե. գլ. 19 հմտ։

Տեսնում ենք ահա՛, որ պէտք է հաւատանք 'ի Հոգին Սուրբ, որ գործակից է ընդ Հօր և ընդ Որդւոյ մեր փրկութեան համար։ Եթէ մենք չ'ենք հաւատում թէ ի՞նչ է Հոգին Սուրբ, ի՞նչ է արել մեզ համար և կամ ի՞նչ է կամենում անել մեր մէջ՝ նշանակում է որ մենք չ'ենք կամենում հաղորդութիւն ունենալ Նրա շնորհքի հետ։ Մենք չենք կարող ստանալ Նրա շնորհքներն, միշտ կը մնանք մեղքի մէջ և չ'ենք լինիլ Քրիստոնեայ։ «Բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով. եթէ իսկ Հոգին Աստուծոյ 'ի ձեզ բնակեալ, ապա եթէ ոք զՀոգի Քրիստոսի ո՛չ ունի, սա չ'է նորա»։ Հռովմ. Ը. գլ. 9 հմտ։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

«Հաւապամբ 'ի մի դիպն ընդհանրական եւ առաքելական Սուրբ Եկեղեցի» Եւայլն։

Եկեղեցին է հաւաքումն այն մարդկանց, որոնք հաւատում են Յիսուս Քրիստոսին։ Այն մարդիկը, որոնք հաւատում էին Առաքեալների քարոզութեանը և ընդունում էին Աւետարանը՝ բնական էր, որ նրանք որոշուել էին Հեթանոսներից և Եբրայեցիներից՝ Աստուծոյն պաշտելու համար հոգւով և ճշմարտութեամբ. ինչպէս առաջին անգամ այսպէս հիմնուեցաւ Երուսաղէմում Եկեղեցին։ Այս հաւատացեալներն հիմնեցին միաբանութիւններ, որ անուանում էին Յունաց լեզուով Եկեղեցի, այսինքն ժողով։ Թէ այս հաւատացելոց ժողովները և թէ սրանց հետեւող միւս ժողովները և թէ հին ուխտի ճշմարիտ պաշտողները՝ մի և նոյն հաւատով և յուսով միանալով իրար

հետ՝ կազմում են ընդհանուր միաբանութիւն Քրիստոնէից, որ անուանում ենք Սուրբ, ընդհանուր Եկեղեցի։

Հաւատացեալների այս ժողովները՝ ինչպէս որ յայտնում են իրանց արտաքին երեւելի միութիւնն 'ի Քրիստոս, նոյնպէս պէտք է ունենան և ներքին հոգեւոր միութիւն 'ի Քրիստոս, և այս անտեսանելի միութիւնն յայտնի է միայն հաւատացողին, թէ ունի՞ արդեօք սրբութիւն, եթէ ո՛չ, և յայտնի է Աստուծոյն, որ սրտագէտն է ամենայնի, սրա համար է որ Քրիստոս ասում է. «Բաղումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք»։ Մատ. ԺԲ. գլ. 14 հմտ։ Կամ նմանեցնում է ուռկանի. «Նման է արքայութիւն Աստուծոյ ուռկանի արկելոյ 'ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ»։ Մատ. ԺԳ. գլ. 48 հմտ։ Այս հոգեւոր եկեղեցւոյ համար է ասում Սարգիս Շնորհալին. «Յամենայն ազգաց և լեզուաց, որք աշակերտեցան Աւետարանին և 'ի վէմն Քրիստոս հաւատովք մերձեցան՝ յամենեցունց մի տաճար հոգեւոր և մի եկեղեցի շինեցաւ։ Այս հոգեւոր Եկեղեցին էր, որ փառաւորում էին մեր նահատակներն. — «Եկեղեցիք ո՛չ են պարգեւք թագաւորաց և ո՛չ արուեստ ճարտարութեանց, եւ ոչ դիւաք խմաստնոց և ոչ աւար քաջութեան զինուորաց և ոչ պատիր խաբէութիւնք դիւաց....։ Այլ շնորհք են մեծին Աստուծոյ. ոչ միում ումեք 'ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց, որք վիճակեալք են 'ի բնակութիւն 'ի ներքոյ արեգականս»։ Եղիշէ։

Եկեղեցին անուանվում է Ընդհանրական, պատճառն որ՝ նա չէ սահմանվում մէկ ազգով, ինչպէս Եբրայեցւոց հին ուխտի եկեղեցին, այլ հաւաքումն է ամեն ժամանակի և ամեն երկրի հաւատացեալների, Ադամից սկսած մինչեւ 'ի կատարած աշխարհի։ «Մի եկեղեցի անուանիմք ամենայն քրիստոնեայքս». ասում է Ներսէս Լամբրոնացին։ Ամենայն Նահապետք և Մարգարէք, որոնք փրկութեան յոյսը դրել էին Մեսիայի վերայ՝ են անդամք Եկեղեցւոյ, ինչպէս և մենք Քրիստոնեայքս՝ Աւետարանով։ «Նմա ամենայն մարգարէքն վկայեն զթողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոյ»։ Գործ. Ժ. գլ.

43 հմբ։ Սուրբ գիրքը նմանեցնում է Եկեղեցին շինուածի, որի գաղափարը Աստուած իր յաւիտենական խմաստութեան մէջ ծրագրեց և դրեց Նրան հիմ, որ է Քրիստոս, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Զի հիմն այլ ոչ ոք կարէ դնել, քան զեղեալն որ է Յիսուս Քրիստոս»։ Կորն. Ա. Նամ. Գ. գլ. 11 հմբ։ Նա է վէմ, որ պահում է և պաշտպանում բոլոր շինուածն և Եկեղեցւոյ անդամներն են նիւթ այս շինուածքի. «Դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորն պատարագս հաճոյս Աստուծոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Դուք ազգ է.ք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրեցէք.յայն՝ որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յլիւր սքանչելի լոյսն»։ Պետ. Ա. Նամ. Բ. գլ. 5—9 հմբ։ Սուրբ Գիրքն երբեմն նմանեցնում է եկեղեցին Մարմնոյ, որոյ անդամներն կապուած են ամուր կապով և լի են կենդանութեամբ, որոնց գլուխն է Քրիստոս. «Այլ ճշմարտեալք սիրով աճեսցուք 'ի նմա զամենայն, որ է Գլուխ Քրիստոս, ուստի ամենայն մարմին յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք տարբերութեան ըստ ազդեցութեան չափով ըստ իւրաքանչիւր մասին զաճումն մարմնոյ գործէ 'ի շինուած անձին իւրոյ սիրով»։ Եփես. Դ. գլ. 16 հմբ։

Եկեղեցւոյ կոչումն լինելով մի հօտ հաւատացելոց Հրէաներից և Հեթանոսներից և ունենալով զ Հովիւ, զ Փրկիչ և զ Տէր Յիսուս Քրիստոս, այս պատճառաւ՝ Հանգանակի մէջ ասուելով Ընդհանրական՝ ասվում է և Մի, ինչպէս ասում է պօղոս առաքեալն. «Որք միանդամ 'ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ է.ք, չի՛ք խաիր, ոչ Հրէի, և ո՛չ Հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի. ոչ արուի և ո՛չ իգի, զի ամենեքեան դուք զ է.ք 'ի Քրիստոս Յիսուս»։ Գաղ. Գ. գլ. 27 հմբ։

Հաւատալ յընդհանրական Եկեղեցի նշանակում է դէպ՝ հաւատալ որ ըստ խոստման Յիսուսի Քրիստոսի է և կը լինի Եկեղեցի աշխարհիս երեսին ընտրուած կամ կոչուած 'ի

փրկութիւն Աստուածային հոգւով։ Երկրորդ՝ հաւատալ, որ մենք կենդանի անդամ ենք Եկեղեցւոյ։ Ընդհանուր Եկեղեցին բովանդակում է իրան մէջ յատուկ եկեղեցիներ, որոնք ունին զանազան անուններ ըստ ազգի և ըստ տեղւոյ. ղորօրինակ կորնթացւոց, Հռովմայեցւոց, Երրայեցւոց, Հայաստանեաց և այլն։ Հայաստանեայց Եկեղեցին որ է Սուրբ, ընդհանրական և Առաքելական Եկեղեցի, հիմնուեցաւ Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց քարոզութեամբ (1)։

Եկեղեցին անուանվում է Սուրբ, պատճառն որ՝ նա որոշվում է աշխարհից, նուիրվում է Աստուծոյ ծառայութեանը և նրա անդամներն ուխտ են դնում կենալ սրբութեան մէջ և դանում են եկեղեցում ամեն տեսակ օգնութիւններ, որոնց կարօտ են։ «Որպէս և սիրեաց Քրիստոս զեկեղեցի և զանձն իւր մատնեաց վասն նորա. զի նա սրբեացէ զնա աւազանին բանիւ, զի կացուցցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ ապատ, կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի լիցէ սուրբ անարատ»։ Եփես. Ե. գլ. 25—26 հմբ։ Այս Սուրբ անունը տալիս ենք Եկեղեցւոյն դարձեալ այն պատճառաւ՝ որ նա հեռացնում է և հեռի է ամենայն ծուռ և թիւր վարդապետութիւններից և ունի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ինչպէս են Մկրտոնիան, Դրոշ, Ապոլինարոնիան և այլն։

Մկրտութիւնն է սուրբ խորհուրդ՝ որով ընդունվում ենք Եկեղեցում, լուացվում ենք սկզբնական մեղքից և կնքվում ենք անդամք լինել Եկեղեցւոյն։

Մկրտոնիան բառը նշանակում է լուանալ։ Այսօր էս այս խորհուրդը կատարում է Հայաստանեայց Եկեղեցին մի և նոյն ձեւով անփոփոխ, ընկղմելով երեխային երեք անգամ ջրի մէջ և ասելով. «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։

Մկրտութիւնը հին է. Երրայեցի.ք ունէին սովորութիւն մկրտելու հեթանոսներին, որոնք կամենում էին նուիրուած

(1) Այսքան դարերից հետ յարատեւում է նոյն հիման վերայ, ունի իր արած պատերազմներն ընդդէմ խաւարի, ունի իրա կրած հալածանքներն, իրա Մարտիրոսները, Նահատակները և Հայրապետները, միով բանիւ ունի իր պատմական կեանքն, որ կարօտութիւն ունի առանձին ուսման։

լինիլ ճշմարիտ Աստուծոյն՝ ստանում էին մկրտութիւնն, որ պէս նշան քաւութեան և լուանում էին հեթանոսութեան աղտն ջրով։ Յովհաննէս Մկրտիչը մկրտում էր նրանց՝ որոնք գալիս էին նրա մօտ ստանալու քաւութեան մկրտութիւնը, որ նշան էր հեռանալու ամեն տեսակ չարութիւններից։ Բայց նրա մկրտութիւնը խորհուրդ չ'էր, պատճառն որ՝ չ'ունէր իրան մէջ փրկութիւն։

Յիսուս Քրիստոս աւանդեց մկրտութեան խորհուրդն իր աշակերտներին համբառնալու ժամանակն՝ ասելով. «Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Մատ. ԻԸ. գլ. 19 հմ։ «Որ հաւատայ և մկրտիցի կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի»։ Մարկ. ԺԶ. գլ. 16 հմ։ Այս հրամանով և այս խոստմունքներով Առաքեալներն և նրանց աշակերտներն մկրտում էին ամենին, որոնք հաւատում էին Աւետարանին և կամենում էին աշակերտիլ նրան։ Այս սովորութիւնը կատարում են ամենայն քրիստոնէական եկեղեցիները։

Մկրտութիւնն անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ նշանակում է Ա. Որ նա կատարվում է Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ հրամանաւ կամ զօրութեամբ. Բ. Ամենքը, որոնք մկրտուած են՝ պէտք է ընդունեն մի միայն ճշմարիտ Աստուած. — Հայր ասելով՝ որ մեզ որդի է շինում իրան. Որդի ասելով՝ որ մեզ փրկում է. Հոգի Սրբի ասելով՝ որ մեր մէջ նորոգում է Աստուծոյ պատկերը և նմանութիւնը վերստին ծննդեամբ աւաղանին։

Մկրտութեան ժամանակ ջուր գործածելը մեր միտն է բերում մեր աղտոտած բնութեան վիճակն և այն կարօտութիւնը, որ մեր հոգին զգում է սրբութեան և նորոգութեան համար. ցոյց է տալի մեզ այն հոգեւոր շնորհքներն որ մենք գտնում ենք Աւետարանում։ «Եւ դուք այնպիսիք ոմանք էիք, այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և 'ի Հոգին Աստուծոյ մերոյ»։ Կորն. Ա. Նգ. Զ. գլ. 6 հմ։

Ուրեմն՝ նոր օրէնքով մենք ստանում ենք մեղքի թողութիւն Քրիստոսի արիւնով, որ նա թափեց մեզ համար խաչի վերայ և Հոգւոյն Սրբոյ օգնութեամբ որ արժանացնում է մեզ Քրիստոսի Եկեղեցւոյ անդամ դառնալու։ Մկրտութիւնը ներկայացնում է մեզ սկզբնական մեղքը, մեր սեպհական աղտը և սրբութիւնն, որ մենք ստանում ենք Աստուծոյն որդեգիր լինելով Յիսուսի Քրիստոսի միջնորդութեամբ։ Հոգւոյն Սրբոյ շնորհքը Սուրբ Դիրքը շատ տեղերում նմանեցնում է ջրի. պատճառն որ՝ ինչպէս ջուրն ոչ թէ միայն լուանալու համար է, այլև նորոգելու. նոյնպէս և Սուրբ Հոգին սրբում է, նորոգում է և կեանք է տալի հոգւոյն։ «Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ և ո՞վ է, որ ասէդ ցքեզ. թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի»։ Յով. Գ. գլ. 10 հմ։ «Զի ես տաց ջուր 'ի ծարաւու՝ որոց գնան յանջրդեւոջ, եղիցի զոգի իմ 'ի վերայ զաւակի քո և զօրհնութիւնս իմ 'ի վերայ որդւոց քոց»։ Եսայ. ԽԴ. գլ. 3 հմ։

Քրիստոսի անունով մկրտողները պարտական են ո՛չ թէ միայն խոստովանել հրապարակաւ Քրիստոնէութիւնը, ճանաչել Քրիստոսին փրկիչ, Նրան ակնունիլ ամեն ժամանակ, այլ նոյնպէս պարտական են բոլորովին ընծայել իրանց անձն Քրիստոսին հաւատով և սիրով, ցոյց տալ՝ որ իրանք նոր արարած են և պահել այն սրբութիւնը, որ ստացել են։ «Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուցեալ մկրտութիւնն, ոչ զմարմնոյ աղտն 'ի բաց ընկենլով, այլ զբարուք մտացն հանդէս առ Աստուած, 'ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի»։ Պետ. Ա. Նգ. Գ. գլ. 21 հմ։

Այս պատճառաւ՝ Եկեղեցին քրիստոնէութեան սկզբունն պահանջում էր մկրտողներից քրիստոնէական հաւատոց կարճ խոստովանութիւն և հրապարակական ուխտ սրբութեան մէջ կենալու և աշխարհի համար իրանց անձը մեռած համարելու։

Ընկղմելոյ ձևն, որ գործ է ածում մեր Հայաստանեայց Եկեղեցին, նշանակում է Քրիստոսի Մահն, Թաղումն և Յարութիւնն։ Թաղվում է հին մարդը, որ ծնանի նոր մարդ։ Այս բանը

մեր միան է բերում Պողոս Առաքեալի ասածն. «Թաղեցա՛ք ընդ նմին մկրտութեամբ 'ի մահ, զի որպէս Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց փառաւորք Հօր, նոյնպէս և մե՛ք 'ի նորոգումն կենաց շրջեսցուք»։ Հռովմ. Զ. գլ. 4 հմր։

Մեր Եկեղեցին ընդունել է երեխայից մկրտութիւնը զանազան պատճառաւ. Նախ՝ որ Քրիստոնէից երեխայքն ընդունուած են նոր ուխտով, այսինքն Աւետարանով։ «Զի ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց»։ Գործք. Բ. գլ. 39 հմր։ Եթէ աւետիքը խոստացած է Քրիստոնեայ ծնողներին և իրանց որդիքներին, ապա ուրեմն կարող են մկրտուիլ և նրանց որդիքն կամ երեխայքն։ Երկրորդ՝ Եբրայեցւոց երեխայքն ընդունվում էին թլփատութեամբ այն ուխտի մէջ, որ տուած էր Աստուածանից նրանց հայրերին, թէպէտ և նրանք ընդունակ չ'էին ուխտ դնել և ճանաչել իրանց պարտաւորութիւնը, ինչպէս և Քրիստոնէից երեխայքն։ Ինչ ժամանակ Քրիստոս հրամայեց իր աշակերտներին մկրտել, թոյլ տուաւ նրանց ազատութեամբ հետևիլ այս նախնի սովորութեանը, և երբոր աշակերտները արգիլում էին երեխանց նրա մօտ դալու՝ Յիսուս նախատեց նրանց՝ ասելով. «Թոյլ տուք մանկտւոյդ դալ առ իս»։ Բացի սրանից՝ կարծիք չ'կայ որ Առաքեալները ինչ ժամանակ ամբողջ դերդաստան էին մկրտում՝ նրանց մէջ չը լիներ երեխայ։ Երրորդ՝ երեխայից մկրտութիւնը մի բարի օրինակ է Եկեղեցւոյ մէջ, որ ծնողները ընծայում են իրանց որդիքն Աստուծոյ ծառայութեանը և իրանք ևս մխիթարվում են, որ իրանց որդիքը մանկանից են լինում Փրկչի ողորմութեանը։ Այն խոստմունքը՝ որ երեխայքը պէտք է տան մկրտութեան ժամանակ՝ տալիս են նրանց կնքահայրերը և ուխտ են դնում Քրիստոնէական ուսումն տալ նրանց, երբոր կատարեալ ընդունակութիւն կ'ունենան։

Մկրտութեան վերայ Հանդանակն աւելացնում է մէ բառն, պատճառն որ՝ մարդը մկրտութեամբ մի անդամ է ստանում Յիսուսի Քրիստոսի շնորհքն։ Ուրեմն՝ այս խորհուրդն երբէք չը պէտք է կրկնուի. «Մի Տէր, մի հաւատ մի մկրտութիւն»։ Եփես. Դ. գլ. 5 հմր։ «Բանդի անհնար է

միւսանդամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգևացն և հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ, և զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակն ճաշակեցին և զօրութիւնսն հանդերձելոյ աշխարհին և կործանեսցին, միւսանդամ նորոգել յապաշխարութիւնս և վերստին 'ի խաչ հանել անձանց զորդին Աստուծոյ և դարձեալ խայտառակել»։ Եբր. Զ. գլ. 4—6 հմր։

Երկրորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ԴՐՈՇՄՆ, որով մկրտեալն ընդունում է զգալի օծութեան միջնորդութեամբ՝ Հոգւոյն Սրբոյ ներքին օծութիւնը, շնորհքը և զօրութիւնը և պատրաստվում է պատերազմն մտնել աշխարհի հետ և աշխարհի մոլութեանց հետ, ինչպէս ասում է Յովհաննէս Առաքեալն. «Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի Սրբոյն և գիտէք ամենեքին։ . . . . Զայս գրեցի ձեզ՝ զի մի՛ ոք զձեզ մոլորեցուցանիցէ և դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք 'ի նմանէ, բնակեսցէ 'ի ձեզ. և չ'է ինչ պիտոյ եթէ ոք զձեզ ուսուցցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի և ճշմարիտ է և չ'է սուտ և որպէս ուսոյցն զձեզ կայք 'ի նմա»։ Յովհ. Ա. թղթ. Բ. գլ. 20—27 հմր։

Այս խորհրդով Հոգին Սուրբ զօրացնում է մեր սիրտը, մեր միտքը և մեր կամքը, ինչպէս ասում է Ներսէս Լամբրոնացին. «Սա — Հոգին Սուրբ — օծանէ զմիտս մեր ըստ Յովհաննու և առնէ Քրիստոնեայս և Քրիստոսընկալս և յայսմ օծութենէ զօրանամք դիտել զամենայն։ Սա լուսաւոր առնէ զաչս սրտից մերոց և զյոյս կոչման մերոյ և զմեծութիւն փառաց ժառանգութեան և զլայնութիւն և զերկայնութիւն սիրոյն Քրիստոսի»։

Այս խորհուրդը կատարուեցաւ Յիսուսի Քրիստոսի վերայ Նրա մկրտութեան ժամանակ։ «Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս՝ ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի և ահա բացան նմա երկինք և եհան զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրև զաւնի և գայր 'ի վերայ նորա»։ Մատթ. Գ. գլ. 16 հմր։ Եւ հաստատեցաւ Հոգւոյն Սրբոյ գալստեամբն 'ի դասս Առաքելոց, որոնք կատարում էին յետոյ այս խորհուրդը ձեռքը դնելով մկրտուածների վերայ և Հոգին Սուրբ զգալի

նշանով կամ զօրութեամբ լիշանում էր նրանց մէջ։ «Եւ իբրև լուան մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի, և 'ի դնել 'ի վերայ նոցա Պաւղոսի զձեռն, եկն Հոգին Սուրբ 'ի վերայ նոցա»։ Գործ. ԺԹ. գլ. 5—6 հմր։

Մեր Եկեղեցին կատարում է այս խորհուրդն այսպէս՝ «Լնու քահանայն զսուրբ իւղն (միւռոն) 'ի յաւին իւր... և կնքէ սուրբ իւղովն զճակատ մկրտելոյն, զաչսն... զբղ քամանին... զոտսն»։ ('ի մեծ Մաշտոցի)։ Եւ այսպէս ուրեմն այս խորհուրդն ընդունողն պէտք է կենդանի վկայ լինի Քրիստոսի համար, պահող ու պաշտպանող նրա ճշմարտութեանց և անթերի կատարող Նրա պատուիրանքների, մանաւանդ նրա մեծ պատուիրանին — Սիրոյ առ Աստուած և առ մարդ։ «Այլ առջի՛ւք զօրութիւն 'ի հաստանել Հոգւոյն Սրբոյ 'ի վերայ ձեր, և եղիջի՛ւք վկայք ինձ յԵրուսաղէմ, և յամենայն Հրէաստանի և 'ի Սամարիա և մինչև 'ի ծագս երկրի»։ Գործ. Ա. գլ. 8 հմր։

Երրորդ խորհուրդ Եկեղեցւոյ, որ յիշատակվում է Հանդանակի մէջ, է ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆՆ, որով մեղաւոր և զղջացեալ Քրիստոնեայն խոստովանում է Աստուծոյն՝ առաջի Նրա քահանային իրա մեղքն և ստանում է քահանայի աղօթքով և Քրիստոսի խօսքով և չարչարանքի արդիւնքով մեղքի թողութիւն։ Աստուծոյ քահանաների այս իշխանութիւնը հիմնուած է Քրիստոսի այս խօսքի վերայ. «Փչեաց 'ի նոսա և ասէ. առէ՛ք Հոգին Սուրբ. եթէ ումք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, և եթէ զուրուք ունիցի՛ք՝ կալեալ լիցի»։ Յովհ. ԺԲ. գլ. 22 հմր։ Եւ այս խօսքի համար է, որ քահանայն ասում է. «Եւ ես բանիւն Աստուծոյ» և այլն։

Ապաշխարութեան խորհուրդը մեծ պարտք է դնում ապաշխարողի վերայ, որ նա ջերմեռանդութեամբ և ճշմարիտ զղջմամբ խոստովանի իրա բոլոր մեղքերը, թողնի իրա պարտապաններին իրանց մեղքը, որովհետև առանց հաշտուելու մարդկանց հետ և թողնելու նրանց մեղքն, չ'է կարող լինքն էլ հաշտուիլ Աստուծոյ հետ և թողութիւն ստանալ. «Թողցէ ամբարիշտն զճանապարհս իւր և այր ա-

նօրէն զխորհուրդս իւր, և դարձցի առ Տէր, գոցէ զողորմութիւն. և առ Աստուած մեր, զի բազմապատիկ թողցէ զմեղս և զանօրէնութիւնս ձեր»։ Եսայ. Մաթ. ԾԵ. գլ. 7 հմր։ «Այսպէս ասէ Տէր ամենակալ, դարձարուք առիս՝ ասէ Տէր զօրութեանց և դարձայց առ ձեզ»։ Զաքար. Ա. գլ. 3 հմր։ «Արարէք այսուհետև պտուղս արժանի ապաշխարութեան»։ Մատթ. Գ. գլ. 8 հմր։ «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն»։ Ղուկ. Ե. գլ. 32 հմր։

Ուրեմն՝ մեծ պարտք կայ քահանայի վերայ, որի առաջ խոստովանվում են մեղքերը, որ լաւ իմանայ՝ թէ ի՞նչ է Աստուծոյ ճշմարտութիւնները և ի՞նչ է Աստուծոյ կամքն, որ նրանց համաձայն վարուի, խորհուրդ պահէ խոստովանութիւնն, ինչպէս Աստուծոյն հաւատացած, իր աստուածատուր իշխանութեան մէջ, և պէտք է իմանայ յանդիմանել և խրատել, իմանայ սփոփել և մխիթարել, ինչպէս առումէ Պօղոս Առաքեալն. «Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան»։ Տիմ. Ա. Նը. Դ. գլ. 14 հմր։

Մեղաւորը ապաշխարելով ստանում է թողութիւն իրա մեղքերին և այս պատճառաւ Հանդանակի մէջ ասում են՝. «Հաւատամ 'ի թողութիւն եւ 'ի Ընդ-նիւն մեղաց»։ Հաւատալ մեղքի թողութեանը՝ նշանակում է հաւատալ Աստուծոյ այն ողորմութեանը, որ արաւ մեղաւորներին՝ ներելով նրանց մեղքն։ Ասվում է Թողնիւն, պատճառն որ՝ կարելի է մեր մեղքն համարիլ ինչպէս մէկ պարտք, որ Աստուած մեզ թողնում է։ Թողութիւնն իրան մէջ բովանդակում է երկու ողորմութիւն. — մէկ որ՝ Աստուած ազատեց մեզ այն պատժից, որին մենք արժանացել էինք մեր մեղքով. իսկ միւս՝ որ Աստուած յետ տուաւ մեզ իր սէրն և մեր իրաւունքը յաւիտենական ժառանգութիւն վայելելու։

Մեղքի թողութեանը Սուրբ Գիրքը տալիս է զանազան անուններ. ինչպէս, Արդարանիւն, որ չը պէտք է համեմատենք մարդկային արդարութեան հետ, որով մեղադրուածն արդարանում է իր անմեղութեամբ։ Պատճառն որ՝ երբոր մենք ասում ենք թէ արդարացանք Աստուծոյ առաջ,

նշանակում է որ Աստուած կամենում է մեզ հետ վարուիլ
ինչպէս արդարների հետ, առ ոչինչ համարելով մեր մեղ-
քը։ «Եւ քանզի Աստուած էր Քրիստոսիւ զաշխարհս հաշ-
տեցուցանել ընդ իւր և չը համարել նոցա զմեղս իւրեանց
և եհ 'ի մեզ զբանն հաշտութեան»։ Կորն. Բ. Նդ. Ե. գլ. 19 հմտ։
Ասվում է մեղքի թողութիւնն Ողորմութեան Աստուծոյ, որ Յի-
սուսի Քրիստոսի հեղութեան և անասելի զոհ լինելու հա-
մար Աստուած ներեց մեր մեղքը. «Արդարանան ձրի նո-
րին շնորհօք 'ի ձեռն փրկութեան, որ 'ի Քրիստոս Յիսուս»։
Հռովմ. Գ. գլ. 24 հմտ։ Այս ողորմութեանը կարող ենք ար-
ժանանալ հաւատով, որ սրբում է մեր սիրտը և ծնանում է
մեր մէջ ջերմեռանդն ապաշխարութիւն։ Կենդանի, հեղ
և գործնական հաւատը միացնում է մեզ Քրիստոսի հետ,
շինում է նրան անդամ և հասկացնում է, որ Աստուած
տեսնում է մեր մէջ Քրիստոսին և ոչ թէ մեզ, և նրա ար-
դիւնքն և դիտաւորութիւնը մերն է համարում։ «Եւ
զտայց 'ի նմա իբրև ոչ ունիմ զիմ ինչ արդարութիւն, որ
յօրինաց անտի է ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի, որ
յԱստուծոյ արդարութիւն է»։ Փիլիպ. Գ. գլ. 9 հմտ։

Այն մարդիկը, որոնք ճշմարիտ հաւատով միացել են
Յիսուս Քրիստոսի հետ և լուացուել են իրանց մեղքից նրա
արիւնով և սրբուել են նրա հոգւով՝ նրանք միայն կարող
են ասել — Հաւատամք 'ի Նոյնն Տեղաց։ «Զոր յառաջն էտ
Աստուած 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոցն արեամբ նորա,
'ի հանդէս արդարութեան նորա, վասն թողութեան յառա-
ջագոյն մեղացն գործեցելոց»։ Հռովմ. Գ. գլ. 25 հմտ։ Այսու
ճշմարիտ խոստովանութեամբ կարող են արժանանալ Աստ-
ուածային խոստմանը։

Բայց ոչ մեր հաւատը, ոչ մեր բարի գործը, ոչ մեր
ապաշխարութիւնը և ոչ մեր քաւութիւնը միայն չեն կա-
րող տալ մեզ փրկութիւն. պատճառն որ՝ մեր հաւատն ոչ
այլ ինչ է, եթէ ոչ միջոց, որով ընդունում ենք Աստուծոյ
ողորմութիւնը 'ի ձեռն Քրիստոսի։ «Ոչ 'ի գործոց արդա-
րութեան, զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն
ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն

և նորոգութեան Հոգւոյն Սրբոյ։ Զոր եհեղ 'ի մեզ առա-
տութեամբ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ»։
Տէտ. Գ. գլ. 5 հմտ։ Մեր հաւատը, մեր բարի գործը, մեր
ապաշխարութիւնը միայն նշան են շնորհակալութեան մեր
փրկութեան և թողութեան համար։ Մեր փրկութիւնը չու-
նի մի այլ պատճառ, բայց միայն Աստուծոյ ողորմութիւնը։
Պահենք ուրեմն այս մեծ ճշմարտութիւնը, որ Աստուծոյ
ողորմութիւնն է որ մեզ փրկում է և ասենք Սուրբ Գրքի
հետ միասին։ «Զերդումն զոր երդուաւ Աբրահամու Հօր
մերում, տալ մեզ առանց երկիւղի 'ի ձեռաց թշնամեաց
փրկեալս»։ Ղուկ. Ա. գլ. 73—74 հմտ։

Զորրորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆն, որ
սահմանուած է Քրիստոսից։ Ընդ տեսակաւ հացի և գինւոյ՝ իսկապէս՝ ճաշակում ենք Քրիստոսի մարմինը և ըմպում
նրա արիւնն մեր մեղքի թողութեան և յաւիտենական
կեանք ժառանգելու համար։

Քրիստոս հաստատեց այս սուրբ խորհուրդը Պասէքի
ընթրեաց ժամանակ այս խօսքերով. — «Առէք, կերայք
այս է մարմին իմ։ Եւ առեալ բաժակ գոհացաւ եւ նոցա
և ասէ. Արբէք 'ի դմանէ ամենեքին։ Զի այդ է արիւն իմ
նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողութիւն
մեղաց։ «Մատ. ԻԶ. գլ. 26—29 հմտ։

Պօղոս Առաքեալը մանրամասն խօսում է այս խորհրդի
վերայ։ «Տէր Յիսուս 'ի գիշերին, յորում մատնէր, առ
հաց, գոհացաւ, երեկ և ասէ. Առէք և կերայք, այս է
մարմին իմ, որ վասն ձեր բաշխի. զայս արարէք առ իմոյ
յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն՝ առ և
ասէ. այս բաժակ նորոյ ուխտի է իմով արեամբ. զայս ա-
րարէք քանիցս անդամ եթէ ըմպիցէք առ իմոյ յիշատակի։
Քանիցս անդամ թէ ուտիցէք զհացս և զբաժակս ըմպի-
ցէք, զմահ Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա»։
Կորն. Ա. Նդ. ԺԱ. գլ. 23—25 հմտ։

Այս սուրբ խորհրդով միանալով Քրիստոսի հետ միշտ
պէտք է սպասենք նրա գալստեանը և միշտ յիշենք նրա
մահն։ Քրիստոս ասելով այս խօսքերն. «Զայս արարէք առ

խնդ յիշատակի »։ և Պօղոս Առաքեալն աւելացնելով այս խօսքերը։ « Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք մինչեւ եկեսցէ նա »։ յիշեցնում են այս խօսքերով Քրիստոսի մահը, որ այս մահն է միակ հիմն փրկութեան։ Այս մահն է, որ աղատում է մեզ դատապարտութենէ։ Այս մահն է, որ արժանացնում է մեզ Աստուծոյ ողորմութեանը և նրա հետ հաշտութեանը։ Այս մահն է, որ սոխպում է մեզ, որ մենք եւս տանք մեր անձը նրան, որ այնքան սիրեց մեզ, որ իր անձն զոհեց մեզ համար։

Հաղորդութեան սուրբ խորհրդով մենք միանում ենք Քրիստոսի հետ, մենք պէտք է մասնակից լինինք ուրեմն ոչ թէ միայն նրա մահուանը, այլ և նրա կեանքին, որ արժանի լինինք յաւիտենական կեանքի և բնակուինք Յիսուսի Քրիստոսի մէջ և նա մեր մէջ։ Մեր կեանքով նրա կեանքին մասնակից լինելու համար ասում է Քրիստոս։ « Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես 'ի նմա »։ Յով. Ա-էպ. Զ. գլ. 54—57 հմ։

Այս սուրբ խորհրդին արժանապէս հաղորդուելու համար՝ Քրիստոնեայն պէտք է ունենայ ճշմարիտ դղջութիւն, ճշմարիտ հաւատ, ջերմեռանդն յանկարծակի դառնալ դէպի բարութիւն, արքութիւն, որոնք պարունակում են իրանց մէջ Մարդասէրութիւն։ Մէկ խօսքով հաղորդուողը պէտք է լիովին դէպ և դէպ, որ նա իր մեղքերով անպատուել է Աստուծոյն և պէտք է հաւատայ, որ նրա այս մեղքերն թողութիւն են ստանում Աստուածանից Քրիստոսի խաչով և արդիւնքով։ Նա պէտք է ցանկայ, որ աւելի և աւելի յառաջանայ հաւատոյ մէջ, արքութեան և մարդասիրութեան մէջ։

Այս զգացողութիւններն անշուշտ հարկաւոր են արժանապէս Քրիստոսի մարմնոյ եւ արեան ճաշակողներին, պատճառն որ՝ նրանց է փրկութիւն խոստացած, և նրանց՝

որոնք զղջում են իրանց մեղքն, նրանց՝ որոնք հաւատում են, նրանց՝ որոնք աշխատում են իրանց արքութեան համար, նրանց՝ որոնք ներում են այլոց իրանց մեղքն, ինչպէս Աստուած ներեց մեզ, նրանց՝ որոնք սիրում են, ինչպէս Աստուած սիրեց մեզ և նրանց՝ որոնք ցանկանում են լինիլ նրա համար զոհ, ինչպէս նա ինքն զոհուեցաւ մեզ համար։

Հաղորդութիւնն է հրապարակական խոստովանութիւն որ մենք զղջում ենք մեր մեղքը, որ կապուինք մեր փրկչի հետ կենդանի հաւատով և կամենում ենք լինիլ ճշմարիտ հաւատացող և նրան հնազանդող։ Ուրեմն՝ հաղորդուիլ առանց արժանաւորութեան՝ այսինքն հրապարակաւ խոստովանել, որ ունի վերև յիշած զգացողութիւններն, և ընդհակառակն՝ ինքնին զգալ որ մի և նոյն ժամանակ զուրկ է այն զգացողութիւններից, այս նշանակում է անպատուել Աստուծոյն, լինիլ ամբարիշտ և կեղծաւոր վերին աստիճանի։ Հաղորդուիլ նշանակում է ներքին հոգևոր միութիւն Քրիստոսի և մեր բոլոր եղբայրների հետ, որ մենք ամենքս մի մարմին ենք 'ի Քրիստոս, որ է Դլ-ի։ Ուրեմն՝ որոնք չ'ունին արժանաւոր զգացողութիւններ, չեն զղջում իրանց մեղքը և մօտենում են կեղծաւորութեամբ Քրիստոսի մարմնոյ և արեան, նրանց համար Պօղոս Առաքեալն ասում է։ « Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ՝ պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր և ապա 'ի հացէ անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ »։ Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ։ զի ոչ խարէ զմարմին Տեառն »։ Կորն. Ա. Թղ. ԺԱ. գլ. 27—30 հմ։ Նրանք անպատվում են Սուրբ խորհուրդը չը զանազանելով հասարակ հացից։ Եւ որովհետև վերև յիշած սուրբ և բարի զգացողութիւններն անշուշտ հարկաւոր են ճաշակողի համար, ուրեմն՝ ամեն ճաշակող պէտք է փորձէ իր անձն, թէ ունի՞ արդեօք այն զգացողութիւններն, և եթէ ունի՝ աւելի՞ պէտք է հաստատուի նրանց մէջ։ եթէ նուազ են այն զգացողութիւններն

պէտք է զօրացնէ, և եթէ չ՚ունի այն զգացողութիւնը՝ անդադար պէտք է աշխատէ ճարելու։ Եթէ չ՚է կամենում աշխատիլ և ունենալ՝ նա պէտք է հեռանայ այն սուրբ խորհրդից՝ երկնչելով որ աւելի չ՚անպատուէ այն սուրբ խորհուրդն և աւելի չը ծանրացնէ իր թշուառութիւնն՝ ընկնելով մեղքի թմրութեան մէջ։ Ճաշակողը պէտք է անէ այս անձնափորձութիւնը այն դիտաւորութեամբ, որ իր կեանքն յարմարացնէ իրան ճանաչողութեանը, ինքն իրան անձին երեսպաշտութիւն չ՚անէ, նուազեցնելով կամ նեղելով իրան յանցանքները։ Նա պէտք է միտը պահէ, որ Աստուած նայում է մեր սրտին և ատում է կեղծաւորութիւն։ Նա պէտք է մանրամասն քննէ թէ փրկութեան ճանապարհի վերայ է, թէ ո՛չ. պէտք է քննէ իր ամեն զգացողութիւնները, ամեն խօսակցութիւնները, կեանքի ամեն գործքերը, մտածէ ընդհանուր և յատուկ պարտաւորութեանց վերայ, մանաւանդ այս մեծ պարտաւորութեան վերայ, որ է հիմն և սկիզբն հոգեկան կենաց, այսինքն Հաւատ, Սէր առ Աստուած և Սէր առ մարդ։ Այս քննութիւնը պէտք է կապակցուած լինի ջերմեռանդ աղօթքի հետ, որովհետև մենք կարօտութիւն ունինք Աստուծոյ լուսոյ և օգնութեան հոգւոյն, որ կարողանանք ճիշդ քննել մեր սիրան և ցրել մեր անձնասիրութեան ցնորքները։ Այս քննութեամբ միայն մեր անձն ճանաչելն օգտաւէտ կը լինի մեզ համար։ Այս քննութիւնը պէտք է գործնական լինի, այսինքն իսկոյն պէտք է ուղղենք մեզ, հեռանանք այն առարկաներից և այն տեղերից, որոնք մեզ համար վտանգաւոր են ճանաչել։ Մէկ խօսքով պէտք է գործ դնենք ամեն հնարք և միջոց, որոնք թուում են մեզ օգտաւէտ մեր փրկչին հաւատարիմ լինելու համար։ Այսպիսի քննութեան համար է ասում Պօղոս Առաքեալն. «Փորձեցէք մարդ զանձն իւր և ապա 'ի հացէ անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ»։ Կորն. Ա. Ի. ԺԱ. գլ. 28 հմ։

Հինգերորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ, որ 'ի սկզբան հաստատեց Աստուած այս խօսքերով. «Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ. Աճեցէ՛ք և բազմացարուք և լցէք զերկիր»։ Ծնն. Ա. գլ. 28 հմ։ Քանի որ մարդը հնազանդութեամբ պահում էր Աստուծոյ պատուիրանքը՝ պահում էր և այս խորհուրդը իրա սուրբ նշանակութեամբ, բայց պատուիրանազանցութեամբ հեռանալով Աստուածանից՝ հեռացաւ ամուսնութեան սուրբ նպատակից, փոխեց նրան ըստ դաշնակցութիւն և յառաջ բերեց բազմակնութիւն։ Այս մոլար մտքերը փարատելու համար էր, որ Քրիստոս ասում է փարիսեցւոց. «Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն 'ի սկզբանէ արու և էգ արար զնոսա՝ և ասէ. վասն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկոքեան 'ի մարմին մի։ Ապա ուրեմն՝ ո՛չ են երկու՝ այլ մի մարմին։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»։ Մատ. ԺԹ. գլ. 4—6 հմ։

Քրիստոնէութիւնը տուաւ ամուսնութեանը այն մեծ նշանակութիւնը, որ 'ի սկզբանէ Աստուած սահմանել էր։ Տուաւ նրան իր առաջին սրբութիւնը, միութիւնը և յաւիտենական անլուծանելի կապն՝ հիմնուելով Քրիստոսի խօսքի վերայ։ «Զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ»։ Պօղոս Առաքեալը համարձակ նմանեցնում է ամուսնութիւնը Քրիստոսի միութեանը Եկեղեցւոյ հետ։ Ամուսնութեան կապը անուանում է նա Մեծ խորհուրդ՝ ասելով. «Ա՛րք սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի և զանձն իւր մատնեաց վասն նորա։ . . . . Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս, իբրև զիւրեանց մարմինս. . . . Որ սիրէ զկին իւր, զանձն իւր սիրէ։ Զի ո՛չ ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի. . . . . Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկոքին 'ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ իսկ 'ի Քրիստոս և յեկեղեցի»։ Եփես. Ե. գլ. 25—32 հմ։

Որովհետև Քրիստոս յայտնում է մեզ՝ որ Աստուած է, որ կապում է ամուսնացողներին և կապում է յաւիտենական կապով. ուստի ամուսինները պէտք է կապուին աղա-

տութեամբ, պատճառն որ՝ Աստուծոյ առաջ են կապվում և Աստուծոյ սահմանած նպատակի համար, որ նրանք մարդկային աղդը աճեցնելով և բազմացնելով՝ աճեցնեն և բազմացնեն աստուածային դերդաստանը։ Պէտք է կապուին բարոյական աղատութեամբ, սիրով և հաւանութեամբ և ո՛չ թէ յակամայից կամ նիւթական շահից և կամ ինչ և իցէ պատճառներից ստիպուած, որ արատ բոյ են բարոյական կապակցութեան։ «Մի՛ ոք, ասում է Ն. Շնորհալին, 'ի քահանայից 'ի բռնութենէ բռնաւորաց առանց կամաց առն և կնոջ պսակ դիցէ»։

Վեցերորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ԿԱՐԳՆ ՔԱՀԱՆԱՅՍԱԿԱՆ կամ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆն, որի արժանաւոր անձն Եպիսկոպոսի ձեռնադրութեամբ և աղօթքով առնում է հոգեւոր զօրութիւն Եկեղեցւոյ մէջ պաշտօն կատարելու և խորհուրդներ մատակարարելու։ Այս խորհուրդը Քրիստոս հաստատեց իրա համբարձման ժամանակը՝ տանելով աշակերտներին Զիթենեաց սարի վերայ, ինչպէս ասում է Ղուկաս Աւետարանիչը։ «Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա և եղեւ օրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ և վերանայր յերկինս»։ Ղ.-Ի. Ի.Դ. գլ. 51 հմտ։

Այս խորհուրդն ընդունողների պարտականութիւնն է քարոզել և ուսուցանել Աստուածային ճշմարտութիւնները և նրանց կատարելն։ Ուսուցանել ո՛չ միայն խօսքով, այլ և գործքով և բարի օրինակով լինել արժանաւոր սպասաւոր Եկեղեցւոյ սուրբ խորհուրդները մատակարարելու համար և լինել հաշտարար մեղաւորաց ընդ Աստուծոյ։ «Զի ո՛չ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ աւետարանել...։ Զի եթէ աւետարանեմ ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վերայ կայ. բայց վա՛յ է ինձ, եթէ ո՛չ աւետարանեմ»։ Կորն. Ա. Ընդ. Ա. գլ. 17 հմտ։ Թ. գլ. 16 հմտ։

Եօթներորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ՕԾՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՑ որով հիւանդը զօրանում է յուսով՝ դանելով իրա մարմնոյ հիւանդութենէն աղատութիւն, բժշկութիւն և թողութիւն մեղաց։ «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, ասում է Յակոբոս Առաքեալն, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյ և արասցեն 'ի

վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն և աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն և յարուցէ զնա Տէր և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա»։ Յակ. Ե. գլ. 14—15 հմտ։

Մեր Հայաստանեայց Եկեղեցին կատարում է այս խորհուրդը կամ խորհրդաւոր արարողութիւնը հիւանդների վերայ այսպէս. — Քահանայն թաչիւ և Աւետարանաւ կարդում է այն սաղմոսները, ընթերցուածները, աւետարանները, աղօթքները և շարականները, որ 'ի հնուց սահմանած են Մաշտոցի մէջ. որովհետև աղօթքի մէջէ բուսանդակվում խորհրդաւոր զօրութիւնը, ինչպէս ասում է Յակոբոս Առաքեալն. «Աղօթք ընդ հաւատոյ լծորդեալ առողջութիւն տայցէ հիւանդին և Տէրն կաղդուրեսցէ զնա»։ Եւ ինչպէս ասում է Սարգիս Շնորհալին. «Ոչ իւղն տայր առողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն»։

Հաւատալ 'ի յարութիւն մեռելոց, որ յիշվում է Հանդանակի մէջ, նշանակում է, որ մենք հաւատում ենք, թէ երբոր մեր հոգին հեռանում է մարմնից և մարմինը մեռնում և դառնում հող, կը կանչուի մէկ օր դէպի կեանք և կը միանայ հոգւոյ հետ, որ նա ունէր առաջ։

Յարութիւնն ունի իրան մէջ երկու ճշմարտութիւն— Անմահութիւն հոգւոյ և Յարութիւն մարմնոյ։ Մեր կրօնը խոստովանում է այս երկու ճշմարտութիւնը։ Հին Կտակարանը՝ Ենովքի և Եղիայի համբառնալովը՝ հասկացնում է թէ՝ կայ մի այլ աշխարհ, որ տեղ պատրաստուած է հատուցումն բարի և չար մարդկանց։ «Նա՝ աւանիկ աղնուականի ելն ցանկացեալ են, այսինքն է երկնաւորին, վասնորոյ ո՛չ ամօթ համարի Աստուած կոչիլ նոցա Աստուած, քանզի պատրաստեաց նոցա քաղաք»։ Եբր. Ժ.Ա. գլ. 16 հմտ։

Ինչ ժամանակ ասում է, Ես եմ Աբրահամու Աստուած, Իսահակայ Ես Յակոբայ Աստուած, սրանով պարզ ցոյց է տալիս մեզ, որ սուրբ մարդիկը բնակվում են նրա մօտ և նրա ողորմութեամբ ուրախանում են, ինչպէս ասում է Քրիստոս. «Այլ զի յառնեն մեռեալք և Մովսէս դուշակեաց 'ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու, և զԱստուծոյ

Իսահակայ և զԱստուծոյ Յակոբայ։ Եւ Աստուած չ՚է մեռելոց, այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանի են »։ Ղ-ուկ. Ի. գլ. 37—38 հմ։ Մովսէսից յետոյ եկած մարգարէներն ևս հաստատում են այս ճշմարտութիւնը. « Եւ դարձցի հողն յերկիր, որպէս և էրն, և հոգին դարձցի առ Աստուած, որ ետ զնա »։ Ժողովող. ԺԲ. գլ. 7 հմ։ Բայց միայն Յիսուս Քրիստոս տուաւ կատարեալ յայտնութիւն այս ճշմարտութեանը. « Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերևիլ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ և լուսաւորեաց զկեանս և զանեղծութիւն՝ ի ձեռն աւետարանին »։ Տիմոթ. Ա. գլ. 19 հմ։

Այս ճշմարտութիւնները պարզ յայտնում է Նոր Կտակարանը. « Եւ մի՛ երկնչիք յայնցանէ, որք սպանանեն զմարմին և զհոգի ո՛չ կարեն սպանանել։ Այլ երկերո՛ւք դուք առաւել յայնմանէ, որ կարող է զհոգի և զմարմին կորուսանել՝ ի դժոխոցի »։ Մատ. Ժ. գլ. 28 հմ։ « Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես՝ ի դրախտին »։ Ղ-ուկ. ԻԳ. գլ. 43 հմ։ « Նեղեալ եմ յերկոցունց՝ զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լինիլ առաւել լաւ համարիմ »։ Փիլ. Ա. գլ. 23 հմ։ Եւ մենք ջերմեռանդութեամբ հաւատում ենք Անմահութեանը, երբոր պահում ենք մեր կեանքը և զգացողութիւնը սրբութեամբ և չ՚ենք որոնում աշխարհիս վայելքները, այլ աստուածահաճոյ առաքինութիւններ։ « Զգեցարո՛ւք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ, սուրբք և սիրելեալք, զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն, ներել միմիանց, չնորհել իրերաց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ. որպէս Աստուած Քրիստոսիւ չնորհեաց ձեզ, նոյնպէս և դուք »։ Կող. Գ. գլ. 12 հմ։

Եւ վերջապէս աշխատում ենք օր ըստ օրէ հարստացընել մեր հոգին բարի զգացողութեամբ, որ կարողանանք արժանանալ երկնային հայրենեաց և ճաշակել հոգւոյ երջանկութիւնը։

Յարութենէն յետոյ պէտք է լինի ընդհանուր դատաստան աշխարհի վերջումն և այս դատաստանի համար աս-

վում է Հանդանակի մէջ.—Գալոց է նովին մարմնովն ի փառս Հօր՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս։

Որովհետև Աստուած ամենասուրբ է, ամենիմաստ, բարի, ամենակարող և կառավարիչ աշխարհի, ուրեմն՝ նա պէտք է թէ շուտ թէ ուշ բաժանէ բարին չարից։ Եւ մենք ևս տեսնում ենք, որ այս աշխարհքում առաքինութիւնը չ՚է ստանում իրա հատուցումն, ո՛չ ևս չարութիւնը՝ իրա պատիժն, այլ ընդհակառակն՝ մեղաւորներն վայելում են ուրախութիւն և արդարները չարչարանք։ Պէտք է լինի ուրեմն՝ նշանակած մի օր՝ որ ամենը կարդի դնուի, առաքինութիւնը ստանայ իրա հատուցումն և չարութիւնը իրա պատիժն։ Մեր խղճմտանքն ևս նոյնպէս վկայում է, որ կայ մէկ ցէր, որից մենք կախուած ենք և պէտք է ունենանք երկիւղ, որովհետև նա վկայ է մեր ամեն գործքերին, որ կը դատի մէկ օր, բարիներին վարձատրելով յաւիտենական երջանկութեամբ և չարերին պատժելով յաւիտենական տանջանքով և Քրիստոս այս ժամանակի համար է ասում. « Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք և մեկնեսցէ զնոսա՝ ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զոդիս յայծեաց և կացուսցէ զոդիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն՝ ի ձախմէ »։ Մատ. Իե. գլ. 31—33 հմ։

Բարի մարդիկը կը դատուին իրանց հաւատով և իրանց գործով։ Որովհետև՝ ինչպէս միտքը և հոգին պէտք է հնազանդութեանց, այնպէս ևս սիրտը և կամքը սիրով և հնազանդութեամբ։ Ուրեմն՝ մենք ևս պէտք է հաւատանք ամեն բանի, ինչ որ նա պատուիրում է մեզ, պատճառն որ՝ անհաւատութիւնը դառնում է մեզ համար դատապարտութիւն։ « Որ հաւատայ՝ ի նա ոչ դատապարտեսցի և որ ոչն հաւատայ՝ ի նա, արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատայ յանուն Միածնի Որդւոյն Աստուծոյ »։ Յով. առաք. Գ. գլ. 18 հմ։

Դատաստան կը լինի ոչ թէ միայն կատարուած գործքերի վերայ, այլ և ամեն մեր մտածմունքների և խօսքերի

վերայ, որ ունեցել ենք։ «Այսուհետեւ մի՛ յառաջ քան ղժամանակն դատիք. մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւորառնիցէ զդաղտնիս խաւարի և յայտնիցէ զխորհուրդս սրտից և ապա իւրաքանչիւրոյ գովութիւն եղիցի յԱստուծոյ»։ Կորն. Ա. Նղ. Դ. գլ. 5 հմր։ «Զի՝ ի բանից քոց արդարացիս և՝ ի բանից քոց դատապարտեսցիս»։ Մաթ. ԺԲ. գլ. 37 հմր։ Բայց այս դատաստանի օրն խորհուրդ է մեզ համար, ոչ ոք չգիտէ, նա խորհուրդ է որ պատրաստ պահէ մեզ ամեն օր և չլինինք յիմար կոյսերի նման, որոնք քնով անցկացրին իրանց ժամանակն վեռայի առաջ դուրս գալու ժամին։ «Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն և զժամն»։ Մաթ. Իե. գլ. 13 հմր։ Այս վերջին դատաստանից յետոյ պէտք է կատարուի Աստուծոյ հրամանը, այսինքն արդարներին յաւիտենական կեանք, իսկ մեղաւորներին յաւիտենական տանջանք։ «Եւ երթիցեն նոքա մեղաւորքն՝ ի տանջանս յաւիտենականս, և արդարքն՝ ի կեանս յաւիտենականս»։

ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱՅ

ԱՌՀԱՍԱՐԱԿ

Աղօթքն ունի երկու նշանակութիւն — Ընդհանուր և Յատուկ։ Ընդհանուր նշանակութեամբ աղօթքն է կապակցութիւն մարդոյ ընդ Աստուծոյ։ Աղօթքով մենք ցանկանում ենք մօտենալ Աստուծոյն և խօսիլ նրա հետ։ Այս նշանակութեամբ Աղօթքն բովանդակում է իրան մէջ Աստուածպաշտութեան ամեն տեսակ գործքեր։ Յատուկ նշանակութեամբ Աղօթքն է կոչումն առ Աստուած և խնդրուածք ըստ կարօտութեան մեր վիճակի։ Այս խնդրուածքի հետ պէտք է կապակցեալ լինին, այն զգացողութիւններն, որ պարտինք ունենալ առ Աստուած և մեր սիրտը պէտք է լինի կենդանի շնորհակալութեամբ լցուած նրա շնորհքների համար, որ ստացել ենք։ «Մի՛ ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք և խնդրուածովք գոհութեամբ խնդրբուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած»։ Փիլիպ. Դ. գլ. 6 հմր։

Աղօթքը մեծ բան է մարդուս համար։ Նա է միայնակ էական պարպարորինն մարդոյ առ Աստուած։ Նա է միայնակ ճանապարհ Աստուածային հարկաւոր և թանկագին շնորհքներն ստանալու համար։ Նա է քառաւոր ներուած, որով ստանում ենք արքութիւն և մխիթարութիւն։ Նա է էական պարպարորինն, այսինքն գլխաւոր մասն շնորհակալութեան, որ Աստուած պահանջում է մեզանից մեր փրկութեան համար։ Երբ որ խնդրում ենք Աստուածանից այն ամենայն՝ ինչ որ մեզ հարկաւոր է, որանով մենք խոստովանում ենք, ո՛ր նա է մեր Աստուածն, մեր Բարերարն և մեր Հայրը։ Նրանից ունինք մեր կախումն. Նրանից ենք ստացել մեր ամենայն բանը. Նրան ենք սիրում իբրև Աղբիւր Բարութեան. Նրա վերայ է մեր փատահութիւնը. Նրա կատարելութիւններն ենք փառաւորում աղօթքով և մանաւանդ նրա ամենաբարութիւնը։

Աղօթքն է ճանապարհ Աստուածային շնորհքներն ստանալու։ Մարդս ունի անթիւ կարօտութիւններ, ինչպէս մարմնական, նոյնպէս և հոգեկան, այնպիսի կարօտութիւններ, որ մենք ինքներս չենք կարող բաւականացնել։ Սուրբ Գիրքը ուսուցանում է մեզ, որ միայն Աստուծոյ հոգին կարող է փոխել մեր սիրտը և զգացնել մեզ մեր մեղքը և շարժել մեզ դէպի թողութիւն և փրկութիւն։ Նա միայն կարող է տալ մեզ զօրութիւն ընդդիմանալ ամենայն փորձութեանց։ Նա միայն տալիս է մեզ զօրութիւն Աստուծոյ խօսքը հասկանալ և գործ դնել։ Նրա նախախնամութիւնն է, որ աճումն է տալի մեր օգտաւէտ գործքերին և հեռացնում է մեզ ամեն կորստական ճանապարհից։ Նա է ուղղում մեր ձեռքի գործքերը և յաջողում է մեր հոգացողութիւնները մեր կեանքը պահպանելու համար։ Աստուած միշտ պատրաստ է տալ այս ողորմութիւնները և խոստանում է տալ ամենին, որոնք զգում են այս ողորմութեան կարօտութիւնը և խնդրում են նրանից։ «Կարդասցես առ իս յաւուր նեղութեանդ. ես փրկեցից զքեզ և դու փառաւորեսցես զիս»։ Սաղմ. Խթ. գլ. 15 հմր։ «Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք. բաղխեցէք և բացցի ձեզ»։ Մատ. Է. գլ. 7 հմր։

Ուրեմն չը կամենալ աղօթք անել՝ նշանակում է չը կամենալ այն ամեն Աստուածային ողորմութիւնները, որոնք տուած են մեզ Յիսուս Քրիստոսով։ Նշանակում է մոռանալ, որ հարկաւոր են նրանք ինչպէս մարդուս հոգւոյն, նոյնպէս և մարմնոյն։ Առանց աղօթելու ևս մարդս կարող է մասնակից լինել այն ժամանակաւոր ողորմութեանը, որ Աստուած ափուում է առ հասարակ բարիների և չարերի վերայ. բայց կը զրկուի ամենից երեւելի և թանկագին ողորմութիւններից, այսինքն հոգևորից։

Աստուած սահմանեց աղօթքն ինչպէս Պայման իրանից ողորմութիւն ստանալու։ Ոչ թէ այն պատճառաւ, որ նա չէ խմանում մեր հարկաւորութիւնները և կարօտ է մեր խնդիրքներին, ո՛չ, այլ այն պատճառաւ սահմանեց, որ մենք ինքներս զգանք մեր հարկաւորութիւնը։ Ոչ թէ մեր խնդիրքով Աստուած փոխում է իրա միտքը աշխարհս կառավարելու

համար. ո՛չ թէ մեր աղօթքով Աստուած նոր է ընդունակ դառնում մեզ բարութիւն անելու և կամաւելացնում է իրան բարութիւնը, ո՛չ, այլ այն պատճառաւ սահմանեց աղօթքն ինչպէս պայման, որ մենք լաւ զգանք նրա ողորմութեան հարկաւորութիւնը և գործադրութիւնը։ Եթէ Աստուած միայն խնդրողներին է տալիս իրա հոգևոր ողորմութիւնները, այս չ'է նշանակում թէ պակաս է նրա բարութիւնը, կարողութիւնը և ճանաչողութիւնը, ոչ, այլ պատճառն այն է, որ խնդրողները միայն զգում են Աստուծոյ ողորմութեան հարկաւորութիւնը, ճանաչում են նրա շնորհաց գինը և ջերմեռանդութեամբ ցանկանում են ստանալ և գործ դնել։

Աղօթքն է մեզ համար փառաւոր էրաւունք։ Աղօթքով մենք իրաւունք ենք ստանում մօտենալ թագաւորին թագաւորաց, Արարչին ամենայն աշխարհի, խօսիլ նրա հետ, ինչպէս մեր Հօր և Բարերարի հետ։ Աղօթքն է մեզ համար Սքիսոնենան ճանապարհ, որ հեռացնում է աշխարհային բաներից և տանում է դէպի հոգեւոր բաներն։ Աղօթքով մենք ներկայանում ենք Աստուծոյն, տեսնում ենք նրա կատարելութիւնները, և ստանում ենք հեղութիւն, որ ամենայն առաքինութեանց հիմն է։ Աղօթքով մենք զգում ենք մեր ոչնչութիւնը Աստուծոյ առաջ և խմանում ենք մեր տակրութիւնը և անզօրութիւնը։ Աղօթքն է մեզ համար հնարք մխիթարութեան տանջանքի և չարչարանքի մէջ։ Նա է մեզ համար հանգստութիւն, ինչպէս ասում է Քրիստոս։ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։ Մատ. ԺԱ. գլ. 29 հմր։ Մէկ խօսքով՝ աղօթքն է միմիայն ճանապարհ, որով մարդս տակաւին աշխարհքումս կարող է մօտենալ Աստուծոյն։ Նա է Կրծիկ Դպրոցը և տուող գլխաւոր բարութեան։ Եթէ մարդուս աղօթքն անպտուղ է մնում, պատճառն այն է, որ մարդս չէ աղօթք անում այնպէս, ինչպէս հարկն է։ «Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք»։ Յակ. Դ. գլ. 3 հմր։

Ուրեմն՝ մեր աղօթքն արժանաւոր լինելու համար պէտք է ունենայ այն զգացողութիւնները և պայմանները, որոնք հարկաւոր են աղօթքին։

Աղօթքը պէտք է առուի առ Հայր, առ Որդին և առ Հոգին Սուրբ, այն պատճառաւ, որ Աստուած ունի ամեն հարկաւոր կատարելութիւններ և կարող է մեզ լսել։ Նա է յաւիտենական անսահման Հոգի, որ կարող է լինել ամեն ժամանակ, ամեն մարդու մօտ, ճանաչել ամեն հարկաւորութիւն և լսել ամենայն աղօթք։ Նա է ամենաքաջ, որ կարող է ունենալ դիտութիւն բոլոր մարդկանց վերայ։ Նա է ամենակարող, որ կարող է լցնել բաւականացնել մեր հարկաւորութիւնը թէ հոգեւոր՝ թէ մարմնաւոր։ Վերջապէս Նա է ամենիմաստ, որ ճանաչում է՝ թէ ի՞նչ է հարկաւոր ամեն մարդու, իմանում է ժամանակը և օգնութեան ձեւը։ Ուստի՝ Սուրբ Գիրքը հրամայում է ճանաչել մի Աստուած, Արարիչ երկնի և երկրի և նրան ծառայել։ «Ցեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես»։ Մատ. Դ. գլ. 10 հմբ։

Աղօթքը պէտք է լինի առ Քրիստոս, պատճառն որ՝ նա մէկ է ընդ Հօր Աստուծոյ և շատ օրինակ ենք տեսնում Աւետարանումը, որ աղօթքն առնում է առ Քրիստոս։ «Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս, որ կարդայր և ասէր, Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ»։ Գործ. Է. գլ. 58 հմբ։ «Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայրն»։ Յով. Ե. գլ. 23 հմբ։

Մեր աղօթքն առ Հայր պէտք է լինի Քրիստոսի անունով, այսինքն նրա արժանաւորութեամբ և միջնորդութեամբ, պատճառն որ նրանով ստացանք Աստուծոյ առատ ողորմութիւնը։ «Զի նովաւ ունիմք զնուաճումն երկոքին միով հոգւով առ Հայր»։ Եփես. Բ. գլ. 18 հմբ։ «Ասէ ցնա Յիսուս, ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք, ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինձ»։ Յով. ԺԴ. գլ. 6 հմբ։ «Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ տացէ ձեզ»։ Յով. ԺԶ. գլ. 23 հմբ։ Սրանով մենք յայտնում ենք մեր հաւատոց մեծ գործքը և Քրիստոսին տալիս ենք իրան արժան պաշտօնը և ցոյց ենք տալի մեր հեզութիւնը, որով և յայտնում ենք թէ մենք անարժան ենք Աստուծոյն մօտենալու և ինքներս ստանալու այն ա-

մենայն, ինչ որ խնդրում ենք նրանից։ Ուրեմն՝ այս աղօթքն Քրիստոսի անուամբ է առաջին դէպոց, որով Աստուած կը լսէ մեզ։

Աղօթքը պէտք է լինի բաբէ սրտով, որից և կախուած են բոլոր զգացողութիւնները և պէտք է լինի ոչ թէ հաբիպերոնիամբ և յանդգնութեամբ, այլ ազատութեամբ և սրտանութեամբ, որովհետեւ մենք կատարում ենք մէկ միջնարարական պարտաւորութիւն։ Աղօթքը պէտք է լինի սիրով, որովհետեւ մենք մօտենում ենք Հօր Աստուծոյ, որ սիրում է մեզ և մենք էլ պարտական ենք սիրել նրան ամեն բանից առաւել։ Աղօթքն պէտք է լինի ջերմեռանդութեամբ և ճշմարիտ ցանկութեամբ, որ ստանանք Աստուածանից մեր խնդրուածքները։ Այս տեսակ աղօթքը ընդդէմ է մարդկանց կեղծաւորութեանը և սուտ բարեպաշտութեանը, որոնք միայն շրթունքներով են պաշտում Աստուծոյն և չունեն ջերմեռանդութիւն առ Աստուած։ Երբոր աղօթում ենք, պէտք է մեր կողմից էլ աշխատենք գործ դնել այն միջոցները, որ Աստուած մեզ տալիս է, որպէս զի մեր գործքը և կեանքը համաձայն լինեն մեր աղօթքին։

Աղօթքն պէտք է լինի մեծ ուշադրութեամբ, պատճառն որ՝ մենք Աստուծոյ հետ ենք խօսում։ Աղօթքը պէտք է լինի հնազանդութեամբ և խոնարհութեամբ, ինչ վիճակում որ գտնուի մարդն։ «Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն, բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»։ Մատ. ԻԶ. գլ. 39 հմբ։ Աղօթքը պէտք է լինի պարզութեամբ և հնազանդութեամբ, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն. «Օրհնեցէ՛ք և սաղմոս ասացէ՛ք նմա, պատմեցէ՛ք զամենայն սքանչելիս նորա»։ Սաղ. ՃԳ. գլ. 2 հմբ։ Աղօթքը պէտք է լինի հաստատունութեամբ, այսինքն անկասկած հաւատալով, որ Աստուած չը նայելով մեր անարժանութեանը՝ անպատճառ կը լսէ մեզ Քրիստոսի սիրոյ համար, ինչպէս ինքն խոստացաւ Սուրբ Գրքումն։ «Ապա թէ ո՛ք 'ի ձէնջ խցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայն ամենայնի առատապէս և ո՛չ նախատէ և տացի նմա։ Բայց խնդրեսցէ հաւատովք և մի՛ երկմտեսցէ։ Յակ. Ա. գլ. 5—6 հմբ։ Այս

վստահութիւնը ընդդէմ չէ հնազանդութեան և խոնարհութեան, պատճառն որ՝ հիմնուած չէ մեր վերայ և մեր արժանաւորութեան վերայ, այլ Աստուծոյ բարութեան վերայ եւ նրա Որդւոյ արժանաւորութեան վերայ։

Վերջապէս աղօթքի ժամանակն պէտք է շարժուած լինինք ճշմարիտ սիրով առ Աստուած և առ մարդ և ցանկանք խնայութեան։ Առանց այս պայմաններին մենք չենք կարող այնպիսի բան խնդրել, որ փառք լինի Աստուծոյ, բարի ընկերին և հաճոյան մեր փրկութեանը։ «Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վերս և ասէ. Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ»։ Յով. ԺԱ. գլ. 14 հմր։

Աղօթքի նպատակը մարդուս կամքից չէ կախուած, պատճառն որ՝ մարդս կարող է մոլորուիլ զանազան ցանկութեանց մէջ, և խնդրել այնպիսի բան, որ անպատուութիւն լինի Աստուածութեան և վնաս մարդկային կոչման։ Աստուծոյ կամքը պէտք է ուղղիչ լինի մեր խնդիրքներին և ոչինչ բան չը պէտք է խնդրենք հակառակ նրա կամքին։ «Եւ այն է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ»։ Յով. Ա. Նը. Ե. գլ. 14 հմր։

Որովհետև մենք այս աշխարհումն ճանապարհորդ ենք, և բնակվում ենք առ ժամանակ և ոչ թէ յաւիտեան, և պէտք է մահով անցնենք այս աշխարհից միւս աշխարհն, որ տեղ սպասում է մեզ՝ երջանիկ կամ ապերջանիկ վիճակ մեր այս տեղ արած գործքերի համեմատ։ Ուստի մեր խնդրուածքի առաջին կարգումն պէտք է լինի այն ողորմութիւնը և շնորհքը, որից կախուած է մեր փրկութիւնը և երջանկութիւնը ապառնի կեանքումն, ինչպէս ուսուցանում է մեզ Քրիստոս. «Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ»։ Մատ. Զ. գլ. 33 հմր։ Իսկ միւս ողորմութիւնները, որոնք ներկայ կեանքին են պատկանում, պէտք է մեր խնդրուածքների երկրորդ կարգումն լինին և այն ևս չափաւորութեամբ։ Պէտք է խնդրենք Աստուծոյ հովանաւորութիւնը մեր կեանքի համար, պատճառն որ՝ շատ անգամ մենք չենք խմանում՝ թէ ի՞նչ է ամենից լաւն մեզ

համար։ Մեր հաւատը լուսաւորում է մեր միտքը և բարձրացնում է մեր հոգին դէպի անմահական բարութիւնները։ Աւետարանը պատուիրում է, որ մենք ճանապարհորդ ճանաչենք մեզ այս աշխարհումը։ Աստուծոյ խոստմունքները, որոնք միշտ հոգևոր են և հոգևոր բարութեան են վերաբերում, պարզ յայտնում են մեզ՝ թէ Աստուած ի՞նչ է կամենում, որ մենք նրանից խնդրենք։ Մեր փրկչի տուած աղօթքը գեղեցիկ օրինակ է մեզ համար՝ թէ ի՞նչ և ի՞նչպէս պէտք է լինի մեր աղօթքը։

Մարդս պէտք է կրկնէ իր աղօթքը, երբոր Աստուած չ'է կատարում նրա առաջին խնդրուածքը, մանաւանդ այն ժամանակ, երբոր նրա խնդրուածքները հոգևոր են։ «Յուսով խնդրեցէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք»։ Հռովմ. ԺԲ. գլ. 12 հմր։ Քրիստոս անիրաւ դատաւորի և բարեկամի առակներով երկու օրինակ տուաւ մեզ աղօթքն կրկնելու համար։ Ղուկ. ԺԱ. գլ. 5—11 հմր. Ղուկ. ԺԸ. գլ. 2—9 հմր։

Որովհետև աղօթքն է դէպ պարգևորութիւն և իրաւունք մեզ համար, այս պատճառաւ պէտք է լինի նա ամեն ժամանակ, ամեն պատահմունքի մէջ։ Անդադար մարդս պէտք է բարձրացնէ իրա սիրտն առ Աստուած, ինչպէս ասում է Պօղոս առաքեալն. «Անդադար աղօթս արարէք»։ Թեսալ. Ա. Նը. Ե. գլ. 17 հմր։ «Ամենայն աղօթիւք և խնդրուածովք աղօթս առնել ամենայն ժամանակի հոգւով և 'ի նոյն տքնեսջիք յամենայն ժուժկալութեամբ և խնդրուածովք»։ Եփես. Զ. գլ. 18 հմր։ Անդադար աղօթելը չ'է կարող լինիլ ձայնով, պատճառն որ՝ անդադար աղօթքն ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ շարժումն հոգւոյ առ Աստուած։ Անդադար աղօթելով՝ մարդ ցոյց է տալի իրա շնորհակալութիւնն Աստուծոյն և ընծայում է նրան իրա կեանքը և լինում է Աստուծոյ աչքի առաջ։ Սա է իսկ և ճշմարիտ աղօթքն առ Աստուած։

Մարդասիրութիւնը պահանջում է մեզանից աղօթք անել, ինչպէս մեզ համար, նոյնպէս և մեր ընկերների համար։ Սուրբ Գիրքը նոյնն ուսուցանում է մեզ։ Քրիստոս Տէրունական աղօթքումն պատուիրում է մեզ մէկ մէկու համար

աղօթք անել, նաև թշնամիների համար։ «Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ, որք լակեն զձեզ և հալածեն»։ Մատ. Ե. գլ. 44 հմտ։ «Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամենայն, առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան»։ Տիմոթ. Ա. նղ. Բ. գլ. 1 հմտ։

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հին ժամանակուան խմաստունները սովորութիւն ունէին իրանց աշակերտներին տալ մի քանի համառօտ խօսքեր, որոնց մէջ պարունակվում էին այն ամենահարկաւոր բաները, որ մարդս պէտք էր որոնէր այս աշխարհումս։ Այսպէս և Քրիստոսի աշակերտները խնդրեցին նրանից ուսուցանել իրանց աղօթք անել, ինչպէս Յովհաննէսն ուսուցել էր իր աշակերտներին։ Քրիստոս տուաւ նրանց այս կարճառօտ աղօթքն, որ անուանվում է ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ։ «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր, և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն»։

Բացի Տէրունական աղօթքը մարդս կարող է ունենալ և այլ աղօթքներ, իրա զանազան դրութեան համեմատ, ինչպէս տեսնում ենք Ս. Գրքի մէջ։ Բայց ամեն աղօթք պէտք է Տէրունական աղօթքի հոգւով լինի, նրա պէս կարճառօտ և պարզ։ Տէրունական աղօթքը գերազանց է ամեն աղօթքներից, որովհետև նա տուած է մեր Տէր Յիսուս Քրիստոսից, և ո՛չ մի աղօթք չենք կարող այնպէս վստահութեամբ ասել։

Տէրունական աղօթքը բաժանվում է երեք մասն — Յառաջաբան, Խնդրուածք և Վերջաբան։ Խնդրուածքներն բաժանվում են վեց։ Առաջին երեքն հոգևոր են, որոնք վերաբերում են Աստուծոյ փառքին, մարդուս գլխաւոր բարութեանը և հոգեւոր կեանքին. իսկ վերջին երեքն այն բաներին են վերաբերում, որոնք յատուկ մեզ հարկաւոր են մեր գլխաւոր բարութեանը հասնելու՝ այսինքն չափաւորութիւն աշխարհի վայելչութեանց մէջ, ներողութիւն ընկերին և ազատութիւն 'ի մեղաց։

Նպատակն ՅՈՒԱՋԱԲԱՆԻ, որ սկսվում է — Հայր մեր որ յերկինս ես, — է ծնանիլ մեր մէջ այն զգացողութիւններն, որով մեր աղօթքը հաճոյ լինի Աստուծոյ և մենք կարողանանք կատարեալ ջերմեռանդութեամբ մատուցանել Աստուծոյն մեր վեց խնդրուածքը։

Յիսուս Քրիստոս իրաւունք տուաւ Հայր անուանել Աստուծոյն, որ այս քաղցր անունով մեր աղօթքի սկզբումն ծնուի մեր մէջ որդիական պատիւ առ Հայր։ Որպէս զի՝ մենք ինչպէս որդիք սիրենք այն ամենայն, ինչ որ փառք է մեր երկնաւոր Հօր համար, հնազանդինք նրա կամքին և վստահութեամբ ապաւինենք միայն նրա օգնութեանը։

Այս որդիութիւնը մենք ստանում ենք հաւատով 'ի Յիսուս Քրիստոս։ Որովհետև առանց Քրիստոսի մենք համարձակութիւն չունինք Աստուծոյն Հայր անուանել, պատճառն որ՝ մեր մեղքով արժանացել ենք նրա բարկութեանը և արդար պատժին։ Հայր բառին աւելացնելով մեր՝ Քրիստոս պատուիրում է մեզ աղօթք անել ինչպէս մեզ համար, նոյնպէս և ամեն մարդու համար։ Կամենում է ծնանել մեր մէջ մարդասիրութեան և բարութեան զգացմունք, որ ուրիշների օգտի համար եւս այնպէս վառուած լինինք, ինչպէս մեր օգտի համար և մեր բաղդաւորութիւնը չը հիմնենք ուրիշների ապաբաղդութեան վերայ։

Քրիստոս՝ Հայր մեր ասելուց յետոյ, աւելացնում է որ յերկինս ես, ոչ թէ այն պատճառաւ որ Աստուած միայն երկնքումն է, ո՛չ, վասն զի Աստուած ամենուրեք է. այլ այն պատճառաւ, որ աշխարհքիցս խլէ և բարձրացնէ մեր

հոգին դէպի մեր երկնաւոր Հօր մեծութիւնը, փառքը և ամենակարողութիւնը, լցնէ մեր հոգին այնքան մեծ եւ բարձր պատուով, ինչքան մեծ և բարձր է երկինքը երկրից։ Երկնքումն ենք տեսնում Աստուծոյ մեծութեան եւ փառքի երեւելի նշանները, ինչպէս են երկնային լուսաւոր մարմինները, արեգակն, լուսին և աստեղք։ Երկնքումն ենք տեսնում հրեշտակներին և Աստուծոյ ճշմարիտ պաշտողներին փառաւորուած և պսակուած նրա սիրով։ Այս մտածութիւնն է, որ խլում է մեր սէրը և մեր միտքը աշխարհի կապակցութիւններից և վառում է մեր հոգին այն երկնային փառաւոր և անանց երջանկութեան եռանդով, որ պատրաստել է մեզ համար մեր երկնաւոր Հայրն։ ուստի և ասում ենք։ — Հայր մեր, որ յերկինս ես։

ԱՌԱՋԻՆ ԽՆԴՐՈՒԱԾՔՆ է — Սուրբ եղիցի անուն քո։ Անուն բառը երբեմն նշանակում է զբաղմունք, պատուիրան, հնազանդութիւն և Աստուածպաշտութիւն։ Այս նշանակութեամբ է գործածվում մկրտութեան ժամանակ։ Երբեմն նշանակում է հաստատութիւն առ Աստուած։ Այս նշանակութեամբ է ասում Դաւիթ Գողիաթին։ «Դու գաս 'ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ և ես գամ 'ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց ճակատուց Իսրայէլի»։ Ա. Թագ. ԺԷ. գլ. 45 հմտ։ Բայց ըստ մեծի մասին անուն բառն նշանակում է Աստուած և նրա կատարելութիւնները։ Այս միտքով է գործածվում շատ տեղ Սուրբ գրքի մէջ — Կոչել զանուն Տեառն։ Այս վերջին նշանակութեամբ է գործածվում և Տէրունական աղօթքի մէջ։

Սուրբ բառն երբեմն նշանակում է սուրբ առնել, ինչպէս ասում է։ «Հոգին սրբէ զմարդ»։ Երբեմն նշանակում է սուրբ պահել։ Այս միտքով է ասվում։ — «Սրբեսա զօր շաբաթուն»։ Երբեմն նշանակում է ճանաչել և պատուել ինչպէս սուրբ։ Խնդրել Աստուածանից, որ նրա անունը սուրբ լինի, նշանակում է խնդրել նրանից շնորհք ճանաչել նրան, ունենալ ճշմարիտ դատողութիւն նրա կատարելութեանց վերայ, փառաւորել նրան և ծառայել ինչպէս արժան է նրան, նորոգել մեր մէջ նրա պատկերը և նմանութիւնը և ընծայել նրան մեր հոգւոյ բոլոր զօրութիւնները։ Այնպէս որ նրա անունը անպատիւ չը լինի մեր պատճառաւ, այլ գովուի և փառաւորուի մեզանով և մեր կեանքով։ Այս խնդրուածքը պէտք է անենք մենք ինչպէս նրա փառքի և սիրոյ համար, նոյնպէս և մեր բոլոր ընկերների փրկութեան համար։ Եթէ մենք այս խնդրուածքը անում ենք ջերմեռանդութեամբ՝ պէտք է մեր կողմից ևս գործ ածենք Աստուծոյն ճանաչելու համար մեզ տուած բոլոր հնարքները, հնազանդ լինենք նրա խօսքին և նրա Սուրբ Հոգւոյ աղդեցութեանը, աշխատենք հաղորդել մարդկանց մեր լոյսը և մեր զգացողութիւնները, ոչ թէ միայն խօսքով, այլ և մեր բոլոր կեանքով։ Եթէ մենք սուրբ չենք պահել Աստուծոյ անունը, նա ինքն Սուրբ կը պահէ իր անունն զարհուրելի և ահալի ձեւով, այն է անհնազանդներին և խստասիրտներին պատժելով, ինչպէս պատժեց Փարաւոնին։ «Եւ վասն այնորիկ պահեցար, զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ և զի պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր»։ Եկ։ Թ. գլ. 16 հմտ։

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔՆ է — Եկեսցէ արքայութիւն քո։ Ասելով՝ Եկեսցէ արքայութիւն քո, չը պէտք է իմանանք Աստուծոյ արքայութիւնը կամ թագաւորութիւնը աշխարհի վերայ, որ կառավարվում է նրա նախախնամութեամբ։ Այս նախախնամութեան թագաւորութեան համար չէ կարելի ասել — Եկեսցէ արքայութիւն քո։ պատճառն որ՝ Աստուծոյ թագաւորութիւնը իր արարածների վերայ միշտ կայ և կատարեալ է՝ թէ ճանաչեն և հնազանդին նրան իրանց ազատութեամբ և թէ չը ճանաչեն։ Այլ ասելով՝ — Եկեսցէ արքայութիւն քո, պէտք է հասկանանք նրա քարոյական ներգործութիւնը, նրա ընդհանրի արքայութիւնը, որ Աստուած ունի իր ճշմարիտ պաշտողների վերայ Յիսուս Քրիստոսով և որ Աւետարանում անուանվում է Արքայութիւն Աստուծոյ, Արքայութիւն երկնից։

Այս արքայութիւնը սկսաւ Քրիստոնէական կրօնի հաստատութեամբ, երբոր մարդիկ լուսաւորուեցան Աւետարանով և հնազանդեցան Քրիստոսին, նրանով եկան դէպի ճանաչողութիւն և ծառայութիւն ճշմարիտ Աստուծոյն։ Այս

արքայութիւնը պահանջում է կամաւոր հնազանդութիւն, բաբեհաճ ապէ, և ոչ հպատակներից։ Բայց երկու արգելք կան, որ դժուարացնում են այս արքայութեան գալուստը և տարածումն։ Այս արգելքներն են — պիդիդուիւն մարդկան և ըրուիւն։ Ուստի՝ ասելով Եկեցէ արքայութիւն ի մեզ խնդրում ենք Աստուածանից, որ հեռացնէ այս արգելքները և աւելի մօտեցնէ մեզ Աւետարանի պարզ ճանաչողութեանը և տայ մեզ շնորհք հնազանդիլ նրան, որ թագաւորէ մեր սրտի վերայ սիրով, այնպէս որ՝ մենք դառնալով նրան հաւատարիմ՝ կարողանանք հանիլ փառաւոր անմահութեանը, ուր կանչում է նա մեզ իր Որդւով։

Եթէ մենք ջերմեռանդութեամբ ասում ենք այս խընդրուածքը՝ պէտք է աշխատենք հեռանալ ամեն բանից, որ կարող է դժուարացնել և ուշացնել Աստուծոյ թագաւորութեան գալուստն թէ մեր մէջ և թէ ուրիշների։ Եթէ ջերմեռանդ է մեր խնդրուածքը՝ մենք ջանք կանենք որ գործ դնենք ամեն հնարք, որ կարող է առաջացնել այս թագաւորութիւնը և կը պատուենք ամեն բանով մեր փրկչի Աւետարանը և նրա կամքը ասելով — Եղիցի կամք քո։

Ասելով՝ այս ԵՐՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ — Եղիցի կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի՝ — մենք խնդրում ենք Աստուածանից, որ տայ մեզ շնորհք ամեն բանով հնազանդիլ նրա կամքին, թէ չարչարանքով և թէ համբերութեամբ։ Խնդրում ենք Աստուածանից, որ տայ մեզ շնորհք հնազանդիլ նրան, պահել նրան պատուիրանքները եւ ընծայել նրան մեր կեանքը ամեն պատահմունքների մէջ։ Այս խոնարհութիւնը, որ երրորդ խնդրուածքի նիւթն է, պէտք է լինի ջերմեռանդ սրտով, ընդհանուր, հաստատ, լի ուրախութեամբ և ջերմեռանդութեամբ, ինչպէս ունին հրեշտակները Աստուծոյ համար երկնքումը, որոնց օրինակ է տալիս մեզ Քրիստոս Տէրունական աղօթքում ասելով՝ — որպէս յերկինս։

Հրեշտակների հնազանդութիւնը տուած է մեզ օրինակ, որ մենք հնազանդութեամբ աշխատենք նմանիլ նրանց կատարեալ հնազանդութեանը, որով կը հաստատուի մարդ-

կութեան մէջ կարգ, հաւատարմութիւն, երջանկութիւն և նրանով կը կարողանանք առնուլ այն մեծ երջանկութեան ճաշակը, որ Աստուած պատրաստել է իր կամքը կատարողների համար։ Այն ժամանակ մենք կարող ենք կատարել Աստուծոյ կամքը, երբոր կը հեռանանք մեր կամքից և միայն նրա կամքը կը ճանաչենք արդար, բարի, կատարեալ, այն բարի կամքը, որ տալիս է մեզ երջանկութիւն և սրա համար խնդրում ենք Աստուածանից լուսաւորել մեզ իրա դեղեցիկ պատուիրանքներով, որ մենք կարողանանք կատարելապէս հնազանդել նրան։

Քրիստոս՝ բարձրացնելով մեր միտքը և մեր հոգին դէպի մարդուս գլխաւոր երջանկութիւնն, որ է Աստուած, պատուիրում է մեզ խնդրել այն ամենայն, ինչ որ հարկաւոր է այս գլխաւոր երջանկութեանը հասնելու համար։ Եւ որովհետև՝ ոչ ինչ այնքան արգելք չէ, ինչքան աշխարհիս անչափաւոր հոգսերն և հոգին հարստութեան և վայելչութեան աշխարհի, այս պատճառաւ Քրիստոս այս արգելքները հեռացնելու համար պատուիրում է խնդրել Աստուածանից ամենօրեայ հաց՝ ասելով՝ — Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր — որ է ԶՈՐՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔ։

Այս խնդրած հացը բովանդակում է իրան մէջ այն ամենայն, ինչ որ հարկաւոր է մեր կեանքին ամեն դրութեան մէջ։ Քրիստոս սրանով ուսուցանում է մեզ, որ մենք չը պէտք է ցանկանանք և խնդրենք մեր պիտոյքից աւելի հարստութիւն։ «Այլ ունիմք կերակուր և հանդերձս՝ այնու շատացուք»։ Տիմոթ. Ա. թղ. Զ. գլ. 8 հմտ։ Աստուած տալիս է մեզ օրինաւոր ճանապարհով հարստութիւն, բայց մարդս չը պէտք է ինքն իրան հոգին մաշէ հարստութեան ցանկութեամբ։

Ասելով — Տո՛ւր մեզ — Քրիստոս մեր միտն է բերում սրանով, որ ամեն բարութեանց առաջին պատճառն Աստուած է։ Նա է տալիս մեզ ամեն բարութիւն, ինչ որ մենք ինքներս չենք կարող ստանալ, ոչ մեր հոգեալով, ոչ մեր աշխատանքով, առանց նրան, ինչ որ հարկաւոր է մեզ այս աշխարհումս կենալու կամ ապրելու համար։ «Եթէ ոչ Տէր

չինէ զտուն, 'ի նանիր վաստակին չինողք նորա։ Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք՝ ընդունայն տքնին պահապանք նորա»։ Սաղ. ՃԻԶ. գլ. 1—2 հմր։ «Ես տնկեցի, Ապողոս ջուր եւտ, այլ Աստուած աճեցոյց։ Այսուհետեւ ո՛չ այն ինչ ոք է, որ տնկեացն, և ոչ այն՝ որ ջուրն եւտ, այլ որ աճեցոյցն Աստուած»։ Կորն. Ա. ԻԸ Գ. գլ. 6—7 հմր։

Այս հոգը ոչ թէ միայն աղքատները և չքաւորները պէտք է խնդրեն, այլ և հարուստները, պատճառն որ՝ Աստուծոյ Նախախնամութիւնն է, որ տալիս է հարստութիւն և երբ կամենում է խլում է։ Նա է տալիս կեանք, առողջութիւն, որ ուրախանանք այս տուած կեանքով. խմաստութիւն, որ բարութեամբ անցկացնենք մեր կեանքը։ «Եւ ասէ ցնոսա, տեսէք և զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ո՛չ եթէ 'ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա»։ Ղուկ. ԺԲ. գլ. 15 հմր։

Որովհետեւ մարդուս կեանքը իրա կամքիցը չէ կախուած, ուրեմն՝ պէտք է որ Աստուած տայ առողջութիւն, հանդստութիւն և չափաւորութիւն, որ մենք կարողանանք ուրախ անցկացնել մեր կեանքը։ Մենք որ խնդրում ենք մեր հոգն Աստուածանից, չենք խնդրում, որ այս հացը մեզ տայ անընդմիջապէս հրաշքով կամ սքանչելի ձեւով, այլ խնդրում ենք, որ օրհնի նա իրա Նախախնամութեամբ ամեն մեր բնական և օրինաւոր ճանապարհները, որով կամենում ենք մենք պահել մեր կեանքը, ինչպէս են աշխատանք, կրթութիւն, հոգի ողբմութիւն և այլն։ Քրիստոս ասում է մեզ. «Տուք և տացի ձեզ. չափ բարւոք, թաթաղուն, շարժուն, զեղուն՝ տացին 'ի գոգս ձեր, նոյնին չափով, որով չափէք, չափեսցի ձեզ»։ Ղուկ. Զ. գլ. 38 հմր։

Ասելով զհաց Դր՝ կամենում է Քրիստոս մեզ պարզուսուցանել, որ այս հացը պէտք է լինի Դրը, այսինքն մեր օրինաւոր աշխատանքով, մեր ջանքով և մեր արդարութեամբ ճարած, առանց վնասելու և զրկելու ուրիշներին. ինչպէս ասում է Պողոս Առաքեալն՝ «Քանզի մինչ առ ձեզ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ո՛չն կամիցի գործել և կերիցէ մի։ Արդ՝ լսեմք զոմանց 'ի ձէնջ, թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ո՛չ գործեն, այլ յուլացեալ հեռաքրքիր շրջին, այնպիսեացն պատուէր տամք և աղաչեմք 'ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեացին և իւրեանց հաց կերիցեն»։ Թէսաղ. Բ. Գլ. Գ. գլ. 10—12 հմր։

Ասելով հաց հանապազորդ՝ Քրիստոս մեզ յայտնում է, որ ինչպէս օրական մշակը իր աշխատանքով ստանում է իւրան օրական վարձը, նոյնպէս և ամեն մարդ պէտք է խնդրէ Աստուածանից ամենօրեայ հաց և կստանայ, քանի որ Աստուծոյ ծառայութեան մէջ է։ Ինչպէս Եբրայեցիք անապատի մէջ ստանում էին ամեն օր մանանայ, որքան հարկաւոր էր ամեն տան կերակրուելու, այն չափաւորութեամբ պէտք է լինի մեր խնդրած հացն։ Միայն շաբաթ օրն Եբրայեցիք չէին հաւաքում մանանայ։ Մեր փրկիչն պատուիրելով՝ որ ամենօրեայ հաց խնդրենք, պատուիրում է միանգամայն, որ այս խնդրուածքով խմանանք որ ամեն օր կախումն ունենք Աստուածանից, ամեն օր պարտական ենք շնորհակալ լինել Նրա տուած ողորմութիւններից և շնորհներից։ Կամենում է մեր միտը բերել մեր կեանքի անբաստուգութիւնը, որ ո՛չ մէկ մարդ չէ կարող հաստատ յուսալ թէ կապրի արդեօք վաղուան օրն՝ թէ ոչ։ Կամենում է հեռացնել մեզ մեր այս կենաց ապագայ անչափաւոր հոգերից, որոնք 'ի զուր մաշում են մարդուս հոգին։ Արդարեւ՝ կան այլ եւ այլ հարկաւոր և օրինաւոր հոգսեր, որոնք հեռեւանք են մարդուս նախահոգութեանց, օրինակի համար. երկրագործը ցանում է, վաճառականը ապրանք է պատրաստում։ Այսպիսի հոգսերը օրինաւոր են, եթէ նրանք ունենան իրանց մէջ չափաւորութիւն և համաձայն լինին Աստուծոյ կամքին։ Այն հոգսերիցն է Քրիստոս մեզ զգուշացնում, որոնք վերաբերում են հեռու ժամանակների և ծնունդ են ագահութեան և աշխարհային վայելչասիրութեան եւ որոնց հասնելու համար գործ են դնում չար հնարքներ։ «Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վաղուին, զի վաղիւն վասն իւր հոգասցի, շատ է աւուրն չար իւր»։ Մատ. Զ. գլ. 34 հմր։

Մեր Փրկիչն ուսուցանելով մեզ այս խնդրուածքով, որ խնդրենք մեր կեանքի ամենահարկաւոր պիտոյքը՝ ուսուցանում է միանգամայն չափաւորութիւն և հեռանալ աշխարհային վայելչասիրութենէ։ Եւ երբոր մարդս հասնում է այս երջանիկ դրութեանը, որ ամեն բան Աստուածանից է սպասում և բաւական է համարում իրան, ինչ որ Աստուած օրուան մէջ տալիս է նրան, այն ժամանակ աղաւոութեամբ բարձրացնում է իրա սիրան առ Աստուած և ընծայում է նրան ասելով — Թող մեզ ղաւրդէ՝ մեր։

Ասելով — Թող՝ մեզ ղաւրդէ՝ մեր, որպէս ես մեր Խոսքոմ մերոց պարտապանաց — որ է ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔ, մենք խնդրում ենք Աստուածանից, որ մեզ չը պատժէ մեր մեղքին համեմատ։ Խոստովանում ենք մի և նոյն ժամանակ, որ մենք չ'ենք կարող մասնակից լինել նրա ողորմութեանը, եթէ չը թողնենք մեր պարտապանների պարտքը, որոնք մեզ նեղացրել են։ Ամեն մարդ պէտք է խնդրէ այս թողութիւնը Աստուածանից, որովհետև ամենքս մեղաւոր ենք Աստուծոյ առաջ։ Նա և Աստուծոյ որդիքներն, թէպէտ հաշտուել են և արդարացել Քրիստոսով, բայց նրանք էս պէտք է նոյնպէս խնդրեն թողութիւն, ոչ թէ միայն իրանց մեղքը միտքը բերելու, հեղութեան մէջ մնալու և ճանաչելու համար, որ իրանք փրկուած են Աստուծոյ ողորմութեամբ, այլ և այն պատճառաւ, որ նրանք էս ուրիշների պէս կարող են շատ անգամ մեղքի մէջ ընկնել։ Այս թողութիւնը ստանալու համար պէտք է խնդրենք Աստուծոյ օգնութիւնը Քրիստոսի անունով, ճշմարիտ հաւատով և ջերմեռանդն ապաշխարութեամբ։

Փրկիչը յատուկ մեզ ուսուցանում է այս աղօթքով, որ ինչպէս մենք կամենում ենք, որ Աստուած մեզ թողութիւն տայ, նոյնպէս և մենք պէտք է թողութիւն տանք ուրիշներին։ Այս պատուիրանքը արդար է, կատարելի և համայն է արդարութեան և սիրոյ։ Մենք աւելի պարտաւոր ենք միմեանց յանցանքն թողուլ քան թէ Աստուած մերը, որովհետև մեր անհնազանդութիւնը անթիւ է և աւելի մեծ Աստուծոյ առաջ, քան այլ մարդկանցը մեր առաջ և մանա-

ւանդ որ շատ անգամ մենք ինքներս ենք պատճառ ուրիշների յանցաւորութեանը։ Մեծ կուրութիւն է խնդրել Աստուածանից ողորմութիւն և թողութիւն մեր մեղքի համար և մի և նոյն ժամանակը անողորմ և խստասիրտ լինել մեր եղբայրների համար և չը թողուլ նրանց յանցանքն։ Քրիստոս այս գեղեցիկ առակով օրինակ է տալիս մեզ. «Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնուլ 'ի մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրեւ սկսաւ առնուլ՝ մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոց։ Իբրև ո՛չ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէր նորա զկին նորա և զորդիս նորա և զամենայն որ ինչ և ունիցի՝ և հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա՝ և ասէր. Երկայնամիտ լե՛ր առ իս և զամենայն հատուցից ձեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ և արձակեաց զնա։ Եւ ելեալ ծառայն և եդիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. և կալեալ զնա խեղդէր զնա և ասէր. Հատո՛ ինձ զոր պարտիս։ Արդ անկեալ ծառայակցին՝ առ ոտս նորա աղաչէր զնա և ասէր. Երկայնամիտ լե՛ր առ իս և հատուցից քեզ։ Եւ նա ո՛չ կամէր, այլ չոգաւ արկ զնա 'ի բանտ, մինչև հատուցցէ զպարտսն։ Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն տրտմեցան յոյժ և անկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ՝ Ծառայ չար, զամենայն զպարտսն թողի քեզ վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ՝ ո՞չ էր պարտ և քեզ՝ ողորմել ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցի։ Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահճին, մինչև հատուցցէ ձեզ զամենայն զպարտսն։ Նոյնպէս և Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում 'ի սրտէ ձեր զյանցանս նոցա»։ Մաթ. ԺԸ. գլ. 23—35 հմտ։

Այս առակը պարզ մեկնութիւն է հինգերորդ խնդրուածքին, որի մէջ ուրիշների մեղքը մեր առաջն է դրուած իբրև պարտք։ Ով որ այս աղօթքը կ'անէ առանց թողնելու

ուրիշների յանցանքը, նա ինքն իրան հակառակ է։ Որովհետև ասելով — Թող դեղ, մենք ոչ թէ միայն մեր անձնի համար ենք խնդրում, այլ և ամենի համար, որոնց մէջ են ուրեմն և մեր պարտապաններն։ Աստուած թողութիւն չ'է տալի այն մարդկանցը, որոնք իրանց եղբայրների յանցանքը չ'են թողնում։ Ասելով այս աղօթքը մենք ոչ թէ միայն պարտաւորվում ենք թողութիւն տալ ուրիշներին, այլ և պարտաւորվում ենք այնքան անգամ թողութիւն տալ, ինչքան անգամ կամենում ենք, որ Աստուած թողութիւն տայ մեր յանցանքին։ Որովհետև մենք ցանկանում ենք, որ Աստուած ներէ մեր բոլոր մեղքերը և յանցանքները։ Ուրեմն՝ մենք ևս պէտք է ծածկենք մեր սիրով ուրիշների մեղքը և յանցանքը։ Պէտք է ներենք մինչև ցեօթանասնեկին եօթն անգամ, այսինքն անթիւ, ինչպէս ասում է Քրիստոս։ «Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ։ Տէ՛ր, քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ և թողից նմա, մինչև ցեօթն անգամ։ Ասէ ցնա Յիսուս, ոչ ասեմ քեզ թէ մինչև ցեօթն անգամ. այլ մինչև ցեօթանասնեկին եօթն անգամ»։ Մատ. ԺԸ. գլ. 21—22 հմր։

Ինչպէս կամենում ենք, որ Աստուած թողութիւն տայ մեզ կատարելապէս, ոչ թէ միայն պատժից ազատելով այլ և կրկին տալով մեզ իր ողորմութիւնը և սէրը, նոյնպէս և ամենայն Քրիստոնեայ պէտք է թողնի իրա պարտապանի յանցանքը և կրկին սիրէ նրան և սրանով կատարէ իրա մարդասիրութեան պարտքը։

Վեցերորդ խնդրուածքն է — Եւ մի՛ դիր զմեզ 'ի փորձութիւն, այլ ազատի՛ զմեզ 'ի չարէ —։ Ասելով — Մի՛ դիր զմեզ 'ի փորձութիւն — պէտք է խնդանք, որ կայ երկու տեսակ փորձութիւն։ Մի փորձութիւնը տալիս է մեզ Աստուած, որ երեւցնէ մեր սէրը, մեր հաւատը և մեր համբերութիւնը այլ մարդկանց։ Այս փորձութեամբ փորձվում էին առաքինի և աստուածապաշտ մարդիկը, որ նրանց հաւատը, սէրը և համբերութիւնը օրինակ դառնայ ուրիշներին։ Այսպէս փորձուեցաւ Աբրահամ և անուանեցաւ Հայր հաւատոյ։ Այսպէս փորձուեցաւ Յովսէփ և օրինակ դարձաւ Ողջախոհութեան։ Այսպէս փորձուեցաւ Յովբ և անուանեցաւ Հայր համբերութեան։ Իսկ միւս փորձութիւնն է բոլորովին հակառակ Աստուծոյ կամքին և տանում է դէպի մեղքը։ Առաջին փորձութիւնը գալիս է մեզ Աստուածանից, որ կամենում է փորձել մեր խոնարհութիւնը, մեր հաւատը, մեր սէրը և մեր համբերութիւնը, երբեմն բաղդաւորութեան մէջ, երբեմն ապաբաղդութեան մէջ, երբեմն զանազան պատահմունքների մէջ և երբեմն կանչելով մեզ, որ մենք մեր անձնազոհութեամբ կատարենք մեր մեծ պարտաւորութիւնն առ Աստուած և առ մարդ։ Վերջապէս Աստուած տալով մարդոյն անձնիշխանութիւն՝ համբերում է և այն փորձութեանց, որ յառաջ են գալիս, ոչ թէ Աստուծոյ կամքից, այլ մեր անձնիշխանութեան չարաչար գործածութիւնէն և մեր փրկութեան թշնամուց — սատանայից։ Ինչպէս ասում է Յակոբոս Առաքեալն։ «Իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոյն ցանկութեանց ձգեալ և պատրեալ»։ Յակ. Ա. գլ. 14 հմր։

Թէպէտ մենք ասում ենք — Մի՛ դիր զմեզ 'ի փորձութիւն — բայց սրանով չը պէտք է հասկանանք, թէ Աստուած է տանող դէպի մեղքը կամ փորձութիւնը։ «Մի՛ ոք որ 'ի փորձութեան ասիցէ, ասիցէ, թէ յԱստուծոյ փորձիմ, զի Աստուած անփորձ է չարաց, փորձէ նա՝ և ոչ ոք»։ Յակ. Ա. գլ. 13 հմր։ Ընդհակառակն՝ Աստուած միշտ կամենում է հեռացնել մեզ փորձութենէ խղճմտանքի ձայնով և իրա սուրբ պատուիրանքներով։ Մի՛ դիր զմեզ 'ի փորձութիւն ասելով՝ պէտք է հասկանանք այնպէս, ինչպէս արժան է Աստուծոյ բնութեանը և նրա կամացը, որ միշտ սուրբ է, բարի է և արդար է առ մարդն։ Աստուծոյ համբերութիւնը, Աստուծոյ մատնելն մարդուն իր անձնիշխան կամքին և մարդու անձնիշխանութեան չարաչար գործածութիւնը Սուրբ Գրքի մէջ տեղ տեղ ասվում է — Խոտացոյց Աստուած, մատնեաց Աստուած եւայլն։ «Եւ խստացոյց Տէր զսիրտն Փարաւոնի և ո՛չ լուաւ նոցա, որպէս և ասաց Տէր ցՄովսէս»։ Եկեց. Թ. գլ. 12 հմր։ «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ, մի՛ւտ առ Փարաւոն, զի ես խստացուցի զսիրտ նորա և զը

սիրա ծառայից նորա, զի կարդաւ եկեսցեն նշանքս 'ի վերայ նորա ։ Եկեղ. Ժ. գլ. 1 հմր։ Այս խօսքերով մենք պէտք է իմանանք, որ Աստուած համբերում է այս աշխարհում այն խաղութեանը և թշնամութեանը, որ մարդս անում է նրա դէմ։

Սակայն — Մի՛ դանիր ընդ 'ի քոյնոնիսն — չենք խնդրում, որ փորձանքի մէջ չը լինինք, որովհետև ստեղծուած ենք ազատ և անձնիշխան և կոչուած ենք բարին չարից ընտրելու՝ այս փորձութեամբ լինքն աշխարհքում։ Չենք խնդրում, որ Աստուած հանէ մեզ փորձութենէ և յաղթող շինէ մեզ փորձութեանց վերայ՝ ետանց մեր գործակցութեան և առանց մեր աշխատութեան, պատճառն որ՝ Աստուած լինքն կամենում է, որ մենք գործակից լինինք նրան։ «Զի Աստուծոյ գործակից եմք», ասում է Պօղոս Առաքեալն։ Կորն. Գ. գլ. 9 հմր։ Այլ խնդրում ենք Աստուածանից, որ յաճախ չը տայ մեզ փորձութիւններ և մեր կարողութենէն 'ի վեր։ Եւ եթէ կամենում է տալ այնպիսի փորձանքներ, չը թողնէ մեզ մեր տկարութեան յուսով, այլ տայ ողորմութիւն և շնորհք, որ կարողանանք տանել այն փորձանքները և նրանով փառաւորուի Աստուծոյ անունը և մենք արժանանանք նրա փրկութեանը։ Այս յուսացած ողորմութիւնը կ'ստանանք Աստուածանից, եթէ մենք խնդրենք բարի և հաւատարիմ սրտով. ինչպէս ասում է Պօղոս Առաքեալն։ «Փորձութիւն 'ի ձեր վերայ ոչ է եկեալ՝ բայց 'ի մարդկանէ, այլ հաւատարիմ է Աստուած, որ ո՛չ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեանն և զելքն, զի համբերել կարասջիք»։ Կորն. Ա. Ընդ. Ժ. գլ. 13 հմր։

Այսպէս ուրեմն՝ մեր փորձութեան մէջ մեր յոյսն Աստուծոյ վերայ դնելով՝ աւելացնում ենք — Այլ ազատեա՛ զմեզ 'ի չարէ — այսինքն այն չար հոգուցը, որ փորձելով տանում է մեզ դէպի չարութիւն։ Խնդրում ենք Աստուածանից, որ հանէ մեզ մեղքի իշխանութենէն, որ Սուրբ Գրքի մէջ անուանվում է զբոնիսն սատանայի. միշտ ազատէ մեզ մեր փրկութեան թշնամուց, երբոր մենք մեր ապաքաղդուս

թեամբ կ'ընկնենք նրա որոգայթի մէջ։ Խնդրում ենք որ Աստուած տայ մեզ կեանք և զօրութիւն ազատուիլ մեր մեղքից և դառնալ նրա հաւատարիմ պաշտօնեայ, ինչպէս պարտական ենք։

Այս խնդրուածքը — Այլ ազատեա՛ զմեզ 'ի չարէ — առաջին խնդրուածքի հետեւանքն է։ Եթէ մենք չենք խնդրել ազատուիլ և փրկուիլ այս թշնամու ձեռքից, նշանակում է որ ջերմեռանդութեամբ չենք խնդրել մեղքի թողութիւն և տակաւին մնում ենք անզղջ մեր չարութեան մէջ։ Անպատուղ է թողութիւն խնդրելն՝ եթէ մենք չենք հեռանում չարութենէ և չենք մնաենում առաքինութեան։

Ուրեմն՝ զգալով մեր տկարութիւնը և թերութիւնը, որով փորձվում ենք մեր չորս կողմն պատած թշնամիներից, աշխարհի որդիքներից, մենք չենք կարող դիմանալ, եթէ Աստուած մեզ հետ չը լինի. բայց եթէ Աստուած մեզ հետ է, ո՞վ է մեզ հակառակ։

Աստուած է, որ ներգործութիւն ունի բոլոր բնութեան վերայ։ Նա է, որ ներգործում է մեր հոգւոյ եւ սրտի վերայ առանց խլելու մեր ազատութիւնը։ Երբոր աղօթում ենք Աստուծոյն՝ պէտք է խոհեմ և արթուն լինինք փորձութիւնը ճանաչելու և նրանից հեռանալու։ Պէտք է գործ դնենք Աստուծոյ տուած ամեն օգնութիւնները եւ հնարքները և այնպէս շարժուինք մեր փրկութեան ճանապարհի վերայ, որ ոչ թէ միայն Աստուած լինի պատճառ մեր փրկութեան իր օգնութեամբ, այլ և մենք՝ մեր աշխատութեամբ գործակից լինելով Աստուծոյն։ Այսպէս է պատուիրում մեզ մեր Փրկիչն ասելով՝ «Արթուն կացէք և աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք 'ի փորձութիւն»։ Մատ. ԻԶ. գլ. 41 հմր։ Եթէ մենք ջերմեռանդութեամբ ենք խնդրում Աստուածանից, որ փրկէ մեզ և մեր ընկերին չարիցը՝ պէտք է ուրեմն աշխատենք հեռացնել, ինչպէս մեզանից, նոյնպէս և մեր ընկերներից փորձութեան ամեն պատճառները, որ ոչ մենք ընկնենք փորձութեան մէջ և ոչ նրանց համար կորստեան պատճառ դառնանք, փորձելով նրանց մեր չար ցանկութեամբ։

Տէրունական աղօթքը վերջանում է այս խօսքերով — Զի
ւն է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։
Այս ՎԵՐՋԱԲԱՆԸ մեզ յայտնում է թէ ինչո՞ւ համար և ի՞նչ
պատճառաւ ենք աղօթք անում Աստուծոյն և ինչո՞ւ ենք
ասում այս աղօթքը պարտուվ, հեզութեամբ, հաւատարմութեամբ։
Ո՞ւմ կարող է ուղղել մարդ իր աղօթքն և ումից կարող է
սպասել փրկութիւն և երջանկութիւն, եթէ ոչ այն ամե-
նակարող Էակից, որ բոլոր տիեզերքի թագաւորն է, որ
միայն ունի փառք և իշխանութիւն և որի թագաւորութիւնը
յաւիտենական է։ Միայն նրա ողորմութիւնը պէտք է որս-
նենք աշխարհումս յաւիտեան յաւիտենից։

Այս երկու յաւիտեանները նշանակում են Աստուծոյ ամե-
նակարողութիւնն աշխարհքիս վերայ։ Մէկ յաւիտեանը նշա-
նակում է աշխարհիս ստեղծուելուց առաջ, իսկ դէռ աշ-
խարհի և ժամանակի ստեղծուելուց յետոյ, այսինքն երկ-
րորդ Գալուստը։ Այսպէս ուրեմն՝ աշխարհի մէկ ծայրից
մինչև միւս ծայրը Աստուծոյն է պատկանում Աբրայոմենն
եւ Զօրոմենն եւ Փառք։

Իսկ բառս ամէն նշանակում է ճշմարիտ կամ Իսկապէս, եր-
բոր դնվում է նախադասութեան մէջ աղաչումն կամ սկզբ-
ումն։ Բայց եթէ վերջումն է դնվում, ինչպէս և Տէրու-
նական աղօթքումն, նշանակում է կատարեալ հաւատարմութեան,
որ կը լսէ Աստուած մեր խնդրուածքը, կը կատարէ մեր
ցանկութիւնը և ամենայն ինչ կը դարձնէ 'ի փառս իւր։

Այս Տէրունական աղօթքը մեծ է և ճշմարիտ Աստուա-
ծային աղօթք, որովհետև իրան մէջ բովանդակում է մի
քանի խօսքերով պարզ խնդրուածքներ, որոնք վերա-
բերում են ամենահարկաւոր շնորհքներին։ Այս խընդ-
րուածքների կարգը և չափը տալիս է մեզ ճշմարիտ ճա-
նաչողութիւն և ուսուցանում է որոնել և խնդրել առաւել
այն՝ ինչ որ վերաբերում է Աստուծոյ փառքին և մեր
հոգւոյ փրկութեանը։ Այս Տէրունական աղօթքը կարճ
յայտնում է մեզ։ թէ ի՞նչ պէտք է խնդրենք Աստուա-
ծանից և ի՞նչ զգացողութիւն պէտք է ունենանք աղօ-
թելու ժամանակ։

Այս աղօթքի զանազան մասները մեր աչքի առաջ
ներկայացնում են հաւատոյ մեծ պատուիրանքները և
կնքում են նրա ներգործութիւնը։ Մեր միտն են բերում
Քրիստոնէի գլխաւոր պարտաւորութիւնը — Սէր առ Աստ-
ուած եւ առ ընկեր — և տալիս են կեանքի գեղեցիկ կանոն։

Եթէ մենք ջերմեռանդութեամբ ենք ասում այս Տէ-
րունական Աղօթքը՝ պէտք է ուրեմն մեր կեանքն էլ վա-
րենք մեր խնդրուածքների համաձայն։

ՎԵՐՋ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՑ

Գին 1 ռուբլի կամ 14½ ղրշ.

Կը ծախուի Ծիլն Աւարայրի Հանդիսի խմբագրատանը, Կ.-Պոլիս Մահմուտ փաշա Ս. Նորատունկեանի խանը, վերնայարկ թիւ 5.

ՅԻՆՃԱՆՃԱԼԱՐ ԵՎԳՈՒՇՈՒ, ԹԻՒ 19

3352-3357

<< Ազգային գրադարան
NL0030496

<< Ազգային գրադարան
NL0030495

<< Ազգային գրադարան
NL0030494

<< Ազգային գրադարան
NL0030493

<< Ազգային գրադարան
NL0030492

<< Ազգային գրադարան
NL0030491